2037
9-61
832

R 200 L

11532
2012
2010
3969
38888

ԳԻՐՔ

ՍԿԱՄՄԱՆԱՑ ԴԱՒԹԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳՔՈՐԳԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ

Տ. Տ. ՊՕՂՈՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՌՑԺԷ

ՏՊԱԳՐԵԱԼ

ՅԱՒԱՆԱԲԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

—1868—

ԱԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ-ՍՍՀ

ՅՆԾԱՅՔ արդարք ՚ի Տէր. ուղղոց վայելէ օրհնութիւն. խոստովան եղէրուք տեառն օրհնութեամբ, ասանաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասասյէք նմա։

ԳԻՐՔ
ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱՒԹԻ

ՍԱՂՄՈՍ Ա.

Երանեալ է այր որ ոչ գնաց
՚ի խորհուրդս ամպարշտաց.
՚ի ճանապարհի մեղաւորաց նա
ոչ եկաց, և յաթոռս ժանտից
նա ոչ նստաւ։
Այլ յօրէնս տեառն են կամք նո-
րա, և յօրէնս նորա խորհեսցի
նա ՚ի տուէ և ՚ի գիշերի. և եղի-
ցի նա որպէս ծառ որ տնկեալ է
՚ի գնացս ջուրց։
Որ զպտուղ իւր ՚ի ժամու տացէ,
և տերեւ նորա մի՛ թափեսցի, և

զամենայն զոր ինչ արասցէ յա-
ջողեսցի նմա։

Ոչ այսպէս են ամպարիշտք և ոչ
այսպէս, այլ որպէս հող զի փոշի
զի հոսէ ի վերայ երեսաց երկրի։
Վասն այսորիկ ոչ յարիցեն ամ-
պարիշտք ի դատաստան, և ոչ
մեղաւորք ի խորհուրդս արդա-
րոց։

Ջանզի ճանաչէ տէր զճանա-
պարհս արդարոց. ճանապարհք
ամպարշտաց կորիցեն։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ Բ.

Ի հերքեալեաց-ոյն երիտքին աստ քեզ դի համար էն։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք,
և ժողովուրդք խորհեցան սնո-
տիս։

Յանդիման եղեն թագաւորք
երկրի, և իշխանք ժողովեցան ի
միասին վասն տեառն և վասն
օծելոյ նորա։

Խզեսցուք զկապանս նոցա, և ընկ-
կեսցուք ի մէնջ զլուծ նոցա։

Բնակեալն յերկինս ծիծաղեսցի
զնոքօք, և տէր արհամարհեսցէ
զնոսա։

Յայնժամ խօսեսցի ընդ նոսա
բարկութեամբ իւրով, և սըրտ-
մութեամբ իւրով խռովեցուս-
ցէ զնոսա։

Ես կացի թագաւոր ի նմանէ, ի
վերայ սիօնի լերին սրբոյ նորա,
պատմել հնձ զհրամանս տեառն։
Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու,
ես այսօր ծնայ զքեզ։

Խնդրեա յինէն և տացէ քեզ զհե-
թանոսս ի ժառանգութիւն, և
իշխանութիւն քեզ զամենայն
ծագս երկրի։

Հովուեսցես զնոսա գաւազա-

Խաղաւմբ առէին զանձնե իմեն,
Տէր պի բաղում եղիցեն նեպիջք իմ, բաղաւմբ մեջ յարեան ինձ։
Աղաղմոս գ։
Տուն ժդ։
Ա՛ր ինչ ուրախ լինիս, ով հոգի իմ, և ինչ խռովիս ի վերայ իս։
Յոյս ունիմ ի Տէր, և խոստովանիմ նմա։
Ես ասեմ, թէ

ՍԱՂՄՈՍ Դ.

Ի կոպրած օրհնութեան. Սաղմոս երգոյ ի Դաւիթ։

Ի կարծել իմում լուար ինձ ասացեալ ընդ արդարութեան. ի նեղութեանէ ինձ անդորրս արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոյ։

Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զբնութիւն, և խնդրէք զստութիւն։

Գիտացէք զի սքանչելիս արար տէր սրբոյ իւրում. և տէր լսէ զաղօթս իմ։ և տէր լսէ զիս ի կարծել իմում ամենայն։

Բարկանայք և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր յանկողինս ձեր զղջացարուք։

Ատուցէք պատարագ արդարութեան, և յուսացարուք ի տէր։

Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ

մեզ զբարութիւն. նշանեցաւ ամ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մեծոց։

Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեացուք և զարթիցուք. զի դու ոչ միայն առանձին յուսով բնակեցուցեր զմեզ։

Տուղք ը։

ՍԱՂՄՈՍ Ե.

Ի կոպրած վասն վիճակեցան. Սաղմոս ի Դաւիթ։

Բանից իմոց ունկն դիր տէր, և ի միտ առ զաղաղակ իմ։

Լայեա ի ձայն աղօթից իմոց, թագաւոր իմ և աստուած իմ։

Զի քեզ աղաչեմ տէր, ընդ առաւօտս լսիցես ձայնի իմում. ընդ առաւօտս պատրաստ եղէց և տեսցեմ։

Զի ոչ Աստուած որ կամիս զանօրէնութիւն դու ես։

Ոչ լմե դու առատաձ կամիս զա-
նօրէնութիւն, ոչ բնակեն առ
քեզ չարք. մի՛ անօրէնք բնակեա-
ցեն առաջի աչաց քոց։
Ատեցեր զամենայն գործս զան-
օրէնութիւն. կորուսանես
զամենեսեան զբաղ խօսին սուտ։
Օ՛այր արիւնահեղ և զնենգա-
ւոր պիղծ առնեաս դու տէր. այլ
ես քառ բազում ողորմութեան
քում մտից ի տուն քո, երկիր-
պագից ի տաճար սուրբ քո ե-
կից քո։
Տէր առաջնորդեա ինձ յարդա-
րութեան քում. վասն թշնա-
մեաց իմոց ուղիղ արա առաջի
իմ զճանապարհս քո։
Ոչ գոյ ի բերանն նոցա ճշմար-
տութիւն, և սիրտք նոցա նան-
րեալք են։
Որպէս պերեզման բաց են կո-

կորդք նոցա. լեզուօք իւրեանց
նենգաւորք եղեն։
Դատեա զնոսա աստուած՝ զի
անկցին ի խորհրդոց իւրեանց.
բազում բազում ամպարշտու-
թեան նոցա՝ մերժեա զնոսա զի դա-
տապարտին զքեզ։
Ուրախ լիցին ամենեքեան որ
յուսացեալ են ի քեզ. յաւիտեան
ցնծացեն, և բնակեսցես դու
ի նոսա։
Պարծեսցին ի քեզ սիրելիք ան-
ուան քո, զի օրհնեսցես դու զար-
դարն. տէր որպէս զինու հա-
ճութեամբ քո պսակեցեր զմեզ։

Տաւնք ժբ.

ՍԱՂՄՈՍ Զ.

Ի հատուած ընդ օրհնութիւն վասն ողբերգութ. Սաղմոս ի Դաւիթ։

Տէր, մի՛ սրտմտութեամբ քում
յանդիմաներ զիս և մի՛ բարկու-

թեամբ քով խրատեր զիս։
Ողորմեա ինձ տէր զի հիւանդ
եմ ես. բժշկեա զանձն իմ զի
խռովեցան ոսկերք իմ։
Ընձեն իմ յոյժ խռովեցաւ, և դու
տէր մինչեւ յե՞րբ։
Դարձ տէր և փրկեա զանձն իմ.
կեցո զիս տէր քան ողորմու-
թեան քումմ։
Զի ոչ ոք է որ ի մահու յիշէ զք-
քեզ, կամ ի դժոխս որ խոստո-
վան առնի առ քեզ։
Վաստակեցի ես ի հեծութեան
իմում. լուացի զամենայն գիշեր
զմահիճս իմ, և արտասուօք ի-
մովք զանկողինս իմ թացի։
Խռովեցաւ ի սրտմտութենէ ա-
կն իմ, մաշեցայ ես ի վերայ ա-
մենայն թշնամեաց իմոց։
Իբաց կացէք յինէն ամենեքեան,
զի գործէք զանօրէնութիւն։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լու-
աւ տէր աղօթից իմոց. և տէր
զինդրութիւնս իմ ընկալաւ։
Ընդհաչեսցեն և խռովեսցին յոյժ
ամենայն թշնամիք իմ. դարձցին
յետս և ամաչեսցեն յոյժ վատվա-
ղակի և խռովեսցին։

Տումք ժ։ Գոբղայս Լ։

ՍԱՂՄՈՍ Ե։

Սաղմոս ի Դաւիթ. ընդ առաջ Տէրունական բանին Քրոնիայ որդւոյ
Յեմինայ։

Տէր աստուած իմ ի քեզ յու-
սացայ, փրկեա զիս, յամենայն
հալածչաց իմոց ապրեցո զիս։
Զուցէ երբէք յափշտակիցէ որ-
պէս առիւծ զանձն իմ. ոչ ոք իցէ
որ փրկիցէ, և ոչ այն որ ապրե-
ցուցանիցէ։
Տէր աստուած իմ թէ արարի
զայս, թէ իցեն անօրէնութիւնք
ի ձեռս իմ։

Թէ հաստատի երբէք այնպիսի որ հաստատին ինձ չար, անկեալց և ես ի թշնամեաց իմոց ընդունայն։ Ալածեսցէ ապա թշնամին զանձն իմ, հասցէ կոխեսցէ յերկիր զկեանս իմ, և զփառս իմ ի հող բնակեցուսցէ։

Ասի տէր բարկու թեամբ քում, և բարձրըեր ի սպառել թշնամեաց իմոց։

Զարթիր տէր աստուած իմ ի հրամանս զոր պատուիրեցեր, և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեզ։

Վասն այսորիկ ի բարձունս դարձ տէր. և տէր դատի զժողովուրդս իբա։

Դատ արա ինձ տէր ըստ արդարութեան իմում, ըստ անբծութեան իմում որ յիս։

Կատարեսցին չարիք ի վերայ մեղ-

ղաւորաց, և յուղղեսցես դու արդարոյն։

Ո՛ք քննէ զսիրտս և զերիկամունս աստուած արդար. յիրաւի է օգնութիւն ինձ յաստուծոյ՝ որ ապրեցուցանէ զայնոսիկ որ ուղիղ են սրտիւք։

Աստուած դատաւոր արդար հզօր և երկայնամիտ. որ ոչ ածէ բարկութիւն իւր զօրհանապազ։

Ոչ թէ ոչ դառնայք առնու, բաւ սուր իւր արեալ է՝ և զաղեղն իւր լարեալ, և ետնամ պատրաստեալ է զանօթս մահու, և զինեաս իւր պատրեցեալք է պործեալ։

Ահաւասիկ երկնեաց զանօրէնութիւն. յղացաւ զցաւս, և ծնաւ զանօրէնութիւն։

Փոսըն զոր փորեաց և պեղեաց, ինոյն անկցի ի խորխորատս զոր և պործեաց։

3969 1009 38868

ՀՍՍՀ-ԿԳՄ Պետ. Ընդ. Գրադարան Մ. Մաշտոց

Դարձցին ցաւք ի գլուխ նորա.
ի վերայ գազաթան նորա անօրէ-
նութիւնք իւր իջցեն։
Խոտոված եղէց տեառն բատ աւր-
դարու թեան նորա, սաղմոս ա-
սացից անուան տեառն բարձրե-
ցեայ։

Տունք ԺԸ։

ՍԱՂՄՈՍ Ը.

Ի հպարտ ի վերայ հնչանացն. Սաղմոս ի Դաւիթ։

Տէր տէր մեր, զի սքանչելի է ա-
նուն քոյ ամենայն երկրի։
Զամբարձաւ մեծ վայելչութիւն
քո ի վերոյ քան զերկինս. ի բե-
րա-
նոց մանկանց տղայոց սարկեցեր
հաստատութիւն օրհնութիւն։
Վասն թշնամեաց քոց տէր. զի
եղծցի թշնամին և հակառակորդ
դէն։
Տեսից զերկինս զգործս մատանց
քոց, զլուսին և զաստեղս զորս

դու հաստատեցեր։
Ով է մարդ զի յիշես դու զնա,
կամ որդի մարդոյ՝ թէ այց հինչ ա-
րասցես դու նմա։
Փոքր հինչ խոնարհ արարեր զնա
քան զհրեշտակս քո. փառօք և
պատուով պսակեցեր զնա, և կա-
ցուցեր զնա ի վերոյ սահմանացն ձե-
ռակերտոց քոց։
Օսահմանցն հինչ հնազանդ ար-
րեր ի ներքոյ ոտից նորա, զխաշն
և զարջառս և զամենայն հինչ։
Եւս և զերիս վայրի, զթռչունս
երկնից, զձկունս ծովու, որ շր-
ջին ընդ շաւիղս ծովու։
Տէր տէր մեր, զի սքանչելի է ա-
նուն քո յամենայն երկրի։

Տունք ԻՅ։ Խաբազար Խ։

ՍԱՂՄՈՍ Թ.

Ի կոպարած վասն գաղթնեայ ողբոյ. Սաղմոս ի Դաւիթ։

Ղ Ո հայցէից զքէն ատէր բ ողորմիլ
արտիւ խնդալ. պատմեցից զամե-
նայն սքանչելիս քո։
Ուրախ եղէց և ցնծայցից ՚ի քէզ.
սաղմոս ասացից անուանդ տեառ-
նէդ բարձրեալ։
Ի դառնալ թշնամեաց իմոց,
տկարացին և կորիցեն յերեսաց
քոց։
Արարեր զդատաստանս իմ և զի-
րաւունս. նստար յաթոռ դատա-
ւոր արդարութեան։
Սաստեցեր ՚ի հեթանոսս, և կոր-
եաւ ամբարիշտն. զանուանս նո-
ցա ջնջեցեր յաւիտեանս յաւիտե-
նից. և թշնամեացն պէն պակա-
սեաց վինչ ի հատած։
Ո՛չ քաղաքս աւերեցեր, և կորեաւ

յիշատակն նոցա աղաղակաւ։
Ա՛տեան ած կայ և մնաց յաւիտեան,
պատրաստաւ արար զաթոռ իւր ի
դատաստանի։
Ինքն դատի զաշխարհ արդարու-
թեամբ, և զժողովուրդ իւր ուղ-
ղութեամբ։
Եղեւ տէր ապաւէն անանկի, օգ-
նական ՚ի ժամանակի։
Յուսասցին ՚ի քէզ ամենեքեան
որ գիտեն զանուն քո. զի ոչ թող-
ցես զայնոսիկ՝ որ խնդրեն զքէզ
տէր։
Սաղմոս ասացէք տեառն՝ որ բնա-
կեալն է ՚ի սիովն. պատմեցէք ի հե-
թանոսս զգործս նորա։
Ի խնդրել զարիւն նոցա՝ յիշեաց,
և ոչ մոռացաւ աղէր զաղօթս
տնանկացն։
Ողորմեայ ինձ տէր՝ և տես զվտ-

Ընդ ամէն՝ և մի՛ զօրացի մարդ.
մի՛ կորիցէ խաչառ։
Ոչ ի սուրբ մոռանայ տէր զաղքատս.
աղեն. համբերութիւն անաւնակաց
մի՛ կորիցէ խաչառ։
Ոչ խափան մոռանայ տէր զաղքատս.
որ մոռացան զաստուած։
Դարձցին մեղաւորք անդրէն՝ ի
դժոխս, և ամենայն հեթանոսք
Նայհութիւն իմ՝ ի քէն ամաչեցայ
խօսել. ո՛ բարձր ատեր զիս դե-
րոց՝ ի մահուանէ։
Ազատեա զանմեղից զամենայն օրհ-
նութիւնս քո՝ ի գերութենէ դասեր
սխալնի, և ցնծացեալց՝ ի երկիւ-
Թեան քում։
Ընկալան հեթանոսք յաստուածու-
Թեան խրատոյ զոր ասացին.
որպէսզի զոր Թագուցին՝ առցէ
զոտս նոցա։
Ա՛նաւգի ասէր յաւուրն զգաստա-
ստանս իւր. և՝ ի գործս ձեռաց
խրատոյ կատեացին մեղաւորք։
Դարձցին մեղաւորք անդրէն՝ ի
դժոխս, և ամենայն հեթանոսք
որ մոռացան զաստուած։
Ոչ խափան մոռանայ տէր զաղքատ-
ութիւն. համբերութիւն անաւնակաց
մի՛ կորիցէ խաչառ։

զաստուածութիւն հեթանոսք առաջի
քո։
Կացո տէր օրէնսդիր ի վերայ նո-
ցա՝ և ծանիցեն հեթանոսք Թէ
մարդիկ են։
Ընդէ՞ր տէր կացեր՝ ի հեռաստա-
նէ. անտես արարեր՝ ի դէպ նե-
ղութեան ժամանակի։
Յամբարտաւանել ամբարշտին
այրի տաքսան. արկեալցին՝ ի խոր-
հուրդս խրատոյ՝ զոր և խորհե-
ցան։
Օ՛ի գովի մեղաւոր՝ ի ցանկու-
Թիւն անձին իւրոյ. որ զրկէն, և
նա գովի։
Խակընդէ՞ր բարկացաւ մեղաւորն
զաստուած, ասա բաղում թաղ-
կութեան իւրում Թէ ոչ խնդր-
սի։
Ոչ է աստուած առաջի աչաց նո-
րա. սխալք են ճանապարհք նորա

յամենայն ժամ։

Բարձեալ են իրաւունք յերեսաց
Տեառն. ՚ի վերայ ամենայն Քրիս-
ոսաց իւրոց տիրեցեալ է։

Ասաց ՚ի սրտի իւրում թէ ոչ սա-
սանեցայց ազգէ յազգ առանց
չարի։

Ընդէ՞ր և դառնութիւն և նեղ-
ութիւն լի է բերան Տեառն, և
՚ինեբքոյ լեզուի Տեառն ցաւք և
վաստակք։

Աչառի վարանեալ ընդ մեծամեծս
՚ի գաղանիս՝ ապականեալ զանբիծն։

Ընդէ՞ր Տեառն ՚ի մոռանալ հացին. վա-
րանի ՚ի գաղանիս որպէս զառիւծ
՚ի մորուղ իւրում։

Վարանի յաւիտեանս զազգքառն.
յաւիտեանս զազգքառն, և ձգել
զնա։

Յորոգայթ իւր խոնարհեցուսցէ
զնա. խոնարհեցայ և անկայ ՚ի տէ-

րեխութիւն ՚իմէրայ տնանկայ։

Ո՞ի ասաց ՚ի սրտի իւրում՝ թէ
մուտացս առաջս. զարձոյց
զերեսս իւր զի մի՛ տեսցէ իս-
պառ։

Արի տէր առաջս իմ. բարձր ե-
ղիցի ձեռն քո, և մի՛ մոռանար
զաղնանկս։

Խոկընդէ՞ր բարկացաւ ամբարիշ-
տն զաստուածս. զի ասաց ՚ի սրտի
իւրում թէ ոչ քննի։

Տեսանես զի զնա ՚իցաս, և ՚ի
սրտմտութիւնս և հայիս. ՚ի քեզ
թողեալ է աղքատն, և որբոյն
դու ես օգնական։

Խորտակեացի բազուկ մեղաւորի
և չարի. խնդրեսցին մեղք նորա,
և նա մի՛ գտցի։

Տէր թագաւորէ յաւիտեանս յա-
ւիտենից. կորիցեն հեթանոսք
յերկրէ նորա։

Ո՜վ յանկուցեալ Թիւն տնտանկաց լուար
տէր. ի պատրաստուել Թիւն սրտից
նոցա հայեցար ունկն դր։
Դատաստանել որբոյն և տնտանկի, զի
մի՛ ևս յաւելցի մարդ ի մեծաբա-
նել իւրում՝ ի վերայ երեսաց
երկրի։

Տունք խ։

ՍԱՂՄՈՍ Ժ.

Ի կիսաբաժ. Աղմոս ՚է Դաւիթ։

Ի տէր յուսացայ. ո՞րպէս ասիցէք
ցանձն իմ, փոխեսցի ՚ի լերինս
որպէս ճնճղուկ։
Ո՜վ ի ահա մեղաւորք լարեցին զա-
ղեղունս իւրեանց. պատրաստա-
բարին զնետս ՚ի կապարճս, ձգել
ընդ խաւարս այնոցիկ՝ որք ուղիղ
են սրտիւք։
Ո՜վ ի զոր գործն չինեցեր, նոքա ա-
ւերեցին. իսկ արդարն զի՞ արար։

Տէր ՚ի տաճարի սուրբ իւրում.
տէր յերկինս յաթոռ իւրում։
Աչք նորա ՚ի տնտանկս հային, և ար-
ասեւանուն նորա քննեն զորդիս
մարդկան։
Տէր քննէ զարդարն և զամբարիշ-
սն. որ սիրէ զմեղս, ատեաց զան-
ձին իւր։
Տեղասցէ ՚ի վերայ մեղաւորաց ո-
րոգայթ՝ հուր և ծծումբ. այս
մերիկ բաժին բաժակի նոցա։
Արդար է տէր՝ զարդարութիւն
սիրէ. զուղղութիւն տեսանեն
երեսք նորա։

Տունք բ։

ՍԱՂՄՈՍ ԺԱ.

Ի կիսաբաժ. ՚ի վերայ ո՞ւերդերին։

Կապեցո զիս տէր, զի նուաղեաց
սուրբ. նուազեցին ճշմարտու-
թիւնք յորդիս ՚ի մարդկանէ։
Ունայնիւ խօսեցան այր ընդ ընկե-

ի իւրում. շրմաամբք նենգաւոր
լօք սրտէ՝ ի սիրտ խօսեցան։
Սաստակէ տէր զամենայն շրմունս
նենգաւորս և զլեզուս մեծա-
բանս։
Որք ասացին՝ զլեզուս մեր մեծ
արասցուք. շրմունք մեր առ մեզ
են, և ո՞ւր մերձ է տէր։
Վասն տառապանաց աղքատաց և
հեծութեան տնանկաց, այժմ յա-
րեայց ասէ տէր. եդից զփրկու-
թիւն իմ, և համարձակեցայց
ի նոսա։
Խանգ տեառն են բանք տուրբ, որ-
պէս զարծաթ ընտրեալ և փոր-
ձեալ յերկրի, սրբեալ և պար-
զեալ եւթնապատիկ ի հոգւոյ։
Դու տէր պահեցեր զմեզ, և ապա-
րեցուցեր զմեզ յազգէ յայսմանէ
մինչև յաւիտեան։
Շուրջանակի ամբարիշտք շրջին.

ըստ բարձրութեան քումմէ մեծա-
պարծութեան զոլխամարդիան։

Տունք Ը։

ՍԱՂՄՈՍ ԺԲ.

Ի կատարած. Սաղմոս ի Դաւիթ։

Ա՞ինչև յե՞րբ տէր մոռանաս
զիս խնդատու. մինչև յե՞րբ դարձու-
ցանես զերեսս քո յինէն։
Մինչև յե՞րբ դնեմ զխորհուրդս
յանձնիմ, և ցաւք սրտի իմոյ զա-
ւուրս։
Մինչև յե՞րբ բարձրանայ թշնա-
մին՝ի վերայ իմ։ նայեաւ և լուր ինձ
տէր աստուած իմ։
Լուս տուր աչաց իմոց, զի մի՛
երբէք ննջեցից ի մահ։
Մի՛ ասասցէ թշնամին՝ թէ յաղ-
թեցի նմա, կամ նեղիչք իմ ցընդ-
ծայցեն թէ ես սասանեցայց։
Ես յուսացեալ թիւնս քո տէր յոյ-
ասացեալ. ցնծացաւ սիրտ իմ՝ ի փրկու-

կու Թեան քու մ. օրհնեցիկ զտէր
զբարեխոսդ իմ։

Տուիք ղ։

ՍԱՂՄՈՍ ԺԹ.

Ի խորհուրդ. Աղօթս ՚ի Տ՚ու-ին։

Ա՚ստացանդամ ՚ի սրտի քու մ՝
Թէ ոչ պիտ առնում ։
Ա՚պահանեցան և ապճեցան յանօ-
րէնս Թեան իւրեանց. և ոչ ոք է
որ առնէ զբարեխոսու Թիւն։
Տէր յերկնից նայեցար յամենայն
որդիս մարդկան, տեսանել Թէ
իցէ՞ ոք իմաստուն որ խնդրիցէ
զաստուած ։
Ա՚մենեքեան խոտորեցան ՚ի միա-
սին, և անօգիտացան։
Ոչ ոք է որ առնէ զբարեխո-
սու Թիւն, և չէ ոք մինչև ՚ի մի։
Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան,
որ գործեն զանօրէնու Թիւն։
Ոյք ուտեն զժողովուրդ իմ որ-

պէս ուհացուս հացի, և աստուած
ոչ կարդացին։
Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ոչ
իցէ երկիւղ. զի աստ է յազգ
արդարոյ։
Օ՚խորհուրդ աղքատի յամօթ
արարին, զի տէր է յոյսն նորա։
Ա՚ստէ ՚ի սիովնէ զփրկու-
Թիւն իսրայէլի. ՚ի դարձուցա-
նել աստուն զգերու Թիւն ժո-
ղովրդեան իւրոյ ցնծասցէ յա-
կովբ՝ և ուրախ եղիցի իսրայէլ։

Տուիք ժ. Գոբգայա լե։

ՍԱՂՄՈՍ ԻԹ.

Ի խորհուրդ. Աղօթս ՚ի Տ՚ու-ին։

Տէր ո՞վ կայցէ ՚ի խորանի քու մ,
կամ ո՞վ բնակեսցէ ՚ի լեառն
սուրբ քո։

թութիւն, խօսի զՃշմարտու-
թիւն ՚ի սրտի իւրում։
Որ ոչ նենգաւորեաց լեզուա
իւրով, և չար ընկերի իւրում
ոչ արար։
Ն,ախատինս ՚ի մերձաւորէ նա
ոչ առնու. արհամարհեալ է ա-
ռաջի նորա չարագործն։
Զերկիւղածս տեառն փառա-
ւոր առնէ. որ երդնու ընկերի
իւրում և ոչ ստէ։
Զարծաթ իւր ՚ի վարձու ոչ տայ,
կաշառս ՚ի մեղուց իրաւանց ոչ առ-
նու. որ զայս արուսցէ, նա մի՛ սա-
սանեսցի յաւիտեան։

ՍԱՂՄՈՍ ԻԵ.

Սաղմոս Յարիանագիր ՚ի Դաւիթ։

Պահեա զիս տէր ամենայն զի ես
՚ի քեզ յուսացայ. ասացի տեառն

տէր իմ ես դու, և բարիք իմ ինձ
՚ի քէն են։
Սրբոց որ են յերկրի քում.
սքանչելի արարեր զամենայն
կամս իմ՚ ինոսա։
Յաճախեցին հիւանդութիւնք
նոցա. յետ այսորիկ սպա վազ-
վազեցին։
Ոչ ժողովեցայց ՚ի ժողովս նոցա
յարեան, և ոչ յիշեցից զան-
ուանս նոցա ՚ի շրթունս իմ։
Տէր բաժին ժառանգութեան
իմոյ և բաժակի իմոյ, դու ես որ
այսրէն դարձուցանես զժառան-
գութիւն իմ ՚ի քեզ։
Վճակք ելին ինձ ընդ ընտիրս, և
ժառանգութիւն իմ հաճոյ եղև
ինձ։
Օրհնեցից զտէր որ խրատուն
արար զիս, մինչ ՚ի գիշերի և
խրատեցին զիս երիկամունք իմ։

Յաւուրջապէն ոեւսանէի զաէր ա-
ուաջի իմ յամենայն ժամ. զի է
քնդ աջմէ իմմէ զի մի՛ սասանե-
ցայց։

Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ
իմ, և ցնծացաւ լեզու իմ, եւս և
մարմին իմ բնակեսցէ յուսով։
Զի ոչ թողցես զանձն իմ՝ի դժո-
խս, և ոչ տացես սրբոյդ քումմեե-
սանել զապականութիւն։
Ցուցեր ինձ զճանապարհս քո
կենաց. լցուցեր զիս ուրախու-
թեամբ երեսացդոյ, ՚ի քաղցրու-
թենէ վայելչութեան աջոյդ քո
միշտ յաւիտեան։

Տունք ժա.

ՍԱՂՄՈՍ Ժ.Զ.

Ընդ՚ի՞նչ։

Լուր առ արդարութիւն, և
նայեա ՚ի բանդրուածս իմ. ունկն

դիր աղօթից իմոց, զի ոչ ընդ
թամբք ներդաւոցք։
Յերեսաց քոց իրաւունք ինձ ել-
ցեն, և աչք իմ տեսցեն զուղղու-
թիւն։
Փորձեցեր զսիրտ իմ և քննեցեր
՚ի գիշերի. փորձեցեր զիս և ոչ
գտար յիս անիրաւութիւն։
Ա՛ի խօսեցայ բերան իմ զգործս
մարդկան. վասն բանից
շրթանցդ ես պահեցեալ զճանա-
պարհս խիստս։
Հաստատեա զշաւիղս իմ՚ի ճա-
նապարհի քումմ, զի մի՛ դողմանակ
գնացին գնացք իմ։
Ես սա քեզ սէր կարդացի՝ զի
լսես ինձ աստուած. խոնարհե-
ցո սա խօսունկն քո, և լսեր բա-
նից իմոց։
Սքանչելի արարեր զողորմու-
թիւնս քո. ո՛վ փրկես զյուսացեալ

զք յուսացեալ են՝ի քեզ, յայն
ցանէ զք հակառակ կանացդ։
պահեա զիս որպէս բիբ ական.
՝ի հովանի թեւոց քոց ծածկեա
ցես զիս յերեսաց ամբարշտաց,
զք տառապեցուցին զիս։
թշնամիք զանձն իմ պաշարեցին.
՝ի ճարպս իւրեանց արգելան, և
բերանք նոցա խօսեցան զամբար-
տաւանութիւն։
Արհամեցին զիս, և այժմ դար-
ձեալ պատեցան զինեւ. ուշ եդին
խոնարհեցուցանել զիս յերկիր։
՝ամարեցան ինձ որպէս առիւծ
զի պատրաստ է յորս, և որպէս
կորիւն առիւծու զի նստի դա-
րանեալ։
Արի տէր՝ ժամանեա նոցա և խա-
փանեա զնոսա. փրկեա զանձն իմ
յամբարշտաց սրոյ, և՝ի ձեռանէ
թշնամեացն։

Տէր կորո զնոսա յերկրէ. բաժա-
նեա և խառնեա զնոսա՝ի կեա-
նս իւրեանց։
Վատնեօք քովք լցան որովայնք
նոցա. յագեցան կերակրովք, և
թողին զմնացուածս տղայոց
իւրեանց։
Ես արդարութեամբ երեւեցայց
երեսաց քոց. յագեցայց յերևել
փառաց քոց։

Տունք ժե ։ Գոլգաթա ։

ՍԱՂՄՈՍ ԺԵ.

Ի կատարած՝ ի վերայ պսակելոցն նահապետի Ծառոյի պեառն Դաւիթ.
ըստ խօսեցաւ ընդ Տեառն զբանս օրհնութեան յաւուր յորում ձերբեց
զնա Տէր՝ ի ձեռաց ամենայն թշնամեաց, և՝ ի ձեռաց Սաւուղայ. և ասէ։

Սիրեցից զքեզ տէր զօրութիւն
իմ. տէր հաստատութիւն իմ, ապաւէն
իմ և փրկիչ իմ։
Աստուած օգնական իմ և ես յու-
սամ՝ի նա. ապաւէն իմ, եղջիւր

փրկութեան իմոյ ընդունելի
իմէ։

Օրհնեալ կարդացեալ առ ամէն.
և՝ ի թշնամեաց իմոյ ապրեցայց։
Ելս լցեալ եղեն գինեվերումն մա-
հու. և ուղիք անօրէնութեան
խաւարեցուցին զիս։

Ա՛ իշաք զժոխոց պաշարեցին զիս.
ժառանգեցին ինձ որոգայթք մա-
հու։

Ինեզուք թեան իմում ես առ ամէն
կարդացի, և առ առաւուած իմ
աղաղակեցի։

Լուաւ ինձ՝ ի տաճարէ սրբոյ
ինքեան ձայնի աղօթից իմոց, և ա-
ղաղակ իմ առաջի նորա մտցէ
յականջս նորա։

Խռովեցաւ և դողացաւ երկիր, և հիմունք լերանցն սասանեցան և խռովեցան, զի բարկացաւ՝ ինքեան
բոց նորա առաւուած։

Ելծուխ՝ ի բարկութենէ նորա, և
հուր յերեսաց նորա բորբոքեցաւ, և փայլատակունք հատան
՝ի նմանէ։

Խոնարհեցոյց զերկինս և էջ, և
մէգ՝ ինեղբոյ ոտից նորա։

Եւ՝ ի քերովբէս և թռեաւ, սլացաւ նա՝ ի թեւս հողմոց։

Եդ զխաւարն՝ ի ծածկոյթ իւր, և
շուրջ զնովաւ եղեն յարկք իւր, և
խաւարային ջուրք միջև յամպս
օդոց։

Ի փայլատակել նորա առաջի նորա, ամպք անցուցին զկարկտուտ
և զկայծակունս հուր։

Որոտաց ի երկնից, և բարձրեալ եւ զձայն իւր՝ ի կարկտուտ
և՝ ի կայծակունս հուր։

Ընդաքեաց զնետս իւր և ցրուեաց
զնոսա. յաճախեաց զփայլատակս
կուռնս իւր, և խռովեցոյց զնոսա։

Երևեցան աղբեղբ ջուրց, և յայտնեցան հիմունք աշխարհի։
Բացաւ քումմէ տէր, և ի շնչել հոգւոյ բարկութեան քո։
Առաքեաց ի բարձանց և ընկալաւ զիս. ընկալաւ զիս ի ջուրց բազմաց։
Փրկեաց զիս տէր ի թշնամեաց իմոց հզօրաց, և յատելեաց իմոց, զի հզօքք եղեն քան զիս։
Յանդգնեցին ինձ յաւուր չարչարանաց իմոց. եղև տէր հզօրիչ իմ և եհան զիս յանդորր. և փրկեաց զիս զի կամեցաւ զիս։
Հատոյց ինձ տէր ըստ արդարութեան իմում, ըստ անբծութեան ձեռաց իմոց հատոյց ինձ։
Զի պահեցի զճանապարհս տեառն, և ոչ ամբարշտեցայ յԱստուծոյ իմմէ։
Զի ամենայն իրաւունք նորա առաջի իմ եղեն. զարդարութիւն իւր ոչ ի բացե արար յինէն։
Եղէց և ես անբիծ ընդ նմա. պուճացայց յանօրէնութենէ իմմէ։
Հատոյց ինձ տէր ըստ արդարութեան իմում, ըստ սրբութեան ձեռաց իմոց առաջի աչաց իմոց։
Ընդ սրբոյն սուրբ եղիցես, ընդ առն անբծի անբիծ եղիցես, ընդ ընտրեալն ընտրեալ եղիցես, և զխիտն կործանեսցես։
Դու զժողովուրդս խոնարհս կեցուցանես. զաչս ամբարտաւանս նիւց դու խոնարհեցուցանես։
Դու լուսաւորես զճրագ իմ տէր. աստուած իմ լայս առնես ինձ ի խաւարի։
Քանզի փրկեցայց ի փորձութենէ. աստուծով իմով անցից ընդ պա-

լինայս։

Աստուած իմանալի են ճանա-
պարհք քո, և բանք տեառն ըն-
տրեալ են. և տպաւէն ամենե-
ցուն որ յաստան՝ինա։

Այսն զի ոչ է աստուած բայց
՝ինտեառնէ. կամ ո՞վ է աստուած
բայց յաստուծոյ մերմէ։

Աստուած որ զզեցուցեր ինձ զօ-
րութիւն, և եդիր յանբծու-
թիւն իմ։

Զեան զձանապարհս իմ։

Հաստատեցեր զոտս իմ որպէս
զեղջերուի, և՝ի վերայ բարձանց
կացուցեր զիս։

Ուսուցեր զձեռս իմ՝ի պատե-
րազմ, և արտերը զբազուկ իմ
որպէս զպղծն հաստ. և ետուր
ինձ զպաշտպանութիւն փրկու-
թեան քոյ։

Զեան քոյ։

Ընդ քո ընկալաւ զիս, և խրատ-
կանոնեաց զիս խրատ, և խրատ

քո ուսուսցէ զիս։

Ընդարձակեցեր զդնացս իմ՝ի
տակս իմում. և ոչ տկարացան շա-
րիք իմ։

Հալածեցից զթշնամիս իմ և հա-
սից նոցա. և ոչ դարձայց՝ինոցա-
նէ՝ մինչև սպառեցից զնոսա։

Նեղեցից զնոսա և ապրի՛ կարաս-
ցեն կալ. և անկցին՝ի ներքոյ ո-
տից իմոց։

Զօրեցուցեր ինձ զօրութիւն՝ի
պատերազմի. զյարուցեալսն՝ի
վերայ իմ՝ ներքոյ իմ արարեր։

Թշնամիս իմ հալածականս ա-
րարեր, և զատելիս իմ աւերակե-
ցեր։

Աղաղակեցին և ոչ ոք էր որ փրկէր
զնոսա. կարդացին առ տէր՝
և ոչ լուաւ նոցա։

Ասացի զնոսա որպէս փոշի
առաջի հողմոյ. որպէս կաւ փո-

հաց կոխեցից զնոսա ։

Փրկեսցէ զիս տէր ՚ի հակառա-
կութենէ ժողովրդեան, և կա-
ցուսցէ զիս գլուխ հեթանոսաց ։
Ժողովուրդ զոր ոչ գիտէի ՚ծա-
ռայեաց ինձ, և ՚ի լուր ականջաց
լսեաց ինձ ։

Որդիք օտարաց ստեցին ինձ . որ-
դիք օտարաց մաշեցան և կաղա-
ցան ՚ի շաւղաց իւրեանց ։

Կենդանի է տէր և օրհնեալ է
աստուած . բարձր եղիցի աս-
տուած փրկութեան իմոյ ։

Աստուած որ խնդրէ զվրէժ իմ,
և հնազանդ առնէ զժողովուր-
դըս ընդ ինձ ։

Փրկիչ իմ ՚ի թշնամեաց իմոց բար-
կացօղաց . յայնցանէ որ յարու-
ցեալ են ՚ի վերայ իմ՝ բարձր ա-
րարեր զիս, և յառնէ անիրաւէ
մարդոյ փրկեցեր զիս ։

Վասն այսորիկ խոստովան եղէց
քեզ ՚ի հեթանոսս, և անուա-
նի քում սաղմոսասացից ։

Մեծ արարեր զփրկութիւն թա-
գաւորի նորա . առնել ողորմու-
թիւն ընդ օծեալ նորա, ընդ դա-
ւիթի և ընդ զաւակի նորա մինչև
յինչև յաշխարհ ։

Տունք ծ ։

Կանոնս Գրիգորի է ։ Սաղմոս ժէ ։

Տունք մլբ ։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԷՍԻ ԵՒ ՈՐԴՒՈՑՆ ԻՍՐԱՑԷԼԻ

եւէ ժբ ։

Օրհնեացուք զտէր, զի փառաւոր
է փառաւորեալ ։

Ձի հեծեալն և զերիվարս ընկէց ՚ի
ծովն . օգնական ընդունելի իմ
տէր, և եղև ինձ ՚ի փրկութիւն ։
Սա է իմ աստուած և փառաւոր

առնեմ զաս. առաւած հօրիմոյ
և բարձր արարիչ զաս։
Տէր խոստակէ զաստեղազնուն,
ոչ թէ անուն նորա։
Ո՛ընտիրս արանց և ընտիրս բա-
ստաստղիանց, զիաւս և զերիտա-
սարդս և զամենայն զօրութիւն
փառաւորն ընկէց ի ծով։
Ձի ծածկեաց զնոսա, ընկղման
յանդունդս խորհրդոյ բան զիմս։
Ո՛չ քո ոչ ոք փառաւորեալ է զո-
րութեամբ իւրով. այլ քո ոչ
խորհուրդ զիշնամին քո։
Եւ մեծութեամբ փառաց քոյ
մանրեցեր զհակառակորդս քո.
առաքեցեր զբարկութիւն սրտ-
մութեան քոյ, և եկեր զնոսա
որպէս զեղէգն։
Ցոգի զօրութեան սրտմտու-
թեան քո ապաստանեցան ջուր.
դիման կացին որպէս պարիսպ

բարեաց ջուրք ծովուն, և պատե-
ցան դիպան ալիք ջրոցն ի մէջ
ծովուն։
Ասաց թշնամին, ասէ հալածեցից
հասից հարից. բաժանեցից զա-
ւարն, և լցուցից ինոցանէ զանձն
ձրն իմ։
Ւսուր իմ արկից զնոսա. սիրեսցէ
և բարձրասցի ի վէրայ նոցա
ձեռն իմ։
Ւսաքեցեր զհողմն քո և ծած-
կեաց զնոսա ծով. ընկղմեցան և
իջին որպէս կապար ի ջուրս առա-
ւիկս.
Ո՞նման է քեզ յաստուածս տէր.
կամ ո՞ նման է քեզ՝ փառաւոր
րեալ ի սուրբս։
Ւսանջելի փառաւորեալ՝ որ
առնես զնշանս և զսքանչելիս.
ձգեցեր զձեռն քո, և եկուլ զնոս
սա երկիր։

Տարեալ առնեսցես զնոսա ՚ի
զոր առացեալ։
Մինչև անցցէ ժողովուրդ քո՝ այս
մինչև անցցէ ժողովուրդ քո, զոր
քաջացար։
Եւ մխիթարեցեր զօրութեամբ
քով ՚ի բանակեսցէ սրբութեան
քո. լսեան ազգք և բարկացան,
և երկունք կալան զբնակիչս
փղշտացւոց։
Յայնժամ վհատացան դատա-
ւորք եդովմայ, և իշխանք մո-
վաբացւոց։
Կալաւ զնոսառ դող և. հալեցան
ամենայն բնակիչք քանանացւոց։
Ընկղմի ՚ի վերայ նոցա ահ և բա-
կիւղ. և ՚ի զօրութենէ բազկի քո
քարացին։
Մինչև անցցէ ժողովուրդ քո, տէր,
զոր առացեալ։

լերին ժառանգութեան քոյ,
՚ի պատրաստութիւն բնակու-
թեան ժառանգութեան քոյ։
Օ՛ տէր սուրբ ՚ի սկզբանէ տէր,
առացար սրբութեամբ, զոր
պատրաստեցին ձեռք քո. տէր
թագաւոր յաւիտեան յաւի-
տենից՝ և եւս։
Օ՛ ի եմուտ փարաւօն կառօք և
երիվարօք և ընտիր սպառազի-
նօք ՚ի մէջ ծովուն։
Եւ ած ՚ի վերայ նոցա տէր զջուր
ծովուն, և որդիքն իսրայէլի գը-
նացին ընդ ցամաք ՚ի մէջ ծովուն։
փառք Հօր և որդւոյ և։

Ո՛վ անձինս մեր և զմիամեանս տեառն աստուածոյ մերոյ զտէր աղա։

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և տուր ջերմին զտէր աղա։

Վասն զի մի խոտանեսցէ մեզ յաւուրն պատասխանատուութեան, զտէր աղա։

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով՝ի քրիստոս նընջեցին զտէր աղա։

Վասն զի մի խոտանեսցէ մեզ զամենայն յանցանս մեր զկամս և զակամս, զտէր աղա։

Վասն թողուլոյ մեզ զամենայն յանցանս մեր զաչաց մերոց, զտէր աղա։

Վասն քաւիչ և ներող լինելոյ՝ի վերայ մեղ նի ազաչանաց մերոց, զտէր աղա։

Վասն լսելի լինելոյ տեառն աստուծոյ ձայնի ազաչանաց մերոց, զտէր աղա։

Վասն՝ի վերստին խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զտէր ազաչեսցուք։

Տէր ողորմեա։

Վարդապետ տէր, վասն սրբոյ հոգւոյ անարատ տուն մեր քոյ և կուսի, և վասն խաչի քո պատուականի, ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ։

Վարդապետ ասէ եւանեալ և լուռ ի կանոնէ։

Վասն՝ի վերստին խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զտէր ազաչեսցուք։

Տէր ողորմեա։

Վասն լսելի լինելոյ տեառն աստուծոյ ձայնի ազաչանաց մերոց, զտէր աղա։

Վասն քաւիչ և ներող լինելոյ՝ի վերայ մեղաց մերոց, զտէր աղա։

Վասն թողուլոյ մեզ զամենայն յանցանս մեր զկամս և զակամս, զտէր աղա։

Վասն զի մի խոտանեսցէ մեզ յաւուրն պատասխանատուութեան, զտէր աղա։

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով՝ի քրիստոս նընջեցին զտէր աղա։

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և տուր հոգւոյս մերոյ զտէր աղա։

Ո՛վ անձինս մեր և զմիամեանս տեառն աստուածոյ մերոյ, զտէր աղաչեմք զքեզ որ յամենայնի գիտաց և մարդասէր տէր ես, ազաչեմք հանապազ, զի զօրացուսցես զմեզ օր ըստ օրէ կալ՝ի կարծ

ծոյ ամենակալին յանձն արասցուք։

Ի եզ տեառնդ յանձն եղիցուք։

Աղօթեսցուք մեզ տէր աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քումմէ։ ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր ողորմեա։

Աղեխ։

Տէր տուբընչեան և գոյացուցիչ գիշերոյ. որ արարեր զտիս՝ի զբօսանս բարեգործութիւն՝ի փրկութիւն անձանց մերոց, և զգիշեր՝ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութեանս մերում։ Իսկ այժմ զարթուցեալ բացեր զերեսանս մեր յօրհնաբանութիւն ահաւոր և փառաւորեալ անուանդ քումմէրբոյ։ Ընկալ և այժմ զաղաչանս մեր, և յաջողեա մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք՝ի նոյն պաշտօն կանխել միշտ, և նովին կանոնիւս անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղաչութիւն ամենեցուն։

Ընծայ երիցպագեսցուք։

Ո՛վ քեզ՝ որ յամենայնի գիտաց և մարդասէր տէր ես, աղաչեմք հանապազ, զի

թիւնն զօրութիւն եւ փառք յաւիտեանս.
ամէն։

Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ
փրկեա զմեզ ի չարէ։ Ո՛ի քո է արքայու-
թիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս.
ամէն։

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն
քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին
կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի։
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այ-
սօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս
եւ մեք թողումք մերոց պարտապանաց։
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ
փրկեա զմեզ ի չարէ։ Ո՛ի քո է արքայու-
թիւնն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս.
ամէն։

Ա՛ղաչանք։

Ապաշխարութեամբ եւ օրհնութեամբ
հոգեւորօք անդադար փառաւորեմք զՀայր
եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին, այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ ես Տէր Աստուած մեր յաւիտեանս.
ամէն։

Հայր մեր որ յերկինս՝ սուրբ եղիցի անուն
քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին
կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի։
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այ-
սօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս
եւ մեք թողումք մերոց պարտապանաց։
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ
փրկեա զմեզ ի չարէ։ Ո՛ի քո է արքայու-
թիւնն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս.
ամէն։

Ողորմեա մեզ Տէր ողորմեա մեզ, զի
կրծնաւորութեան մերում։ Ողորմե-
ցաց տէր՝ զքաղցր լուծ քո զոր եդիր ի
վերայ մեր, զի կարասցուք կալ ի պատ-
ուիրանի քում, և զհաճոյն առնել առա-
ջի քո յամենայն ժամ ի տուէ և ի դիշերի։
Երեշտակային երգակցութեամբ զքեզ
օրհնել, զքեզ գովել, և քեզ գոհութիւն
և փառս մատուցանել ամենազօր տէրու-
թեանդ, այժմ և միշտ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։

Հոգին Սուրբ եկեսցէ ՚ի քեզ և զօրութիւն բարձրե-
լոյն հովանի լիցի ՚ի վերայ քո ։

ՍԱՂՄՈՍ ԺԸ.

Ի կոպրաց . Աղօթս Ի Դաւիթ ։

Երկինք պատմեն զփառս աս-
տուծոյ . զարարածս ձե-
ռաց նորա պատմէ հաստատու-
թիւն։
Օր աւուր բղխէ զբան, և գի-
շեր գիշերի ցուցանէ զգիտու-
թիւն ։
Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց
ոչ լսին ձայնք նոցա ։
Ընդ ամենայն երկիր ել բարբա-
նոցա, մինչեւ ՚ի ծագս տաշխար-
հի են խօսք նոցա ։
Յարեւուտ եհար զխորան իւր, և
ինքն որպէս փեսայ՝ զի ելանէ յա-
ռագաստէ իւրմէ . ցնծայ նա որ-
պէս սակաւ յընթանալ զճանապար-
հըս իւր ։

ի ծագաց երկնից են եւ ի նոցա
հանգիստս նորա մինչեւ ի ծագս
նորոյն. եւ ոչ ոք լցեալ որ թափիցէ
ի տառապ նորա։

Օ երկինք առաւն ամբիծ են, եւ
պարձանացանեն զհոտիս. վկայու-
թիւն առաւն հաւատարիմ, եւ
խնամատուն առնէ զտղայս։
Ընդարձակ թիւն առաւն ուղիղ
է, եւ ուրախ առնէ զսիրտս. պա-
տուհիրանք առաւն լցեալ են եւ լցու
ցանն աչաց. երկիւղ առաւն
սուրբ՝ եւ մնայ յաւիտեան։
Դատաստանք առաւն ճշմարիտ
են, եւ արդար է նոքա։
Ցանկալի է նա քան զոսկի եւ քան
զպատուական սատրա բազում.
քաղցր է նա քան զմեղր եւ խորիսխ։
Ծառայ ծառայ քո պահեացէ
զայս. ի պահել նոցա հատուցու-
մն բազում։

Օ յանցուածոց թո՛ղ ինձ կարէ առ-
նուլ ի միտ. ի պատահանեայ իմոյ
սուրբ արա պիտեր, եւ յօտարէ
պահեա զծառայս քո։
Ապա թէ ոչ տիրեացեն ինձ, յայն-
ժամ անբիծ եղէց, եւ սուրբ եղէց
ի մեզայ մեծայ։
Եղիցին քեզ հաճոյ բանք բե՛րա-
նոյ իմոյ, եւ խորհուրդք սրտի իմոյ
առաջի քո յաւիտեան ժամ. տէր
օգնական իմ եւ փրկիչ իմ։

Տուեալ ժդ։

ՍԱՂՄՈՍ ԺԹ.

Ի հոտարած. Սաղմոս ՚ի Դաւիթ։

Լուսին քեզ տէր յաւուր անձ-
կութեան. օգնական եղիցի քեզ
անուն աստուծոյ յակովբեայ։
Առաքեսցէ քեզ տէր օգնու-
թիւն ՚ի սրբութենէ եւ ՚ի սի-
ոնէ, եւ ընկալցի զքեզ։
Յիշեսցէ տէր զամենայն պատա-

բարձր քո, և զուխտս քո ընդունել
լի արասցէ:
Տացէ քեզ ամէն ըստ սրտի քում.
և զամենայն խորհուրդս քո նա
կատարեսցէ:
Ցնծասցուք մեք ի փրկութեան
քում. յանուն աստուծոյ մերոյ
մեք մեծք եղիցուք:
Լցուսցէ տէր զամենայն խընդ-
րուածս քո. այժմ ծանեաք զի
կեցոյց տէր զօծեալ իւր:
Լուաւ սմա յերկնից՝ի սրբութե-
նէ իւրմէ, ի զօրութիւն փրկու-
թեան աջոյ իւրոյ:
Սոքա կառօք և սոքա երիվարօք.
մեք զանուն տեառն աստուծոյ
մերոյ կարդասցուք:
Սոքա խոտանեցան և անկան.
մեք յարեաք և ուղիղք եղաք:
Տէր կեցո զքրիստոս և
լուր մեզ, յաւուր յորում

կարդասցուք առ քեզ:

Տունք ժ:

ՍԱՂՄՈՍ Ը.

Ի կոպրոց. Սաղմոս դ Դաւիթ:

Տէր՝ի զօրութեան քում ուրախ
եղիցի թագաւորն. և՝ի փրկու-
թեան քում ցնծասցէ յոյժ:
Ցանկութիւն սրտի նորա ե-
տուր նմա, և զկամս շրթանց նո-
րա ոչ արգելեր՝ի նմանէ:
Յառաջացար զնա յօրհնու-
թիւն քաղցրութեան քոյ. և-
դիր՝ի գլուխ նորա պսակ՝ի քարէ
պատուականէ.
կեանս խնդրեաց՝ի քէն, և ե-
տուր նմա երկայնաւուրս,
յաւիտեանս յաւիտենից:
Մեծ են փառք նորա՝ի փրկու-
թեան քում. զփառս և զմեծ վայ-
ելչութիւն դիցես՝ի վերայ նորա:
Տացես զնա յօրհնութիւն յաւի-

սեանս յաւիտենից. ուրախ ա-
րասցես զնա յոլորակութիւն ե-
րեսաց քոց։

Թագաւորդ յուսացաւ՝ ի տէր։ յո-
ղորմութենէ բարձրելոյն նա մի՛
սասանեսցի։

Գազի ձեռն քո՛ի վերայ թշնա-
մեաց քոց. և աջդ քո գտցէ զամե-
նայն ատելիս քո։

Դիցես զնոսա որպէս հնոց՝ ի հուր՝
՝ի ժամանակի երեսաց քոց։

Տէր բարկութեամբ իւրով խու-
վեցուսցէ զնոսա, և հուր կերիցէ
զնոսա։

Պտուղ նոցա յերկրէ կորիցէ. և
զաւակ նոցա յորդւոց՝ի մարդկա-
նէ։

Խորհեցան՝ի քէն չարութեամբ,
խորհեցան խորհուրդ՝ զոր ոչ
կարացեն հաստատել։

Արասցես զնոսա հալածեալս. ՝ի
երեսս քո ապստամբեսցես
զերեսս նոցա։

Պարձր լեր տէր՝ի զօրութեան
քում. օրհնեցից և ստամուս ա-
նունդ զօրութեան քում։

Տուեալ ԺԹ. Գարձայս ԼԲ։

ՍԱՂՄՈՍ ԻԱ.

Ի կատարած. վասն առաւօտին օգնականութեան.
Սաղմոս՝ ի Դաւիթ։

Աստուած աստուածդ իմ՝ նայեաց
առ իս. ընդէ՞ր լքեր զիս. հեռի
եղէ՝ ի փրկութենէ իմմէ վասն
բանից յանցանաց իմոց։

Աստուած իմ՝ ի տուէ կարդացի
ստքեզ՝ և ինձ ոչ լսեար. ի գիշե-
րի՝ և ինձ ոչ անսացեր։

Դու՝ ի սուրբս բնակեալ ես, և
գովեալ յիսրայէլ։

Ի քեզ յուսացան հարքն մեր. յու-
սացան՝ի քեզ, և փրկեցեր զնոսա։

Ընդ քեզ աղաղակեցին և կեցին.

ի քեզ յուսացանև ոչ ամաչեցին։
Ընդ ես որդն եմ, և ոչ եմ մարդ.
նախատինք մարդկան և արհա-
մարհանք ժողովրդոց։
Ընդհանք որ տեսանէին զիս,
արհամարհէին զինեւ. խօսէին
շրթամբք, և շարժէին զգլուխս
իւրեանց։
Յուսացաւ ի տէր՝ և փրկեսցէ
զնա. կեցուսցէ զնա՝ զի կամի զնա։
Դու ես՝ որ հանեար զիս յորովայն-
դի. յոյս իմ՝ ի տեառնէ մօր իմոյ։
Ի քեզ առնկայ ես յարդանաւէ որ-
վայնէ մօր իմոյ, դու ես աս-
տուած իմ։
Մի՛ ի բացեայ առնիր յինէն, զի
նեղութիւնք մերձեալ են և ոչ
ոք է որ օգնէ ինձ։
Շուրջ եղեն զինեւ զուարակք բա-
զումք, և ցուլք գեղք պաշարե-
ցին զիս։

Բացին ի վերայ իմ զբերանս իւ-
րեանց, որպէս առիւծ զի մոնչէ՝
և յափշտակէ։
Եւ որպէս զջուր հեղայ, և ցրուե-
ցան ամենայն ոսկերք իմ. և եղև
սիրտ իմ որպէս մոմ հալեալ ի մէջ
որովայնի իմոյ։
Չորացաւ որպէս խեցի զօրու-
թիւն իմ. լեզու իմ՝ ի քիմս իմ
կցեցաւ, և ի հող մահու իջու-
ցին զիս։
Շուրջ եղեն զինեւ շունք բա-
զումք, և ժողովք չարաց պաշա-
րեցին զիս։
Ծակեցին զձեռս իմ և զոտս,
և թուեցին զամենայն ոսկերս իմ.
և նոքա հայեցան և տեսին զիս։
Բաժանեցան զհանդերձս իմ՝ ի
մէջ իւրեանց, և ի վերայ պատ-
մուճանի իմոյ վիճակս արկանէին։
Դու տէր մի՛ հեռի առներ զօգ-
նութիւնդ քո ինէն. և տէր յօգ-

նել ինձ նայեաց։
փրկեա՛ ի սրոյ զանձն իմ, և՛ ի ձե-
ռաց շանց զմիամօրուքիւն իմ։
փրկեա զիս՝ի բերանոյ առիւծու,
յեղջերէ միեղջերուի զխոնար-
հութիւն իմ։
պատմեցից զանուն քո եղբարց ի-
մոց. ՚ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից
զքեզ։
երկիւղած եղեալ օրհնեցէք
զտէր. ամենայն զաւակն յակովբ
բեռան փառաւորեալ ասացեն զինա։
երկիցէ ՚ի առեալն ամենայն զա-
ւակն իսրայէլի, զի ոչ արհամար-
հեաց և ոչ անարգեաց տէր զաղօ-
թըս աղքատի, և ոչ դարձոյց զե-
րեսս իւր յինէն. այլ ՚ի կարդալ ի-
մում առ նա լուաւ ինձ։
Ի քէն է գովեստ իմ, յեկե-
ղեցիս մեծ օրհնեցից զքեզ։
Ուխտս իմ կատարեցից առաջի
ամենայն երկիւղածից նորա։

կերիցեն տնանկք և յագեսցին.
օրհնեսցեն զտէր որք խնդրեն
զնա։
կեցցեն սիրտք նոցա յաւիտեան
յաւիտենից. յիշեսցեն և դարձ-
ցին առ տէր ամենայն ծագք եր-
կրի։
և երկրպագցեն նմա ամենայն
տոհմք ազգաց. զի տեառն է ար-
քայութիւն, և նա տիրէ ՚ի վերայ
ամենայն հեթանոսաց։
կերան և երկրպագին նմա ամե-
նայն պարարտք երկրի. առաջի նո-
րա անկցին ամենեքեան որ իջա-
նեն ՚ի հող։
Ընձեան իմ նմա կեաց, և զաւակ
իմ ծառայեսցէ նմա։
պատմեցից տեառն յազգ որ գա-
լոցն է. պատմեսցեն զարդարութիւն
ժողովրդեանն որ ծնանելոցն
իցէ զոր արար տէր։

ՍԱՂՄՈՍ ԻԲ.

Ի կապարաջ. Սաղմոս ՚ի Դաւիթ։

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցէ։

Ի վայրի դալարածոջ անդ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգըստեան սնոյց զիս։

Դարձոյց զանձն իմ առ իս, առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ։

Թէպէտև գնացից ես ի միջոց ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ՝ զի դու առ ընդ իս ես։

Ցուպքդ և գաւազան, նոքա մխիթարեսցեն զիս։

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան, ակն յանդիմանեն նեղչաց իմոց։

Օծեր իւղով գլուխ իմ. բաժակ

քո որպէս անհատակ արբեցոյց զիս։

Ողորմութիւն քո տէր զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց. բնակել ինձ ի տան տեառն ընդ երկայն աւուրս։

Տաւնք ը.

ՍԱՂՄՈՍ ԻԳ.

Սաղմոս ՚ի Դաւիթ. Ղազարոսին։

Տեառն է երկիր լրիւ իւրով. աշխարհ և ամենայն բնակիչք նորա։

Նա ինքն ի վերայ ծովու հիմնեաց զնա, և ի վերայ գետոց պատրաստեաց զնա։

Ո՞վ ելցէ ի լեառն տեառն, կամ ո՞վ կայցէ ի տեղւոջ սրբութեան նորա։

Որ սուրբ է ձեռօք և անբիծ սրտիւ, որ ոչ առ զնանութիւնս յանձն իւր, և ոչ երդուաւ ընդ

ընկերի իւրում՝ նեղոտութեամբ։
Սաստկէ զօդնութիւն՝ ի տեսա-
նել, զղջմունքիւն յաստուծոյ
փրկչէն իւրմէ։
Ո՛յս ապդ է որ խնդրէ զտէր.
խնդրէ տեսանել զերեսս աստու-
ծոյ յակովբայ։
Ո՛ամբարձէք իշխանք զդրունս
ձեր՝ի վեր. համբարձին դրունք
յաւիտենից և մտցէ թագաւոր
փառաց։
Ո՞վ է սա թագաւոր փառաց.
տէր հզօր զօրութեամբ իւրով,
տէր հզօր՝ի պատերազմի։
Ո՛ամբարձէք իշխանք զդրունս
ձեր՝ի վեր. համբարձին դրունք
յաւիտենից և մտցէ թագաւոր
փառաց։
Ո՞վ է սա թագաւոր փառաց, տէր
զօրութեանց. սա ինքն է թագա-
ւոր փառաց։

Տունք ժե ։ Գօրգայս ծ ։

ՍԱՂՄՈՍ Ի Դ.

Ի խորհ. Աղմոս Դաւիթ ։

Ա՛ւր քեզ տէր համբարձի զանձն
իմ. աստուած իմ՝ ի քեզ յու-
սացայ՝ մի՛ ամաչեցից, և մի՛ ծի-
ծաղեսցին զիս թշնամիք իմ։
Ա՛մենեքեան որ համբերեն քեզ՝
մի՛ ամաչեսցեն, այլ ամաչեսցեն
անօրէնք յունայնութեան իւ-
րեանց։
Ո՛ճանապարհս քո տէր ցոյց ինձ,
և զշաւիղս քո ուսո՛ ինձ։
Ա՛ռաջնորդեա ինձ ի ճշմարտու-
թեանդ քում և ուս զիս, զի դու
ես աստուած փրկիչ իմ, և ես քեզ
համբերի զօրհանապազ։
Յիշեա տէր զգթութիւնս քո,
և զողորմութիւնս որ են յա-
ւիտենից։
Ո՛վ զես մեղկութեան իմոյ և զան-

գիտութեան իմոյ մի՛ յիշեր. այլ
յիշեա զիս տէր ըստ ողորմու-
թեան քումդ վասն քաղցրու-
թեան քո, զի քաղցր և ուղիղ ես։
Այսպէս օրէնսդէտ առ-
նես զմեղաւորս ի ճանապարհի.
առաջնորդես հեզոց ի դատաս-
տանի. ուսուցանես հեզոց զճա-
նապարհս քո։
Ընդէնայն ճանապարհք տեառն
ողորմութեամբ և ճշմարտու-
թեամբ են այնոցիկ, որք խնդրեն
զուխտ և զվկայութիւնս նորա։
Այսպէս անուանքդ տէր քաւեա
զմեղս իմ զի բազում եղեն. ո՞վ է
մարդ որ երկնչի ի տեառնէ, օրէ-
նսդէտ առնէ զնա ի ճանապարհ
յոր և հաճեցաւ։
Ընձեռնորա ի բարութեան հան-
գիցէ. և զաւակ նորա ժառան-
գեսցէ զերկիր։

Օ՜ օրութիւն է տէր երկիւղա-
ծացդ իւրոց. և վկայարանս իւր
ուսուցանէ նոցա։
Աչք իմ յամենայն ժամ առ տէր,
և նա հանէ յորոգայթէ զոտս իմ։
Նայեա առ իս և ողորմեա ինձ, զի
միամօր և աղքատ եմ ես։
Նեղութիւնք սրտի իմոյ բազում
եղեն յոյժ, և ի վշտաց իմոց հան
զիս։
Տես զխոնարհութիւն իմ և զվ-
աստակ իմ, և թող ինձ զամենայն
մեղս իմ։
Տես զթշնամիս իմ զի բազում ե-
ղեն, ատելութիւն զոր ի նանիր
ատեցին զիս։
Պահեա զանձն իմ և փրկեա զիս.
և մի յամօթ եղէց զի յուսացայ
ի քեզ։
Ընդիմք և ուղիք կցորդ եղեն
ինձ, և ես քեզ համբերի. փրկեա

աստուած վիրապէն յամենայն
նեղութենանց նորա ։

Տունք ԺԲ ։

ՍԱՂՄՈՍ Ի՛Ե ։

Ի կոպրած. Սաղմոս Դաւիթ ։

Դատաստան իմ ես ոտն՝ վի ես յան-
բծութեան իմոյ մդնացի. ի տէր
յուսացայ վի մի՛ եղէց հիւանդ ։
փորձեա վիս տէր և քննեա վիս.
վառեա զերիկամունս իմ և զսիրտ
իմ ։
Ողորմութիւն քո տէր առաջի
աչաց իմոց. և հաճոյ եղէց ճշմար-
տութեան քում ։
Ոչ նստայ ես յաթոռս նանրութեան.
ընդ անօրէնս ես ոչ մտից ։
Ատեցի ես ժողովս չարութեան, և ընդ
ամբարիշտս ես ոչ նստայց ։
Լուացայց սրբութեամբ զձեռս
իմ, և շուրջ եղէց զսեղանուդ քում
տէր ։

Լսել ինձ ձայն օրհնութեան քո,
և պատմել զամենայն սքանչելիս
քո ։
Տէր սիրեցի զվայելչութիւն տանն
քո, և զտեղի յարկի փառաց քոյց ։
Մի՛ կորուսաներ ընդ ամբարիշտս
զանձն իմ, և մի՛ ընդ արս արիւնա-
հեղս զկեանս իմ ։
Որոց ձեռք իւրեանց յանօրէնու-
թեան են, և աջ նոցա լի է կաշառօք ։
Ես յանբծութեան իմում մդնացի.
փրկեա զիս տէր և ողորմեա ինձ.
Ոտն իմ կացից յուղղութեան ։
յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ ։

Տունք ԺԲ ։

ՍԱՂՄՈՍ Ի՛Զ.

Սաղմոս Դաւիթ. գինւէն եր օծեալ ։

Տէր լսես իմ և կեանք իմ՝ ես յու-
մէ՞ եւրկեսցես. տէր ապաւէն կե-
նաց իմոց՝ ես յումէ՞ դողասցայց ։
Ի մերձենալ առ իս չարսն ուտել

զմարմին իմ։ Նեղինջք իմ և Թշնա-
միք իմ նոքա սկսարացան և ան-
կան։

Թէ պատրաստեացի ի վերայ իմ
պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ։
Թէ յարիցէ ի վերայ իմ ձակատա-
մարտ, սակայն և այսուիկ ի քեզ
տէր յուսացայ։

Օ՛ի հանդրեցի՛ ՚իտեառնէ՝ և ըզ-
սոյն աղաչեմ։ քնակել ինձ ՚ի տան
տեառն զամենայն աւուրս կե-
նաց իմոց։

Տեսանել ինձ զվայելչութիւն
տեառն, և հրամանաւ տալ ՚ի տա-
ճարի նորա։

Ծածկեաց զիս ՚ի խորանի իւրում
յաւուր չարի։ ընդ յարկաւ սրբար
զիս ՚ի ծածկոյթ խորանի իւրում։
Ի վիմի բարձր սրարեր զիս, և այ-
ժմ բարձր սրա զգլուխ իմ ՚ի վե-
րայ Թշնամեաց իմոց

Ընկալեցի և մատուցից ՚ի խո-
րանի նորա պատարագ օրհնու-
թեան. օրհնեցից և սաղմոս ասա-
ցից տեառն։

Լո՛ւր տէր ձայնի իմում զի կար-
դացի առ քեզ. ողորմեա ինձ և
լուր ինձ զի քեզ ասաց սիրտ իմ և
խնդրեաց երեսք իմ զերեսս քո
տէր խնդրեցին։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո ՚ի-
նէն, և մի՛ խոտորիր բարկու-
թեամբ ՚ի ծառայ քումմէ։

Օգնական իմ լեր տէր, և մի՛ ա-
նարգեր զիս, և մի՛ թողուր զիս
աստուած փրկիչ իմ։

Հայր իմ և մայր իմ թողին զիս, և
տէր ընկալաւ զիս։

Օրէնադէտ սրա զիս տէր ՚ի ճա-
նապարհի քում. առաջնորդեա
ինձ ՚ի շաւիղս քո ուղիղս։

Վասն Թշնամեաց իմոց, մի՛ մատ-

ներ պիտի՝ ձեռս նեղչաց իմոց։
Յարեան ի վերայ իմ վկայք սե-
ղաց, և ասեցին ինձ յանօրէնու-
թեան իւրեանց։
Ո՞ւստի ստանալ զարտու-
թիւն տեառն յերկիր կենդա-
նեաց. հասեր տեառն և քաջա-
լերեաց. զօրացի սիրտ քո և համ-
բեր տեառն։

Տունք ԺԷ. Գոբզայ խլ։

ՍԱՂՄՈՍ ԻԵ.
Սաղմոս ՚ի Դաւիթ։

Վառքեզ ատեր կարդացի աստու-
ած իմ, մի՛ լռեր յինէն. մի՛ երբեք լռ-
ուեացես յինէն, նմանիցիմ այնոցիկ
որ իջանեն ՚ի գուբ։
Լուր ձեր ձայնի խնդրուած-
ոց իմոց յաղաչել ինձ առ քեզ. ՚ի
համբառնալ ձեռաց իմոց ՚ի տա-
ճար սուրբ քո։
Մի՛ հաւասարիր ընդ ամպարիշտս

զանձն իմ. մի՛ ընդ այնոսիկ որ
գործեն զանօրէնութիւն՝ կո-
րուսաներ զիս։
Ոյք խօսին զխաղաղութիւն
ընդ ընկերս իւրեանց, և չարու-
թիւն ՚ի սիրտս նոցա
Տուր նոցա ըստ գործոց նո-
ցա. ըստ անօրէնութեան գնա-
ցից նոցա հասո նոցա։
Ըստ գործոց ձեռաց նոցա հասո
նոցա՝ զհատուցումն նոցա նոցին։
Ոչ իմացան նոքա զգործս տե-
ռն, և ոչ ՚ի գործս ձեռաց նորա
հայեցան. կործանեսցես զնոսա,
և այլ մի՛ շինեսցին։
Օրհնեալ է տէր՝ զի լուաւ ձայ-
նի աղօթից իմոց. տէր օգնական
իմ և պաշտպան իմ։
Ինձ յուսացաւ սիրտ իմ, օգնե-
ցաւ և զուարձացաւ մարմին իմ.
և ես կամօք իմովք խոստովան ե-

ղէց նմա։

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ, ապաւէն փրկութեան օծեալ իւրոյ։

Փրկեա զժողովուրդս քո և օրհնեա զժառանգութիւն քո. հովուեա և բարձրացո զնոսա մինչև յաւիտեան։

Տունք ժա։

ՍԱՂՄՈՍ ԻԸ.

Սաղմոս ի Դաւիթ. օրհնութեանց նաւակատեաց Տաճարին։

Ա՛ռաւել եք տեառն որդիք առուծոյ. մատուսէք տեառն զորդիս խոյոց։

Առաւել եք տեառն զփառս և զպատիւ. մատուսէք տեառն զփառս անուան նորա. երկիրպագէք տեառն ի սրահ սրբութեան նորա։

Ձայն տեառն ի վերայ ջուրց և

առաւուած փառաց որոտաց, և տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց։

Ձայն տեառն զօրութեանց, և ձայն տեառն մեծվայելչութեանց։

Ձայն տեառն փշրէ զմայրս, և մանրէ տէր զմայրսն Լիբանանու։

Առնէ զնոսա որպէս զմատաղսն Լիբանանու. որ սիրելի է որպէս զորդիս միեղջերուի։

Ձայն տեառն հատանէ զբոց ի հրոյ. ձայն տեառն շարժէ զանապատն, և խռովեցուցանէ տէր զանապատն կադէս։

Ձայն տեառն հատուսանէ զեղջերուս, և յայտնի առնէ զանտառս։

Ի տաճարի նորա, ամենեքեան ըսկսեն փառս նմա։

Տէր զջրհեղեղս զնստուցանէ և ցածուցանէ. Թագաւորեսցէ

տէր յաւելեան։

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ տացէ. և օրհնեսցէ զժողովուրդ իւր խաղաղութիւն։

Տունք ժա։

ՍԱՂՄՈՍ Ի Թ.

Սաղմոս ՚է Դաւիթ. օրհնութիւնք նաւակատեաց Տաճարին։

Բարձր առնեմ զքեզ տէր. զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ։

Տէր աստուած իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. տէր հաներ՚ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ որ իջանեն՚ի գուբ։

Սաղմոս ասացէք առ տէառն տուրբք նորա. խոստովանեցէք յիշատակի սրբութեան նորա։

Զի պահ է՚ի բարկութեան նորա, և կեանք են՚ի կամս նորա։

Ընդ երեկոյս հանգիցէն լաւք. առաւօտու եղիցի ուրախութիւն։

Ես ասացի՚ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւելեան։

Տէր՝ի կամս քո եաւր զեղջ իմոյ զօրութիւն. դարձուցեր զերեսս քո յինէն, և ես եղէ խռովեալ։

Առ քեզ տէր կարդացի, առ աստուած իմ աղաչակեցի. զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ թէ իջանեմ ես յապականութիւն։

Արդեօք հող խոստովան առնիցի առ քեզ, կամ պատմեսցէ զճշմարտութիւն քո։

Լուաւ ինձ տէր և ողորմեցաւ, և տէր եղև ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն. զերծ յինէն զքուրձ, և ինձ զգեցոյց զուրախութիւն։

Որպէս սաղմոս ասասցեն քեզ
փառք իմ. և այլ մի՛ զղջացայց,
ոչ ասասցած իմ յաւիտեան
խոստովան եղէց քեզ։

Տունք ժբ. Դաբդայ լե։

ՍԱՂՄՈՍ Լ։

Ի կատարած. նահապակ-ին գովքեան՝
Սաղմոս Դ՛Ի-ին։

Ի քեզ տէր յուսացայ՝ մի՛ ամա-
չեցից յաւիտեան. յարդարու-
թեան քում փրկեա և ապրեցո
զիս։
Խոնարհեցո առ իս զունկն քո.
վաղվաղեա կեցուցանել զիս։
Լեր իմ աստուած պաշտպան և
տուն ապաւինի ապրեցուցանել
զիս, զի հզօրիւ իմ և ապաւէն իմ
դու ես։
Ա՛ան անուան քո առաջնորդե-
ցեր ինձ և սնուցեր զիս. և հան-
ցես զիս յորոգայթէ յայսմանէ

որ թաղուցաւ ինձ։
Դու ես պաշտպան իմ տէր, և՛ի
ձեռս քո յանձնառնեմ հոգի իմ։
փրկեցեր զիս տէր աստուած ճըշ-
մարտութեամբ քով. ատեցեր
զայնոսիկ որ պահեն զերկիւղ՛ի
սուտս։
Ես՛ յուսէր յաստուած, ցնծացայց
և ուրախ եղէց՛ի ողորմութեան
քում։
Տեսեար՛ի խոնարհութիւն իմ
և փրկեցեր՛ի վշտաց զանձն իմ.
և ոչ մատնեցեր զիս՛ի ձեռս նեղ-
չաց իմոց, և կացուցեր յանդար-
տու զոտս իմ։
Ողորմեա ինձ տէր զի նեղեալ եմ
ես. խռովեցաւ՛ի սրտմտութենէ
ակն իմ, անձն իմ և փոր իմ։
Պակասեցան՛ի ցաւոց կեանք իմ,
և ամք իմ յոգւոց եւանելոյ։
Ընդքաստացաւ՛ի տկարու թենէ

զօրու Թիւն իմ, և ոսկեղբ իմ խըս-
ոսվելցան
Քան զամենայն Թշնամիս իմ եղէ
ես նախատ դրացեաց իմոց, յոյժ
ահ և երկիւղ ծանօԹից իմոց։
Ընդ ենէքեան որ տեսանէին զիս,
արտաքս փախչէին ինէն։
Մոռացեալ եղէ ես որպէս մե-
ռեալ ի սրտէ, և եղէ ես որպէս
զանօթ կորուսեալ։
Զի լսայ ես զբամբասանս բազ-
մաց որ շուրջ էին զինեւ. ի ժողո-
վել նոցա ի միասին առնուլ զան-
ձըն իմ խորհեցան. այլ ես ի՛քեզ
տէր յուսացայ։
Ընասցի դու ես աստուած իմ, և ի
ձեռս քո է ժառանգութիւն իմ։
Փրկեա զիս ի ձեռաց Թշնամեաց
իմոց, և ի հալածչաց իմոց։
Երեւեցո զերեսս քո ի ծառայ քո,
ապրեցո զիս տէր ըստ ողորմու-

Թեան քում. տէր մի՛ յամօԹե-
ղիցի զի կարդացի առ քեզ։
Ընդ մաչեսցեն ամպարիշտք և իջցեն
ի դժոխս. և համր եղիցին շըր-
Թունք նենգաւորք, որք խօսէին
զարդարոյ զանիրաւութիւն յամ
բարտաւանու Թեան և յանգոս-
նել իւրեանց։
Որպէս զի բազում է ողորմու-
Թիւն քաղցրու Թեան քոյ տէր,
զոր պահեցեր երկիւղածաց քոց։
Ընարեր դու այնոցիկ որ յուսա-
ցեալ են ի՛քեզ, առաջի որդւոց
մարդկան։
Ընդ ծածկոյթ երեսաց քոց, ի խռովու Թենէ
մարդկան
Ծածկեցեր զնոսա ի խորանի քում,
ի հակառակու Թենէ լեզուաց։
Օրհնեալ է տէր, զի սքանչելի
արար զողորմու Թիւն իւր ի քա-

զաք ամուր։

Եա ասացի ՚ի զարմանալ իմում, թէ ընկեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց։

Վ ան այսորիկ լուար ձայնի աղօթից իմոց, յաղաղակել իմում առ քեզ։

Սիրեցէք զտէր ամենայն սուրբք նորա, զի սաստուդութիւն խնդրէ տէր և հատուցանէ այնոցիկ որ առաւել առնեն զամբարտաւանութիւն։

Քաջալերեցարուք և զօրասցին սիրտք ձեր, ամենեքեան որք յուսացեալ էք ՚ի տէր։

Տունք Իբ։

ՍԱՂՄՈՍ ԼԱ.

Ի տագնապի ՚ի Դաւիթ։

Եւ րանի՛ ուժ թոյլութիւն եղև ինձ, և ծածկեցան ամենայն յանցանք նորա։

Երանի առն՝ որում ոչ համարեցի տէր զմեղս նորա, և ոչ գոյ նենգութիւն ՚ի բերան նորա։

Լռեցի ես և մաշեցան ամենայն ոսկերք իմ, առ աղաղակել ինձ առ տէր զօրհանապազ ՚ի տուէ և ՚ի գիշեր։

Օ՜ անդրեայց ձեռն քո ՚ի վերայ իմ. դարձայ ՚ի թշուառութիւն, զի հարան յիս փուշք։

Օ՜ մեղս իմ յուցից քեզ, և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից ՚ի քէն։

Ասացի՝ թէ պատմեցից ինձէն զմեղս իմ, և դու թողեր զամենայն ամպարշտութիւնս մեղաց իմոց։

Վ ան այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք ՚ի ժամ ընդունելի։

Բայց միայն ՚ի ջուրցն հեղեղաց բազմաց, որ առ նոսա ինչ ոչ մերձեսցին։

Յնծացէք արդարք ի տէր. ուղղոց վայելէ օրհնութիւն. խոստովան եղերուք տեառն օրհնութեամբ տաւնատեաւ սաղմոսարանաւ ասացէք նմա։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր բարի է. սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ։

Ուղիղ են պատգամք տեառն և ամենայն գործք նորա հաւատովք. և սիրէ ողորմութիւն և դիրաւունս տէր։

Ողորմութեամբ տեառն լի եղև երկիր, և բանիւ տեառն երկինք հաստատեցան, և հոգւովն բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

Յողովեաց որպէս ի տիկ զջուրս ծովու. և դնէ ի խորս զդանձս։

Զու եւ ապաւէն իմ ի նեղութեանէ յայսմանէ, որ շուրջ եղեն զինեւ։ Յնծութիւն իմ փրկեա զիս յայնցանէ, որ պաշարեցին զիս։

Խնամատուն արարից զքեզ և խելամուտ ի ճանապարհ յորս գնասցես, և հաստատեցից ի վերայ քո զաչս իմ։

Մի՛ լինիք որպէս զձի և զջորիս զի ոչ գոյ ի նոսա խնամատութիւն. ի սանձս և ի դանդանաւանդս ճնշեսցես զկզակս նոցա, որ առ քեզ ինչ ոչ մերձենան։

Նաղութեանք են մեղաւորաց, բայց որ յոյսն յտէր՝ ողորմութիւն տեառն շուրջ եղիցի զնորաք։

Ուրախ եղերուք և ցնծացէք արդարք ի տէր. պարծեցարուք ամենեքեան որ ուղիղ էք սրտիւք։

երկիցե՛ի տեառնէ ամենայն եր-
կիր. և՛ ի նմանէ դողասցեն ամե-
նայն բնակիչք աշխարհի։
Նա ասաց և եղեն, ինքն հրամա-
յեաց՝ և հաստատեցան։
Տէր ցրուէ զխորհուրդս հեթա-
նոսաց. անարգէ տէր զխորհուր-
դըս ժողովրդոց, և արհամարհէ
տէր զխորհուրդս իշխանաց։
Խորհուրդ տեառն յաւիտեան
մնայ, խորհուրդ սրտի նորա
ազգէ մինչև յազգ։
Երանի ազգի որոյ տէր աստուած
օգնական է նմա. ժողովուրդ զոր
ընտրեաց՛ի ժառանգութիւն
իւր։
Յերկնից նայեցաւ տէր յամենայն
որդիս մարդկան, ի պատրաստ
բնակութենէ իւրմէ հայեցաւ
յամենայն բնակիչս աշխարհի։
Ստեղծ առանձին զսիրտս նոցա,

ի միտ առնու զամենայն գործս
նոցա։
Ոչ թէ՛ի բազում զօրս իւր ապա-
րեցի թագաւոր, և ոչ սակայ՛ի
բազում զօրութեան իւրում։
Սուտ է ձի՛ի փրկութեան իւ-
րում. ի բազում զօրութեան իւ-
րում ոչ ապրեցուցանէ զհեծեա-
լըն։
Աչք տեառն՛ի վերայ երկիւղա-
ծաց իւրոց, և ուխտ յուսան յողոր-
մութիւն նորա։
Փրկել՛ի մահու անձինս նո-
ցա. և կերակրել զնոսա՛ի սովի։
Անձինք մեր համբերեցին տե-
ռըն, զի օգնական և պաշտպան
մեր է։
Ինա ուրախ եղիցին սիրտք մեր, և
յանուն սուրբ նորա յուսասց-
ցուք։
Եղիցի ողորմութիւն քո տէր՛ի վե-

տայ մեր, որպէս յոյս սացեալք ի քեզ։

Ցունկ ժթ։

ՍԱՂՄՈՍ ԼԶ։

Սաղմոս ի Դաւիթ. ի ժամանակի երբ այլագոյացեալ էր առաջի Աբիմելէքայ. և ապա արձակեաց զնա, և գնաց։

Օրհնեցից զտէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ։

Յտէր պարծեսցի անձն իմ. լսեսցեն հեզք, և ուրախ եղիցին։

Մեծ արարէք զտէր ինձ. և բարձր արասցուք զանուն նորա՝ ի միասին։

Խնդրեցի ի տէրտէրնէ և լուաւ ինձ, յամենայնից նեղութեանէ իմմէ փրկեաց զիս։

Մատիք առ տէր և առէք լոյս. և երեսք ձեր մի՛ ամաչեսցեն։

Այս աղքատ կարդաց առ տէր, և տէր լուաւ նմա. յամենայն նեղութենէ նորա փրկեաց զնա։

Բանակ հրեշտակաց տեառն շուրջ է զերկիւղածսն իւրսն, և պահէ զնոսա։

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր. երանեալ է այր որ յուսայ ի նա։

Երկերկուք՝ ի տեառնէ ամենայն սուրբք նորա. զի ոչինչ է պակասութիւն երկիւղածից նորա։

Մեծամեծք աղքատացան և քաղցեան. բայց որք խնդրեն զտէր՝ մի՛ պակասեսցի ի նոցանէ ամենայն բարութիւն։

Եկայք որդեակք իմ և լուարուք ինձ, և զերկիւղ տեառն ուսուցից ձեզ։

Ո՛վ մարդ՝ որ կամիս զկեանս, սիրես զաւուրս քո տեսանել զի բարութիւն։

Լռեցո զլեզուդ քո ի չարութենէ. շրմունք քո մի՛ խօսեսցին զնենդ-

դութիւն։

Խոստութեա՛ն չարէ և արա զբարին. խնդրեա զխաղաղութիւն և երթ զհետ նորա։

Աչք տեառն՝ի վերայ արդարոց, ականջք նորա՝ի վերայ աղօթից նոցա։

Երեսք տեառն՝ի վերայ չարագործաց, ստամբել յերկրէ զյիշատակս նոցա։

Կարդացին արդարք առ աէր, և աէր լուաւ նոցա. յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա։

Մերձ է աէր առ այնոսիկ՝ որք մաշեալ են սրտիւք, և զխոնարհս հոգւովք ապրեցուցանէ։

Բազում նեղութիւնք են արդարոյ, յամենայնէ փրկէ զնոսա աէր. և պահէ զամենայն ոսկերս նոցա, և մի՛ ինոցանէ մի՛ փշրեսցի։

Մահ մեղաւորի չար է, բայց որ

ատեայ զարդարս ղջասցի։

Փրկէ տէր զանձինս ծառայից իւրոց. մի՛ ղջասցին ամենեքեան որք յուսացեալ են՛ի նա։

Տունք իւ. Գրգոյ իւ։

ՍԱՄՈՍ Լ.

Ի խորամ. Սաղմոս՝ ի Դաւիթ։

Դատեա տէր զայնոսիկ որք դատին զիս. մարտիր ընդ այնոսիկ որ մարտնչին ընդ իս։

Առ զվահն և զասպար քո, և արի յօգնել ինձ. հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, ասել ընդ նոսա. և ասա դու ցանձն իմ թէ փրկութիւն քո ես եմ։

Ամաչեսցեն և յամօթ լինին որ խորհին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն որ խորհին ինձ չար։

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ. և հրեշտակ տեառն

նեղեսցէ զնոսա։

Եղիցին ճանապարհք նոցա ՚ի խաւար և ՚ի գայթակղութիւն. և հրեշտակ աստուծոյ հալածեսցէ զնոսա։

գաւորի ամս նորա, աւուրս
սերնդեան մինչև յազգս։
Կայ և մնայ յաւիտեան առաջի
աստուծոյ ողորմութիւն և ճըշ-
մարտութիւն, որ խնդրեսցեն ի
նմանէ։
Այսպէս սաղմոս ասացից քեզ
յաւիտեանս յաւիտենից, և
ասացից քեզ զաղօթս իմ օր ըստ
օրէ։

Տունք բ. Գորգոյս խբ։

ՍԱՂՄՈՍ ԿԱ

Ի կիսաշաբ. ի վերայ Իդիթունայ Սաղմոս ի Դաւիթ։

Բայց միայն աստուծոյ հնազանդ
լեր անձն իմ, զի ի նմանէ է ինձ
փրկութիւն։
Նա է աստուած իմ և փրկիչ իմ,
ապաւէն իմ զի մի՛ սասանեցայց

առաւել։

Ինչև յե՞րբ յառնէք ի վերայ մարդոյ սպանանել ամենեքեան, որպէս զորմոյ թիւրելոյ և զցանդոյ մերժելոյ։

Բայց միայն զպատիւ իմ խորհեցան մերժել լինէն, և ընթացան ի ծարաւս իւրեանց։

Ընտանեաց իւրեանց օրհնէին, և սրտիւք անիծանէին։

Բայց սակայն աստուծոյ հնազանդ լեր անձն իմ, զի ի նմանէ է ինձ համբերութիւն։

Ապաւէն իմ եւ փրկիչ իմ, ապաւէն իմ՝ զի մի՛ սասանեցայց։

Յաստուծոյ է զօրութիւն իմ և փառք իմ. աստուած օգնութեան իմոյ, յոյս իմ է առ աստուած։

Յուսացարուք ինձ ամենայն ժողովուրդոյ. սիրեցէք առաջի նորա զիրաս ձեր, զի աստուած օգնական է մեր յաւիտեան ժամանակաց։

Սակայն ընդունայն են որդիք մարդկան, սուտ են որդիք մարդկան. ի կշիռս իջանեն միանգամայն և ինքեանք յունայնութեան են նմանեալ։

Մի՛ յուսայք յանիրաւութիւն, և յափշտակութեան մի՛ ցանկայք, և մեծութիւն թէ առնուցէ՝ մի՛ յօժարեսցին սիրտք ձեր։

Միանգամ խօսեցաւ աստուած, և երկուս զայս լուաք։

Յաստուծոյ է զօրութիւն, և քո է ողորմութիւն, և դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս նորա։

ՍԱՂՄՈՍ ԾԵ

Աշմս Դ Դաւիթ. Ինչբեռ նոքեր նա յանապատ անբ
նչեասպանի։

Աստուած աստուած իմ ես առ քեզ առաւօտ առնեմ. ծարաւեաց առ քեզ հոգի իմ, քանի՛ պատիկ ևս և մարմին իմ։

Որպէս երկիր անապատ և անջուր, ուր ոչ գոյ ինձ ճանապարհ։

Այսպէս ի տեսլեան երևեցայց քեզ տեսանել զիշխանութիւն քո և զփառս քո։

Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան զկեանս իմ, և շրթունք իմ գովեսցեն զքեզ։

Այսպէս օրհնեցից զքեզ ի կեանս իմ, և յանուն քո համբարձից զձեռս իմ։

Որպէս ի ճարպոյ պարարտութենէ լցցի անձն իմ, շրթամբք ցընծասցէ

ծոյլ[1] ձեռամբ օրհնեսցէ զքեզ բերան իմ։

Ո՛ի զի էիշիր զքեզ յանկողնի իմում, ընդ առաւօտս կանխեալ խոսեի ընդ քեզ։

Ո՛ի եղեր իմ օգնական և ի հովանի թևոց քոց ցնծասցայց։

Կպաւ զկնի քո անձն իմ և զիս ընկալաւ աջ քո, և նոքա ի նանիր խնդրեցին զանձն իմ։

Անցեն ի ներքոյ անդնդոց երկրի. մատնեսցին ի ձեռս սրոյ, և բաժինք աղուէսուց եղիցին։

Թագաւոր յուսասցի ի տէր. գովեսցին ամենեքեան որ երդնուն նմա, խցցին բերանք այնոցիկ որ խօսին զանիրաւութիւն։

ՍԱՂՄՈՍ ԿԹ.

Ի կոպաց. Աղմս Ի Դաւիթ։

Լուր առուած աղօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ. յերկիր ղէ թշնամւոյն վրկեա զանձն իմ։

Ծածկեացես զիս ի ժողովոյ չարաց ի բազմութենէ որ գործեն զանօրէնութիւն։

Ող սրեցին որպէս սուսեր լեզու իւրեանց, լարեցին զաղեղունս իւրեանց յիւրս դառնութեան։

Ձգել ի գաղանիս այնոցիկ ոչ ուղիղն սրտիւք, յանկարծակի ձգեսցեն ինոսա և մի՛ երկեսցեն։

Ող զօրացուցին յանձինս իւրեանց զբանս չարութեան. խորհեցան թաղուցանել ինձ որոգայթ և ասացին ոչ տեսանէ զայս

տէր։

Քննեցին զանօրէնութիւն, պատրաստեցան ի քննել զքննութիւն։

Մատիկն այր ի խորութիւն սրտի իւրոյ, և բարձր եղիցի աստուած։

Նետք տղայոց եղեն վէրք նոցա, տկարացան ի նոսա լեզուք իւրեանց, և խռովեցին ամենեքեան որք հայէին ընդ նոսա։

Երկեաւ ամենայն մարդ, և պատմեցին զգործս աստուծոյ. և զբարութիւն նորա ի միտ առին։

Արդար եղիցի արդար ի տէր, և յուսացին ի նա. նովաւ գովեցին ամենեքեան որք ուղիղ են սրտիւք։

ՍԱՂՄՈՍ ԿԴ.

Ի կոպրաց. Աղմս ՚ի Դաւիթ: Օրհնութիւն նրբութեան, նշխարելոյ և ծողովրդեանն յորժամ ՚ի պանդխտութենէն կոչին ելանել:

Վ Հեզ վայելէ օրհնութիւն աստուած ՚ի սիոն, և քեզ տացին աղօթք յերուսաղէմ:

Լսեր աղօթից իմոց, ցի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

Բանք անօրինաց զօրացան ՚ի վերայ մեր. զամպարշտութիւնս մեր դու քաւեցես:

Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և բնակեսցեն ՚ի գաւիթս քո:

Լցցուք մեք ՚ի բարութենէ տանքո, սուրբ է տաճար քո սքանչելի ՚ի արդարութեամբ:

Լսեր մեզ աստուած փրկիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկրի և որ ՚ի ծովս հեռի:

Ո պատրաստէ զլերինս զօրութեամբ իւրով, և զպեցեալ է զօ-

րութեամբ:

Ո խաղեցուցանէ զմեծութիւն ծովուս, և զձայն ալեաց նորա ցնծացուցանէ:

Խռովեսցին հեթանոսք, և երկիւղեն բնակիչք երկրի ՚ի նշանսդ քոց:

Ելս առաւօտս՝ ընդ երեկոյս զուարճասցին. հայեցար յերկիր արբեցուցեր զնա, և բազումս արարեր զմեծութիւն նորա:

Գետն աստուծոյ լի եղեւ ջրով. պատրաստ արարեր զկերակուր նորա, ցի այսպէս է պատրաստութիւն:

Օգակօս նորա արբեցուցեր, և բազմ ատարեր զարմանս նորա:

Ի օրհնել նորա զուարթ եղիցի բոյս նորա. օրհնեսցի պատկ տարուդ ՚ի քաղցրութեան քումմ:

թեամբ. արտարտուղին գեղեց-
կութիւնք անապատի։
Բլուրք ցնծութիւն զգեցցին,
և զգեցցին խոյք մաքեաց։
Հովիտք բազում արտացեն ցո-
րեան, աղաղակեսցեն և օրհնեսց-
ցեն։

Տուն ԺԶ։

ՍԱՂՄՈՍ ԿԵ։

Ի կոպարած. Սաղմոս Դաւիթ. յարութեան։

Աղաղակեցէք առ աստուած ա-
մենայն երկիր. սաղմոս ասացէք
անուան նորա, և տուք զփառս
օրհնութեան նորա։
Ասացէք աստուծոյ, ո՛րպէս զի ա-
հեղ են գործք քո. ի բազում զո-
րութեան քում մատնեցին քեզ թշ-
նամիք քո։
Ամենայն երկիր երկրպագեսցեն
քեզ, սաղմոս ասասցեն քեզ. և
սաղմոս ասասցեն անուան քում։

Եկայք և տեսէք զգործս աստու-
ծոյ, որպէս զի ահեղ են խորհր-
դով քան զամենայն որդիս
մարդկան։
Ո դարձոյց զծովն ի ցամաք, և
ընդ գետս անցին յոտանաւոր։
Անդ ուրախ եղիցուք մեք ի նա,
որ տիրէն զօրութեամբ իւրով
յաւիտեանից։
Աչք նորա ի հեթանոսս հային.
որք դառնացուցին զնա մի՛ բար-
ձրասցին յանձինս իւրեանց։
Օրհնեցէք հեթանոսք զաստ-
ուած մեր, լսելի արարէք զձայն
օրհնութեան նորա։
Ընդ որ եւս զանձն իմ՛ի կեանս,
և ոչ եւս դողութիւն ոտից մերոց։
Փորձեցեր զմեզ աստուած և քըն-
նեցեր, որպէս և քննի արծաթ։
Ինջուցեր զմեզ յորսպայիծ, եդիր
նեղութիւն ի թիկունս մեր, և

անցուցեր զմարդիկ ի վերայ գլուխ
խոց մերոց։

Ընկալաք մեք ընդ հուր և ընդ ջուր,
և հաներ զմեզ ի հանգիստ։

Ամէն ի տուն քո պատարագօք.
տացից քեզ զուխտս իմ զոր խոստա-
ցայն քեզ չորեքունք իմ, զոր բե-
րայն իմ ի հօտէ ցաւս ի նեղութեան։
Ողջակէզս ուղղիցս մատու-
ցից քեզ խոյովք և խնկովք. և
քեզ մատուցից զուարակս և նո-
խազս։

Նկայք լուարուք ինձ և պատմե-
ցից ձեզ ամենեքեան զոր եղեն
ինձ յաստուծոյ, զոր ինչ արար ան-
ձին իմոյ։

Ընդ նա բերանով իմով կարդացի,
և բարձր արարից զնա լեզուս
իմով։

Օմեղս էի ես առեանէի ի սրտի ի-
մում, մի՛ լուիցէ ինձ տէր։

Վայն այսորիկ լուաւ աստուած
և նայեցաւ ի ձայն խնդրուա-
ծոյ իմոյ։

Օրհնեալ է աստուած որ ոչ ի
բացէ արար զաղօթս իմ, և ոչ
զողորմութիւն իւր յինէն։

Տուն ԺԹ.

ՍԱՂՄՈՍ Կ.Զ.

Ի կոպարաք. ընդ օրհնութիւնս. Սաղմոս երգոյ։

Լսեաւ աստուած ողորմեա ամեզ և օրհ-
նեա զմեզ, երեսեցոյ զերեսաքո ի
մեզ և ողորմեա մեզ։

Ճանաչելի երկրի զճանապարհս
քո, յամենայն ազգս զփրկու-
թիւնս քո։

Խոստովան եղիցին քեզ ժողո-
վուրդք աստուած, խոստովան ե-
ղիցին քեզ ժողովուրդք ամե-
նայն։

Ուրախ եղիցին և ցնծասցեն ա-
զինք, զի դու դատիս զժողովուր-

դես յուղու Թիւն. և ապա
երկրի դու առաջնորդես։
Խաստուան եղիցին առ քեզ ժո-
ղովուրդք ասուած. գոհացին
զքէն ժողովուրդք ամենայն։
Երկիր եա զպտուղ իւր, և օրհ-
նեաց զմեզ ասուած ասուած
մեր։
Երկնչեսցեն զմեզ,
և չի նահանջ երկիւղն ամենայն
ծագաց երկրի։

Տունք է ։ Գոլգոթա խե ։

ՍԱՂՄՈՍ կե.

Ի կիրակէ. Սաղմոս Դաւիթ։

Յարիցէ ասուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա, փա-
խիցեն առելիք նորա յերեսաց
նորա։
Որպէս պակասէ ծուխ՝ պակա-
սեսցին, որպէս հալի մոմ առաջի
հրոյ՝ այնպէս կորիցեն մեղաւորք

յերեսաց աստուծոյ։
Արդարք ուրախ եղիցին ցըն-
ծասցեն առաջի նորա, և զուար-
ճասցին յուրախութեան իւ-
րեանց։
Օրհնեցէք զաստուած և սաղ-
մոս ասացէք անուան նորա. ճա-
նապարհ արարէք այնմիկ որ նըս-
տի ընդ արևմուտս և տէր է
անուն նորա։
Ցնծասցեն առաջի նորա, և խռ-
ովեսցին յերեսաց նորա։
Որ հայրն է որբոց և դատաւոր
այրեաց, աստուած՝ ի տեղի սրբո-
թութեան իւրում։
Աստուած բնակեցուցանէ զմիա-
կրօնս ի տան, և հանէ զկապեա-
լսն քաջութեամբ իւրով, սոյն-
պէս և զդառնացողսն որ բնա-
կեալ են ի գերեզմանս։
Աստուած ընդ ելանելդ քեզ առա-

և Թիւնաւէջքնորա՝ի գոն ոսկւոյ։
Թևք աղաւնւոյ արծաթամատաղ,
ննջեսջիք՝ի մէջ վիճակաց։
Թեւք աղաւնւոյ ոսկեզարդ, և
ժանեակ յետուրի, Թէպէտ և
ւոյ, գեղեցկուԹիւն տան քո բա-
Թոգաւոր զօրուԹեամբ քում։
րանեն զօրուԹեամբ բազմաս։
տէր տայէ զբան ոյք աւետա-
Թեամբ քովաղքատի առաւած.
Պատրաստ արուարեր քաղցրու-
քո բնակեսցեն՝ի նմա։
Հաստատեցեր զնա, և գազանք
պէտ հիւանդացաս, սակայն դու
աճ ժառանգուԹեան քում մ'Թէ-
Ընձեռե կամաց պատրաստեցեր
աստուծոյ իսրայէլի։
սաց աստուծոյ՝ի սինէ, առաջի
Քանզի և երկինք յօդեցին յերե-
շարժեցաւ։
նել-քեզ ընդ՝ անապատ երկիր

ի դուռս արել երկնաւորին զԹա-
գաւորս՝ի վերայ նորա՝ ձիւնաս-
պին՝ի սալմոն։
Լեառն աստուծոյ լեառն պա-
շարտ, լեառն մածեալ և լեառն
պարարտ, և զի՞նչ կարծէք լե-
րինք հպարտացեալք։
Լեառն ընդ որ հաճեցաւ աստ-
ուած բնակիլ՝ի նմա. քանզի և
տէր իսկ բնակեսցէ՝ի նմա խս-
պառ։
Կառք աստուծոյ բիւրապատիկք
հազարք ուղիղք, և տէր՝ի նո-
սա՝ի սինէ սրբուԹենէ իւրմէ։
Ել՝ի բարձունս գերեաց զգե-
րուԹիւն. առ առաւ բաշխ-
եաց պարգեւս և եաս որդւոց
մարդկան. քանզի Թերահաւա-
տից և բնակեալ եղիցի՝ի նմա։
Տէր աստուած օրհնեալ, օրհ-
նեալ տէր զօրհանապազ, առաջ

Յեկեղեցիս օրհնեցէք զաստու-
ծոյ։

Կանխեցին իշխանք հանել զօրհ-
նութիւն ի մէջ կուսանաց և
մերոյ արբոյ։

Աղաչեցին զիս ի տաճարին զի
դնացի քով աստուածոյ Թագա-
ւորին։

Ուրախ Թացցի ասեն քո յարեան,
և լեզուք շանց քոց յարենէ Թըշ-
նամեաց քոց։

Զայն ի դուրս կորզեցից։

Որպէս Թացցի ասեն քո յարեան,
զայն ի դուրս կորզեցից։

Ասաց տէր ի խորոց անդնդոց
դարձուցից, և ի միջոց ծանեաց
օրէնութեան իւրեանց։

Եւ զհերն կարձովին որ գնան յան-
դիմաց զգեստից Թշնամեաց մերոց, և
տայցէ սակայն աստուած վիշտեսցէ
զնոսա մերձ ի մեզ։

Հոս։

Ընտրեաց մեզ աստուած կեն-
սատու, և ի տեառնէ են ելք մա-
հու։

Յեկեղեցիս օրհնեցէք զաստու-

ած, և զտէր յաղբերոցն Իսրա-
էլի։

Ընդ բնակութիւն ի տղայոց Թե-
զամանակի, իշխանք յուդայ ա-
ոաջնորդք նորա, իշխանք զաբու-
ղոնի և իշխանք նեփթաղիմայ։

Հրամայեա աստ զօրութիւնդ
քո. զօրացո զայս զոր հաստա-
ացեր ի մեզ։

Ի տաճարի քում ի երուսաղէ-
մէ քեզ մատուսցեն Թագաւորք
զպատարագս։

Աստուած ի գազան եղեգան, ի
ժողովս զուարակաց և ի գաս
երկնից։

Խոտեացին այնոքիկ՝ որ ընտրեալ
են արծաԹով. ցրուեա զհեԹա-
նոսս և զգ կամին ընդ պատերա-
զմ։

Ելիցեն հրեշտակք յեգիպտո-
ս. հնդիկք յառաջապահն ձեռն-

տու լինին առ աստուած։

Ա֊տագաւորութիւնք երկրի օրհ֊
նեցէք զաստուած և սաղմոս ա֊
ցէք տեառն։

Ա՛նանապարհ արարէք այնմիկ որ
նստի երկնից յերկինս ընդ արե֊
ւելս։

Ահա տայէ զձայն իւր ի ձայն զո֊
րութեան. և տուք զփառս աս֊
տուծոյ։

Ի վերայ իսրայէլի մեծվայելչու֊
թիւն նորա. և զօրութիւն նո֊
րա ի մինչև յամպս երկնից։

Ահաբեղի է աստուած ի վերայ
սրբոց իւրոց, աստուած իսրայէ֊
լի։

Նա տայէ զօրութիւն հաստա֊
տութիւն ժողովրդեան իւրոյ.
օրհնեալ է աստուած։

ՍԱՂՄՈՍ ԿԸ.

Ի խոպոպաց. վասն շաբաթուց. Սաղմոս ՚ի Դաւիթ։

Ահեցո զիս աստուած զի հասին
ջուրք յանձն իմ, ընկղայ ես ՚ի
խորս անդնդոց ուր ոչ գոյ հինձ
հանգիստ։

Եկի ես ՚ի խորս ծովուս, և շրջանք
ընկղմեցին զիս։

Վաստակեցի ես առ աղաղակել,
և կերակերեցաւ կոկորդ իմ։

Նուաղեցին աչք իմ, առ յուսալ
հինձ առ տէր աստուած իմ։

Բազում եղեն քան զհեր գլխոց
իմոց, որք ատեին զիս ՚ի տարա֊
պարտուց։

Օրացան յիս թշնամիք իմ և ա֊
տելիք իմ ՚ի նանիր. ինչ զոր ոչ յա֊
փշտակեաըն է՝ տուժէի նոցա։

Աստուած դու ծանեար զանզգա֊
մութիւն իմ, և յանցանք իմ ՚ի
քէն ոչ ծածկեցան։

քէն ոչ ծածկեցան։
Մի՛ ամաչեսցեն վասն իմ որ համ-
բերեն քեզ սէր սէր զօրու-
թեանդ. մի՛ պատկառեսցեն վասն
իմ այլ խնդրեն զքեզ աստուած
իսրայէլի։
Վասն քո համբերեցի նախատանաց,
և ծածկեաց ամօթ զերեսս իմ։
Օտար եղէ ես յեղբարց իմոց,
հիւր որդւոց մօր իմոյ։
Նախանձ տան քո եկեր զիս, և
նախատինք նախատողաց քոց անկան
կան ի վերայ իմ։
Խոնարհեցուցի պահօք զանձն իմ
և եղեն ինձ այս նախատինք. ա-
րարի զհանդերձս իմ քուրձ և
եղէ յառակ նոցա։
Ոմանք խորհէին այլ նստէին
առ դրունս. զիս ասէին առնէին
որ ըմպէին գինի։
Եւ յաղօթս կայի առ քեզ տէր ի

ժամանակ ընդունելի։
Ածուած ի բազում ողորմու-
թեան քումդ լուր ինձ, ի ճշմար-
տութիւն փրկութեան քո։
Ապրեցո զիս ի կաւոյ զի մի՛ ընկ-
ղմայց. ապրեցայց ես յատելեաց ի-
մոց և ի խորոց ջուրց բազմաց։
Մի՛ ընկղմեցին զիս պտոյտք ջուրց,
և մի՛ ընկղմեսցեն զիս անդունդք
խորոց. չրհոր մի՛ կափուսցէ ըզ-
բերան իւր ի վերայ իմ։
Լուր ինձ տէր զի քաղցր է ողոր-
մութիւն քո, ըստ բազում գո-
թութեան քո հայեա յիս, և
մի՛ դարձուցաներ զերեսս քո ի
ծառայ քումմէ, զի նեղեալ եմ
ես վաղվաղակի լուր ինձ։
Հայեա յանձն իմ և փրկեա զիս,
և վասն թշնամեաց իմոց ապրեցո
զիս։
Օ՛ի դու գիտես զնախատինս իմ,

զամօթ իմ և զպատկառանս իմ։
Ահաւադիկ քո են ամենայն նեղիչք
անձին իմոյ. նախատանաց համ
քեր սիրտ իմ եւ թշուառու-
թեան։
Կին ունէի թէ ո՛ տրտմեցի ընդ
իս, և ոչ ոք էր. և մխիթարիչ
ինձ ոք ոչ գտաւ։
Եւտուն ի կերակուր ինձ լեղի, և
ի ծարաւս իմ արբուցին ինձ քա-
ցախ։
Եղիցին սեղանք նոցա առաջի նո-
ցա յորոգայթ, ի հատուցումն
և ի գայթակղութիւն։
Խաւարեսցին աչք նոցա զի մի՛
տեսցեն, և զմիխուն նոցա հա-
նապազ կորացո։
Արկ ցեա ի վերայ նոցա զբարկու-
թիւն քո. սրտմտութիւն բար-
կութեան քո հասցէ ի վերայ նո-
ցա։

Եղիցին բնակութիւնք նոցա ա-
ւերակ, և ի յարկս նոցա մի՛ որ
իցէ որ բնակիցէ։
Զի զոր դուն հարեր՝ հալածեցին,
և ի վէրս ցաւոց իմոց յաւելին։
Դիր զպէս ի վերայ մեղաց նոցա,
զի մի՛ մտցեն յարդարութի-
քո։
Ջնջեսցին նոքա ի գրոց կենաց
քումմէ կենդանեաց, և ընդ արդարս
քո մի՛ գրեսցին։
Ես քաոս և ցաւած եմ ես. փրկու-
թիւնդ քո աստուած ընկալցի զիս։
Օրհնեցից զանուն աստուծոյ ի-
մոյ օրհնութեամբ, և բարձր ա-
րարից զնա գովութեամբ։
Զոր մատաղ, որ բերէ եղջիւր
և կճղակս։
Տեսցեն աղքատք և ուրախ եղի-
ցին. խնդրեցէք զաստուած և

կեցցեն անձինք ձեր։

Օ՛ի լսաւ տէր տնանկաց, և զբ-
կապեալս իւր ոչ արհամարհեաց։
Օրհնեսցեն զնա երկինք և երկիր,
ծով և ամենայն որ գնոսա ՚ի նո-
սա։

Ընտուաձ փրկէ զսիովն, և շինեա-
ցին քաղաքք հրեաստանի. շինեա-
ցեն բնակեսցեն և ժառանգեսց-
ցեն ՚ինքա։

Օ՛աւակ ծառայից քոց հաստա-
տեսցի անդ, և որ սիրեն զանուն
քո բնակեսցեն ՚ի նմա։

Տունք լը։

ՍԱՂՄՈՆ ԿԹ.

Ի կոպարած. ՚ի Դաւիթ առ Հայկապակ երկրէն վնա Տէառն։

Ընտուաձ յօգնել ինձ նայեաց,
և տէր յընկերել ինձ փութա։
Ընդհաչեսցեն և յամօթ լիցին, որ
խնդրեն զանձն իմ. դարձցին յե-

տս և ամաչեսցեն որ խորհին
ինձ չար։

Դարձցին առ ժամայն ամաչե-
ցեալ, որ ասեին ինձ վաշ վաշ։
Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ,
ամենեքեան որ խնդրեն զքեզ
տէր։

Ընասցեն յամենայն ժամ՝ մեծ է
աստուած, և որ սիրեն զփրկու-
թիւնդ քո։

Եա աղքատ և տնանկ եմ աստ-
ուած օգնեա ինձ. օգնական և
փրկիչ իմ ես և տէր իմ մի՛ յա-
մենար։

Տունք ղ։ Գրգոյս խգ։

ՍԱՂՄՈՍ Հ.

Ի կոպարած. որդւոյն Յովնադաբայ. յետ առաջնոյ գերութեանն.
Սաղմոս ՚ի Դաւիթ։

Ի քեզ տէր յուսացայ, մի՛ ամա-
չեցից յաւիտեան. յարդարու-
թեան քում փրկեա զիս և ապ-

որպէս օրհնեցիր զԱբրահամ, զօր-
դի բերան իմ դուռն Թեառն,
Լեր իմ աստուած ապաւէն և
անդի տուր ինձ զքեզ։
Խոնարհեցուսո իմ զսրտին, և
կեցո զիս։
Լեր իմ աստուած ապաւէն և
անդի տուր ինձ զքեզ։
Ընտրեա իմ փրկեա զիս ի ձե-
ռաց մեղաւորի, ի ձեռաց անօ-
րինի և անիրաւի։
Դու ես համբերութիւն իմ ամ-
ենայն, տէր յոյս իմ ի մանկու-
թենէ իմմէ։
Ի քեզ հաստատեցայ ես յարդան-
դէ, յորովայնէ մօր իմոյ դու ես
ապաւէն իմ, և առ ի քէն է օգ-
նութիւն իմ յամենայն ժամ։
Որպէս զի նշաւակ եղէ ես բազ-
մաց, և դու օգնական իմ և հզօ-
րիչ իմ։
Ի ջուր բերան իմ դուռն Թեառնէ,
որպէս օրհնեցիր զԱբրահամ, զօր-

Հանապազ զՄեծ վայելչութիւնս
քո։
Ամ՛ ընկենուր զիս ետր ի ժամա-
նակս ծերութեան. ի պակասել
զօրութեանմոյ մի լքաներ զիս։
Ընտրեալն Թշնամիք իմ ինձ և որ
պաշարեցին զանձն իմ, խորհե-
ցան ի միասին և ասացին։
Ընտրեա եմ Թող զնա, հալածեա-
ցուք և հասցուքնմա, զի ոչ ոք է
որ փրկէ զնա։
Ընտրեա իմ ամ՛ հեռի առնէր
լինէին, և աստուած յօգնել ինձ
նայեաց։
Ամաչեացեն և պակասեացին որ
չարախօս կային զանձն իմմէ.
պատեցին զամօթ և զպատկառա-
նըս ոչ խնդրեին ինձ չար։
Ես յամենայն ժամ յուսացայց, և
յաւելից յօրհնութիւնս քո։
Բերան իմ պատմեսցէ զարդա-

թութիւնդ, զօրհանապազ ըղձ
պովութիւնդ։
Արդեօք ոչ թէ խարդախութիւն
ինչ պիտէի զգալութեան, այլմը-
տից ՚ի զօրութիւնս տեառն. և
տէր յիշեցի զարդարութիւնս
քո միայն։
Ընտուած իմ ուսուցեր զիս ՚ի
մանկութենէ իմմէ. և ցարդ եւս
պատմեցից զարդարութիւնդ քո։
Մինչև յալեւորել և ՚ի ծերանալ,
աստուած իմ մի՛ թողուր զիս։
Մինչև պատմեցի բազուկ քո
ազգի ամենայնի որ գալոցն է։
Օ զօրութիւնդ քո և զարդարու-
թիւնս մինչ ՚ի բարձունս, զոր
արարեր մեծամեծս. աստուած ո՞
նման է քեզ։
Որչափ ցուցեր ինձ նեղութիւն
բազում և չարչարանս, դարձեր
զիս և առաքեցեր զիս, և ՚ի խորոց եր-

կրէ հաներ զիս։
Յաճախեցեր ՚ի զօրութիւնդ,
դարձեր և մխիթարեցեր զիս, և
՚ի խորոց երկրէ միւսանգամ հա-
ներ զիս։
Ընդ և ես խոստովան եղէց քեզ
՚ի պատրաստութիւն սաղմոսաց
ճշմարիտդ աստուած. սաղմոս ա-
սացից քեզ օրհնութեամբ սուր-
բըդ իսրայէլի։
Ցնծասցեն շրթունք իմ յորժամ
սաղմոս ասիցեմ քեզ, և անձն իմ
զոր և փրկեցեր։
Լեզու իմ զօրհանապազ
խօսեսցի զարդարութիւնդ քո։
Ի ժամանակի որպէս յամօթ լի-
ցին և ամաչեսցեն, որք խորհեին
ինձ չար։

Ա՛ստուած պիրաւունս քո ար-
քային տուր, զարդարութիւնս
քո որդւոյ թագաւորի։
Դատել ժողովուրդ քո արդա-
րութեամբ, և զաղքատս քո ի-
րաւամբք։
Ընդեն լերինք զխաղաղու-
ժողովրդեան, և բլուրք զարդա-
րութիւն։
Իրաւ արասցէ աղքատաց ժող-
վըրդեան, և կեցուսցէ զորդիս
անանկաց, և խոնարհեցուսցէ
զամբարտաւանս։
Կացցէ և մնասցէ ընդ արեւու
յառաջքան զլուսին, ազգէ ազգ
հետ յազգ։
Ջուր որպէս զանձրեւ ի վերայ դեղ-
ման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։
Ծաղեսցի յաւուրս նորա արդա-

րութիւն, բազում խաղաղու-
թիւն, մինչև կատարեսցի լուսին։
Տիրեսցէ նա ի ծովէ մինչև ի ծով, ի
գետոյ մինչև ի ծագս աշխարհի։
Ընդ աջի նորա նախ հնդիկք անկ-
ցին, և թշնամիք նորա հող կե-
րիցեն։
Թագաւորք Թարսի և կղզեաց
պատարագս մատուսցեն նմա.
Թագաւորք արաբացւոց և սաբա-
պատարագս բերցեն նմա։
Երկիրպագեսցեն նմա ամենայն թա-
գաւորք երկրի, և ամենայն ազ-
գք ծառայեսցեն նմա։
Ո՛ի փրկեաց զաղքատն ի հզօրէ,
զաղքատն և զտնանկ որոյ ոչ է
իւր օգնական։
Ընդհատեսցէ նա յաղքատն և ի
տնանկ, և զանձինս տնանկաց
կեցուսցէ. ի վաշխոյ և յարատ փըր-
կեսցէ զանձինս նոցա։

պատուական է անուն նորա ա-
ռաջինոցա, կեցցէ և տացի նմա
յոսկւոյն արաբացւոց։
Յաղօթս կացցեն առ նա յամե-
նայն ժամ, և զօրհանապազօրհ-
նեսցեն զնա։
Եղիցի հատատուԹիւն ընդ ամե-
նայն երկիր, և ի վերայ գլխոց լե-
րանց։
Բարձրասցի քան զլիբանան պը-
տուղ նորա. ծաղկեսցի ի քա-
ղաքի տեառն որպէս խոտ երկրի։
Եղիցի անուն տեառն օրհնեալ
յաւիտեան, զի յառաջ քան զա-
րեւ է անուն նորա։
Ի նա օրհնեսցին ամենայն ազգք
երկրի, ամենայն ազինք երանի-
ցեն նմա։
Օրհնեալ տէր աստուած իսրայէ-
լի որ առնէ սքանչելիս միայն, և
օրհնեալ է անուն սուրբ փառաց

նորա յաւիտեան. լցցի փառօք
նորա ամենայն երկիր. եղիցի եղ-
ցի։

Տունք ի. գործոյս խզ.
կանոնս գործոյս է. սաղմոս ժէ.

Տունք մձ.

ԱՂՕԹՔ ԱՆՆԱՅԻ ՄՕՐՆ ՍԱՄՈՒԷԼԻ

ա թագ. ք։

Յաստատեցաւ սիրտ իմ ի տէր,
և բարձրացաւ եղջիւր իմ յաս-
տուած փրկիչ իմ։
Լինդարձակեցաւ բերան իմ ի վե-
րայ թշնամեաց իմոց. ուրախ ե-
ղէց ի փրկութեան քումմ։
Զի ոչ գոյ սուրբ որպէս զտէր,
և ոչ արդար որպէս զաստուած
մեր, և չիք սուրբ բաց յաստու-
ծոյ մերմէ։
Մի՛ պարծիք և մի՛ խօսիք գամ-
բարտաւանս, և մի՛ ելցէ ընդ բե-

Ա՛յսու ցանէ զնոսա իշխանս ընդ
իշխանս ժողովրդեան, և ամե՛ն
վասու ժառանգեցուցանէ նո-
ցա։

Կատարէ զուխտս խոստմանց,
և օրհնեաց զամս արդարոյ։

Օ՛ւ ոչ թէ իբրև զօրութեամբ
զօրանայ հզօր, այլ տէր տակաւ
առնէ զհակառակորդս իւր, տէր
սուրբ է։

Ա՛ի պարծեցի խորհրդականն՝ ի
խորհուրդս իւր, և մի՛ պարծե-
ցի հզօրն՝ ի զօրութեան իւրում,
և մի՛ պարծեցի մեծն՝ ի մեծու-
թեան իւրում։

Այլ որ պարծին՝ ի տէր պարծե-
ցի, ի խորհուրդս դիտութեան
զտէր ճանաչել։

Առնել իրաւունս և գործել ար-
դարութիւն՝ ի վերայ երեսաց եր-
կրի։

րանս ձեր բան հպարտ մեծաբա-
նութեան։

Այսուհետև պիտութեանց տէր,
ասասած պատրաստէ իւրով ի-
մաստութեամբ զպիտութիւն
յարտասած իւր։

Հզօրաց հատատղեղութիւնք թու-
ցան, և տկարքն վարեցան զօրու-
թեամբ։

Յաղթ և լիք հացիւ նուաղեցին,
և քաղցեալք լցին զերկիր։

Մինչև ցնաւ եւթն, և բազում-
ցին նուաղեալք ի ցնծութեան։

Տէր մեռուցանէ և տէր կեցու-
ցանէ, իջուցանէ՝ ի դժոխս և հա-
նէ։

Տէր աղքատացուցանէ և տէր
մեծացուցանէ. խոնարհ առնէ
զամբարտաւանս մինչև յերկիր,
և բարձր առնէ զտառապեալս
յաղբեւրայ։

վ֊ան ամենայն անձանց քրիստոնէից և տանց հաւատացելոց, զտէր աղաչես։
վ֊ան որք ՚ի լերինս յայրս և ՚ի փոսսերս բնակեալ են սուրբ հարքն մեր, զտէր ա։
վ֊ան որք սազմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց, զտէր աղաչեսցուք։
վ֊ան հոգւոցն հան։ Ն֊ե եւս միաբան։
Օ֊անձինս։ Աղօրմեաց։

Ընդ֊։

Պոհանամք զքէն տէր աստուած մեր. որ զարթուցեր զմեզ ՚ի հանգստեանն քումէ շնորհիւ ողորմութեան քո։ Օ֊արհն զոգ միտս մեր արդարութեամբ առ քեզ տէր աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո։ Ակեսցէ և բնակեսցէ առ մեզ աստուածութիւն քո, և ողորմութիւն քո հովանի և պահապան լեցի ՚ի վերայ պաշտօնէից քոց։ Ն֊ե զմեզ զծառայս քո արժանի արա ՚ի տուէ և ՚ի դէշերի և յամենայն ժամու միշտ խորհել ՚ի սէր պատուիրանաց քոց։ Ն֊ե պոհութ փառաւորել զՀայր և զորդի և զսուրբ հոգի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Տէր ելոյ երկինս և որոտաց, և ինքն քնդատ առանց բարբառելոյ։ Տայ զօրութիւն Թագաւորին մերոյ, և բարձր առնէ զեղջիւր օծելոյ իւրոյ։
փառք հօր և որդւոյ և։

ՄԱՂԹԱՆՔ

Բարձրացաւ եղջիւր իմ յաստուած փըրկիչ իմ։ հաստատեցաւ սիրտ իմ ՚ի տէր, տեր բամբ հաւատով։
Մարդասէր տէր, վան սրբուհոյ անուն քոյ մօր քո և կուսի, և վան խաչի քո պատուականի, ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ։

Վ֊արդ և աղբ֊։ Աղօրմեա և ՚ի ներումն կանոնացն։

Վ֊ան գոհանելոյ մեզ շնորհ և ողորմութիւն ՚ի բարեբար տեառնէ մերմէ, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։
Վ֊ան փրկելոյ զմեզ ՚ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի, զտէր աղաչեսցուք։

Աստուածային պատարագ։
Ընդ-ծոյ երիցապետական։

Աւետարանական ճշմարտութեան և առաքելական
մահուան քոյ, զոր ես քրիստոս աստուած
փրկիչ մեր։ Որ շնորհեցեր մեզ՝ի մէջ գալ
շերի յատնել և խոստովան լինել առ քեզ
վասն իրաւանց և արդարութեան քո։
Նա այժմ աղաչեմք զքեզ տէր աստուած
մեր, արա զմեզ արժանս և պատրաստս
՝ի ժամ առաւօտու ընդ սուրբս քո։ Նա
ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ
ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Մաղխանդ։

Գոհութեամբ և ճշմարիտ խոստովանու-
թեամբ անպատում փառաւորեմք զհայր
և զորդի և զսուրբ հոգին, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից ամէն։
Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս. ամէն։
Հայր մեր որ յերկինս։



Դակեցին զձեռս իմ և զոտս իմ, և թօսեցին զամե-
նայն ոսկերս իմ. նայեցան և տեսին զիս։

ՍԱՂՄՈՍ ՀԲ.

Սաղմոս Դաւթի։

Տէրեա՛ զի բազմի՛ են հալածիչք իմ, և շա-
տա՛ք ոմանք յարեան ի վերայ իմ։
Բազո՛ք են որ ասեն անձին իմում, թէ
ոչ կայ փրկութիւն նմա յԱստուծոյ նորա։
Եւ դու, Տէր, պաշտպան իմ ես, փառք իմ
և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։
Ձայնիւ իմով առ Տէր աղաղակեցի, և լուաւ
ինձ ի լերինն սրբութեան իւրոյ։
Ես պառկեցայ և քնացայ, և յարուցայ, զի
Տէր պաշտպան է ինձ։
Չվախենամ ի բազմութենէ ժողովրդեանց,
որ շուրջանակի դարձեալ դնեն ինձ։
Յարո՛ւց զիս, Տէր, կեցո՛ զիս, Աստուած
իմ, զի դո՛ւ զամենայն թշնամիս իմ հարկա-
նես զծնօտս, զատամունս մեղաւորաց
խորտակեցեր։
Տեառն է փրկութիւն, և ի վերայ ժողովրդեան
քո օրհնութիւն քո։

թեամբք զամպարշտութիւն և
զանիրաւութիւն իւրեանց։
Ելցէ որպէս ի ձարպից անիրա-
ւութիւնոցա, զի գնացին ընդ-
ըստ խորհրդոց սրտից իւրեանց։
Խորհեցան և խօսեցան չարու-
թեամբ, զապիրաւութիւն ի
բարձունս խորհեցան։
Եդին յերկինս զբերանս իւրեանց,
և զլեզուս իւրեանց անէին զեր-
կիր։
Վասն այսորիկ ժողովուրդ իմ
դարձցի այսրէն, և աւուրք իմ
լի կատարեալ գտցին ընդ նոսա։
Ասացին գիա՞րդ գիտասցի աստու-
ած, կամ գո՞ւցէ արդեօք գիտու-
թիւն առ ի բարձրելոյ։
Ահա մեղաւորք են և աջողեալ
է նոցա. կան և ունին զմեծու-
թիւն աշխարհի։
Ասացի՝ ի զուր ուրեմն արդա-

ցուցի զսիրտ իմ, լուացայ սրբու-
թեամբ զձեռս իմ, և եղէ ես
խոշտանգեալ զօրհանապազ և
կշտամբանք իմ ընդ առաւօտս։
Թէպէտ և ասէի թէ այսպէս
պատմեցից ահաւասիկ յազգ որ-
դւոց քոց՝ որոց և ոչխարեցի։
Ի մտի եդի թէ սակայն և այս
չան է առաջի իմ, մինչև մտից ի
սրբութիւն աստուծոյ, և ի վեր-
ակաց զկատարած նոցա։
Սակայն վասն նենգութեան նո-
ցա տապալեր արասցես զնոսա,
կործանեսցես զնոսա յամբար-
տանութիւն։
Իակզիա՞րդ եղեն յաւեր յանկար-
ծակի աստուածեցան, պակասեցան,
կորեան վասն անօրէնութեան
իւրեանց, և եղեն որպէս երազք
զարթնուցեալ։
Տէր ի քաղաքի քում զպատկե-

նոցա անապատեացես. զի հուր բոլ-
բոքեցաւ ՚ի սրտի իմում և երի-
կամուն՚ք իմ այլագունեցան։
Եւ արհամարհեալ եղէ և ոչ գի-
տացի. որպէս զանասուն հա՛մա-
րեցայ առաջի՛ քո, և ես յամենայն
ժամ ընդ քեզ եմ։
Կալար զաջոյ ձեռանէ իմմէ, ՚ի
խորհուրդս քո առաջնորդեցեր
հնձ, և փառօք ընկալար զիս։
Ո՛ւր՚նէ կայ իմ բնաւ յերկինս՝,
կամ՚ ի քէն զի՛նչ՝ և ես խնդրեցից
յերկրի։
Նուաղեաց սիրտ իմ և մարմին
իմ. աստուած սրտի իմոյ, բաժին
իմ աստուած յաւիտեան։
Ահաւասիկ ոչ՛ք հեռի արարին
զանձինս իւրեանց ՚ի քէն՝ կորի-
ցեն, սատակեցուցեր զամենեսեան
որ պոռնկեալ եղեն ՚ի քէն։
Ինձ մերձենալ առ աստուած բա-

րի է, և դնել առ տէր զյոյս իմ։
Պատմել զամենայն օրհնութիւնս
քո ՚ի դրունս դստերն Սիովնի։

Տունք իզ։

ՍԱՂՄՈՍ ՀԹ։

Ի նուագարանի Այսոփ։

Ընդէ՞ր մերժեցեր աստուած
հապաւ. բարկացաւ սրտմտու-
թիւն քո ՚ի վերայ խաշին արօտի
քո։
Յիշեա զժողովուրդ քո զոր ստա-
ցար ՚ի սկզբանէ, փրկեցեր զվի-
ճակ ժառանգութեան քո։
Լեառն սիովն այն՝ ուր բնակե-
ցեր դու ՚ի նմա. համբարձ զըզ-
ձեռն քո ՚ի վերայ ամբարտաւա-
նութեան նոցա հապաւ։
Որ՞ինչ անօրինեցաւ թշնամին
՚ի սրբութեան քում, պարծեցան

ասելիք քո՝ ի մէջ բարեկենդա-
նուն Թեան իւրեանց։
Եդին զնշանս իւրեանց՝ ինչպէս,
և ինքեանք ոչ ծանեան զնս՝ ի
վերուստ։
Որպէս յանուսուի փայտատոք կո-
տորեցին զերուսաղէմ, ի միա-
սին փայտատոք և մրճօք կոտծա-
նեցին զնա։
Ընդրեցին՝ ի հուր զարբուքիւն
քո յերկրի. պղծեցին զխորան ա-
նուան քո։
Ասացին՝ ի սիրտս իւրեանց ազգք
նոցա՝ ի միասին, եկայք լռեցու-
ցուք զամենայն տօնս աստուծոյ
յերկրէ։
Նշան մեք ինչ ոչ տեսաք և ոչ
ևս գոյ մարգարէ, և մեզ ինչ
ոք ոչ ճանաչէ։
Մինչև յե՞րբ աստուած նախա-
տէ Թշնամին, բարկացուցանէ

հակառակորդն զանուն տուր
քո։
Ընդէ՞ր դարձուցանես զձեռն քո,
և զաջ քո՝ ի միջոյ ծոցոյ քումմէ
իսպառ։
Աստուած Թագաւոր մեր յառաջ
քան զյաւիտեան, որ արարեր
զփրկուԹիւն՝ ի մէջ երկրի։
Դու հաստատեցեր զօրուԹեամբ
քով զծով. դու խորտակեցեր զգ-
լուխս վիշապաց՝ ի վերայ ջուրց։
Դու փշրեցեր զգլուխս վիշապին,
և եւտուր զնա կերակուր զօրացն
հնդկաց։
Դու բղխեցուցեր զաղբիւրս և
զվտակս. դու ցամաքեցուցեր զգ-
ետս սաստիկս։
Քո է տիւ և քո է գիշեր, զլոյս և
զարեւ դու հաստատեցեր. և դու
հաստատեցեր զամենայն սահ-
մանս երկրի. զգարուն և զամառն

դու ստեղծեր։

Ա՛յս յուշիկ քեզ պի Թշնամին
նախատեաց զսէրդ. ժողովուրդ
անզգամ բարկացոյց զանուն

սուրբ քո։

Մի՛ մտաներ գազանաց զանձն որ
խոտոման առնի տուք քեզ, և զան-
ձինս անանկաց քոց մի՛ մոռանար

խաչատ։

Հայեա յուխտ քո, պի լցան
տունք ախչերց յերկրի անիրա-

ւութեամբ։

Մի՛ դարձցի անանկ ամաչեցեալ.
այլ աղքատն և անանկ օրհնեա-

ցեն զանուն սուրբ քո։

Ելի աստուած և դատեա զդա-
տաստան քո. յիշեա զնախատի-
նս որ յանդգամէն զօրհասա-

պաղ։

Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից
քոց. ամբարտաւանութիւն ա-

սելեաց քոց վերստին հանապազ։

Տունք խղ։ Դարձյալ իբ։

ՍԱՂՄՈՍ ՀԴ.

Ի խոթաթ. Ջ՛ ապաւանէր. ընդ օրհնո-ւիւնս։ Սաղմոս յԱսափ. երդ։ առ Երիթասարդեայնս։

Խոստովան եղիցուք առ քեզ
աստուած. խոստովան եղիցուք
և կարդացուք զանուն քո։
Պատմեցից զամենայն սքանչե-լիս
քո. յորժամ ժամ առից, ես ու-
ղիղ դատեցայց։
Հաշեցաւ երկիր և ամենայն բը-
նակիչք նորա, ես հաստատեցի
զսիւնս նորա։
Ասացի անօրինաց մի՛ անօրի-
նէք, մեղաւորաց մի՛ բար-
ձրացուցանէք զեղջիւրս ձեր։
Մի՛ համբառնայք ի բարձունս
զեղջիւրս ձեր, և մի՛ խօսիք զան-
տուծոյ անիրաւութիւն։
Ո՞վ ի ոչ յարեւելից և ոչ յարեւ-

մոխիւ և ոչ յանապատէ լերանց,
այլ աստուածդ աստուածդ է ։
Օգայս խնամարհ առնէ և զսոյն
բարձրացուցանէ, բաժակ ՚ի ձե-
ռին տեառն՝ դինի լի անապակ
արկեալ, և խնամարհեցուցանէ
յայսմանէ յայս ։
Սակայն մրուր նորա ոչ ապաւեց-
ցի, և արբցեն զնա ամենայն ա-
ղաւոյք երկրի ։
Եւ ցնծացայց յաւիտեան, սաղմոս
ասացից աստուծոյ յակովբայ ։
Զամենայն եղջիւրս մեղաւորաց
փշրեցից, և բարձր եղիցի եղ-
ջիւր արդարոյ ։

ՍԱՂՄՈՍ ՀԵ.

Ի կատարած, ընդ օրհնութիւնս, ՚ի պսականեր ։ Սաղմոս յԱսափ.
երգ առ Աստուածածին ։

Յայտնի է ՚ի հրէաստանի աստ-
ուած, և յիսրայէլ մեծ է անուն

նորա ։
Եղև խաղաղութիւն տեղի նո-
րա, և բնակութիւն նորա սի-
ովն ։
Ընդ խորտակեաց տէր զզօրու-
թիւն աղեղան, զվէն զսուր և զպա-
ճակատամարտս ։
Լուսաւոր ես դու սքանչելապէս
լերանցն յաւիտենից. խռովեցան
ամենեքեան որ անմիտ են սրտ-
ւիք. ննջեցին զքունս իւրեանց
և ոչ ինչ ոչ գտին ։
Ընդ ամենայն ալք ՚ի վեծութեան ձե-
ռաց իւրեանց. ՚ի տատապ քումմէ
աստուած յակովբայ ննջեցին,
և պք հեծեալ էին ՚ի ձիս ։
Դու ահաւոր ես և ո՞վ կարէ կալ
առաջի քո. որպէս երեւեցար
դու յերկնից յայտնի եղեւ բար-
կութիւն քո ։
Երկիր երկեաւ և սարսեաց ընդ

յառնելն աստուծոյ ՚ի դատաստան, ընդ ապրեցուցանել զամենայն հեզս երկրի։

Խորհուրդք մարդկան խաստովան առնին առ քեզ, և ծածկեալք ի մաստութեամբ օրհնեսցեն զքեզ։

Ուխտս դիք և կատարեցէք տեառն աստուծոյ մերոյ, ամենայն քան որ շուրջ էք զնովաւ։

Աստուցէք պատարագս ահաւորին. ո՛ քակէ զոգիս իշխանացն, ահաւոր է նա քան զամենայն թագաւորս երկրի։

ՍԱՂՄՈՍ ՀԲ.

Ի կոպարած. Վասն Դրիհոմայ. Սաղմոս յԱսափ։

Զայնիւ իմում ես առ տէր կարդայի. ձայնիւ իմում առ աստուած, և նայեցաւ առ իս։

Յաւուր նեղութեան իմոյ զաս-

տուած խնդրեցի ձեռօք իմովք, ՚ի գիշերի առաջի նորա՝ ոչ խաբեցայ։

Ոչ կամէր մխիթարել անձն իմ. յիշեցի զաստուած և ուրախ եղէ, հոգայի և նուաղէր յիս հոգի իմ։

Յամանեցին պահուց աչք իմ, խռովեցայ և ոչ խօսեցայ. խորհեցայ զաւուրսն զառաջինս, և զամս յաւիտենից յիշեցի։

Խօսեցայ ՚ի գիշերի ընդ սրտի իմում. հոգայի՝ և տգուտասէր յիս հոգի իմ։

Արիթէ յաւիտենից մերժեսցէ տէր, և ո՞չ ևս յաւելցու ՚ի հաճել և ևս։

Կամ իսպառ արգելցէ զողորմութիւն իւր յինէն, կամ կատարեցաւ բեռն զբան իւր ազգէ ազգի։

կամ մուտապի զվնալ աստուած
իմ և ես. կամ արդեւցի զզիտու-
թիւն իւր բարկութեամբ իւ-
րով։
Ասացի՝ թէ այժմ սկսայ. այս է
նորոգումն աջոյ բարձրելոյ։
Յիշեցի զգործս տեառն, ի սկզբ
բանէ յիշեցի զսքանչելիս նորա։
Խորհեցայ յամենայն գործս քո,
ի ձեռս ազգործս քո խորհեցայ։
Ընտուած ի սրբութեան են ճա-
նապարհք քո. ո՞վ է աստուած
մեծ որպէս զաստուած մեր. դու
ես աստուած որ առնես զսքան-
չելիս։
Ցուցեր ժողովրդեան քում զզ-
զօրութիւն քո, փրկեցեր բազ-
կաւ քով զժողովուրդս քո զորդ-
դիան յակոբայ և յովսեփու։
Տեսին զքեզ ջուրք աստուած,
տեսին զքեզ ջուրք և երկեան, և

խորք խռովեցան ի ձայնէ ջուց
բազմաց։
Ձայն եղուն ամպք, քանզի և
նետք քո գնան ի ձայնէ որոտա-
յից քո անուի։
Երեւեցան փայլատակունք քո
տիեզերաց. խռովեցաւ և դողաց
երկիր։
Ի ծովս են ճանապարհք քո.
շաւիղք քո ի ջուրս բազումս, և
հետք քո ոչ ևս երեւին։
Առաջնորդեցեր որպէս խաշին
ժողովրդեան քո, ի ձեռն մովսե-
սի և ահարոնի։

Տուեալ ժք. գրգռայս յբ։

ՍԱՂՄՈՍ ՀԵ.

Խմասրութեան յայտ։

Նայեցարուք ժողովուրդք յօ-
րեղնս իմ. խոնարհեցուցէք զուն-
կըն ձեր ի բանս բերանոյ իմոյ։
Բացից առակս զբերան իմ,

խօսեցայց զառաքս ՚ի սկզբանէ։
Որպէս լուաք և ծանեաք զայս,
և հարքն մեր պատմեցին մեզ։
Ոչինչ ծածկեցաւ յորդւոց նոցա՝
յազգ յայլ պատմել զօրհնու-
թիւնս առաւն, զզօրութիւն և
զքանչելիս իւր զոր արար։
Աստուածեաց զվկայութիւն իւր
առ յակովբ, և օրէնս եդ՚ի վերայ
իսրայէլի։
Որ ինչ միանգամ պատուիրեաց
հարցն մերոց, ցուցանել զայս
որդւոց իւրեանց զի ծանիցեն
յազգ յայլ։
Որդիք որ ծնանին՝ յարիցեն և
պատմեսցեն զայս որդւոց իւ-
րեանց, զի դիցեն առ աստուած
զյոյս իւրեանց և մի՛ մոռացին
զգործս աստուծոյ։
Ո՛պատուիրանս նորա խնդրեսցեն
խնդրեսցեն, և մի՛ եղիցին որպէս

և հարքք իւրեանց։
Ազգ չար և դառնացօղ, ազգ որ
ոչ ուղեաց զսիրտ իւր, և ոչ հաս-
տատեցաւ առ աստուած զոգի
իւր։
Որդիք եփրեմի լիաձիգք և պնդա-
ձիգք, յառուր պատերազմի կա-
պարձս դարձուցին։
Ոչ կացին նոքա յուխտի տեառն,
և ըստ իրաւանց նորա ոչ կամե-
ցան գնալ։
Առուացան զերախտիս նորա, և
զքանչելիսն զոր երևոյց նոցա։
Առաջի հարցն նոցա զոր արար զքա-
նչելիս իւր, յերկրին եգիպտա-
ցւոց և ՚ի դաշտին տանեաց։
Երձ զծովն և անցոյց զնոսա,
կացոյց զջուրսն որպէս ի տիկս։
Առաջնորդեաց նոցա ամպով ՚ի
տուէ, և զամենայն գիշեր ՚ի լոյս
հրոյ։

Երթ գնէմն յանապատին, և եւս
ամենել նոցա որպէս ի խորոյ մե-
ծէ։

Յան գջուրան ի վիմէն, և հո-
սեաց որպէս զգետս գջուրան։
Սակայն յաւելին ի մեղանչել, և
եւս բարկացուցին զբարձրեալն
յանջրդի։

Փորձեցին զաստուած ի սիրտս
իւրեանց, ի խնդրել կերակուր
անձանց իւրեանց։

Տրտնջեցին զաստուծոյ և ասա-
ցին. միթէ կարօղ իցէ աստու-
ած պատրաստել սեղան յանա-
պատի։

Քանզի հարկանէր գնէմն և հո-
սէին ջուրք, և վտակք խաղային
ի նմանէ։

Միդէ հաց եւս կարասցէ տալ նա
մեզ, կամ պատրաստեսցէ սեղան
ժողովրդեան իւրոյ։

Լսան այսորիկ լսաւ զայս տէր
և յոտնկեաց. հուր բորբոքե-
ցաւ ի յակովբ, և բարկութիւն
ել ի վերայ իսրայէլի։

Ոչ հաւատացին յաստուած, և
ոչ յուսացան ի փրկութիւն
նորա։

Հրամայեաց ամպոց ի վերուստ,
և պրսնաց երկնից եբաց, և տե-
ղեաց ի նոսա մանանայ ի կերա-
կուր։

Օհաց երկնից ետ նոցա, վհաց
հրեշտակաց կերան մարդիկ, և
իջոյց ի նոսա կերակուր ի լիու-
թիւն։

Հան վհոտմն հարաւոյ, և աճ
զօրութեամբ իւրով վհիւսիսոյ։
Տեղեաց ի նոսա միս որպէս ըզ-
հող, որպէս զաւազ ծովու ըզ-
թռչունս թեւաւորս։

Ընկ ի մէջ բանակի նոցա, և

շուրջ զվիրանօք նոցա։
Կերան և յագեցան յոյժ. զցան
կուշիւն նոցա եւ նոցա, և ոչինչ
կարօտ եղեն ի ցանկութենէ իւ-
րեանց։
Մինչդեռ կերակուրք ի բերանս
իւրեանց էին, բարկութիւն
յաստուծոյ էջ ի վերայ նոցա։
Սպան զբազումս ի նոցանէ, և
զընտիր ընտիրս իսրայէլի սասա-
կեաց։
Յայսմ ամենայնի մեղան և եւս,
և ոչ հաւատացին սքանչելեաց
նորա։
Պակասեցան յուռայնութեան ա-
ւուրք նոցա, և ամք նոցա փու-
թապէս անցին։
Յորժամ սպանանէր զնոսա, խըն-
դրէին զնա, դառնային և առա-
ւօտ առնէին առ աստուած։
Յիշեցին զի աստուած օգնական

էր նոցա, աստուած բարձրեալ
փրկիչ էր նոցա։
Սիրեցին զնա բերանով իւրեանց
և լեզուօք իւրեանց ստեցին նը-
մա. սիրտք նոցա ոչ էին ու-
ղիղ ընդ նմա, և ոչ հաւատա-
ցին ուխտի նորա։
Ա՛լ նա ինքն գթած էր, քաւէր
զմեղս նոցա և ոչ սպանանէր։
Յաճախէր դարձուցանել զբար-
կութիւն իւր, և ոչ բորբոքեաց
զամենայն սրտմտութիւն իւր։
Յիշեաց՝ թէ մարմին են նոքա,
հոգի որ երանէ՝ և ոչ եւս դար-
նայ։
Քանիցս անապատ դառնացուցին
զնա յանապատի, բարկացու-
ցին զբարձրեալն յանկրդի։
Դարձան և փորձեցին զաստուած,
և զսուրբն իսրայէլի զայրացու-
ցին։

Ոչ յիշեցին զձեռննորա, յաւուր
յորում փրկեաց զնոսա ՚ի ձեռաց
նեղչաց նոցա ։
Որպէս արար զնշանս և զարուես-
տս իւր յերկրին եգիպտացւոց,
և ՚ի դաշտին տոյանու ։
Դարձոյց յարիւն զգետս նոցա,
և զանձրևս նոցա՝ զի մի՛ արբցեն ։
Ուղարկեաց ՚ի նոսա շանաճանճ և
եկեր զնոսա, և գորտիւ ապա-
կանեաց զնոսա ։
Եւ ժանգոյ զպտուղս նոցա, և ըն-
վաստակս նոցա մարախոյ ։
Ջար կարկտիւ զայդիս նոցա,
և զթզենիս նոցա եղեմամբ ։
Ատանեաց ՚ի կարկուտ զանասու-
նս նոցա, և զտատրուածս նոցա
հրով դատեցաւ ։
Ուղարկեաց ՚ի նոսա զբռնամտու-
թիւն բարկութեան իւրոյ, զբռ-
նամտութիւն բարկութիւն և

վնասուն թիւն ։
Ուղարկեաց ՚ի նոսա տանջանս ՚ի
ձեռն հրեշտակի չարի. դիմելոյց
՚ի նոսա զբռնամտութիւն բարկու-
թեան իւրոյ ։
Ոչ անխնայեաց ՚ի մահս անձինս
ձինս նոցա, և զանասունս նոցա
՚ի մահ մատնեաց ։
Եհար զամենայն անդրանիկս ե-
գիպտացւոց, զսկիզբն ամենայն
վաստակոց նոցա ՚ի յարկս քամայ ։
Ժողովեաց եւ որպէս խաշին ժո-
ղովրդեան իւրոյ, և եհան զնոսա
որպէս զհօտ յանապատս ։
Ուղղեորդեաց նոցա յուսով և
ոչ երկեան, և զթշնամիս նոցա
ծով ծածկեաց ։
Եհան զնոսա ՚ի լեառն սրբու-
թեան իւրոյ, լեառն այն զոր ե-
տացեալ էր աջոյ նորա ։
Ներմուծեաց յերեսաց նոցա զհե-

Թանաստ. վիճակեցոյց ինոսա զբ-
վիճակ ժառանգութեան իւրոյ,
և բնակեցոյց ի յարկս նորա զազ-
գըն իսրայէլի։
Փորձեցին դառնացուցին զաս-
տուած բարձրեալ, և զվկայու-
թիւն նորա ոչ պահեցին։
Դարձան խոտորեցան որպէս և
հարք իւրեանց. դարձան և ե-
ղեն որպէս զաղեղն թիւր։
Դարձան բարկացուցին զնա ի
բագինս իւրեանց, և դրօշելովք
իւրեանց նախանձ արկին նմա։
Լուաւ աստուած և արհամար-
հեաց զնոսա, և անարգեաց յոյժ
զիսրայէլ։
Մերժեաց յիւրմէ զխորանն ի
սելով, խորան զոր բնակեցոյց
ի միջ մարդկան։
Մատնեաց ի գերութիւն զզօ-
րութիւն նոցա, և զգեղ նոցա

ի ձեռս թշնամեաց նոցա։
Մրգել ի սուր զժողովուրդ իւր,
և զժառանգութիւն իւր ան-
սաս արար։
Օրիսաստարդս նոցա եկեր հուր,
և վանն կուսանաց նոցա ոչ ոք
սգացաւ։
Քահանայք նոցա անկան ի սուր,
և զայրիս նոցա ոչ ոք էր որ լայր։
Յարթեաւ որպէս ի քնոյ տէր,
որպէս հզօր զի թաւիէ զդինի։
Եհար յետս զթշնամիս իւր,
նախատինս յաւիտենից արար զնոսա։
Մերժեաց նա զխորանն յոսեփ, և զազգն եփրեմի նա ոչ ընտրեաց։
Այլ ընտրեաց նա զազգն յուդայ, զլեառն սիովն զոր և սիրեաց։
Շինեաց որպէս միեղջերոյ ըս-
արբութիւն նորա, յերկրի հաս-

տատեաց զնա յաւիտեան։

Ընտրեաց զդաւիթ ծառայ իւր, և ընկալաւ զնա ի հօտէ խաշանց, ի վերջին ծնելոցն ընկալաւ զնա։

Հովեալ զյակովբ ծառայ իւր, և զիսրայէլ ժառանգութիւն իւր։

Արածէր զնոսա խնամատարութեամբ սրտի իւրոյ. յանմեղութիւն ձեռաց իւրոց առաջնորդէր նոցա։

Տունք հգ.

ՍԱՂՄՈՍ ՀԵ.

Աստուած մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ քո։

Արարին զերուսաղէմ մորպէս հիղձս մրգապահաց, արկին զդիակունս ծառայից քոց կերակուր

երկնից, և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի։

Հեղին զարիւն նոցա որպէս ջուր շուրջ զերուսաղէմ, և ոչ ոք էր որ թաղէր զնոսա։

Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց, ծաղր և այպն կատակացն այնոցիկ որ շուրջ էին ընդ մեզ։

Մինչև յե՞րբ տէր բարկանաս դու իսպառ. բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո։

Հեղ զբարկութիւն քո ի վերայ ազգաց՝ որ զքեզ ոչ ճանաչիցեն, ի վերայ թագաւորաց որ զանուն քո ոչ կարդացին, զի կերան զյակովբ և զտեղի նորա աւերեցին։

Մի՛ յիշեր զմեզս մեր զառաջինս. վաղվաղ եկեսցէ առ մեզ ողորմութիւն քո տէր զի ազքատա-

ցաք յոյժ ։

Օգնեա մեզ աստուած փրկիչ մեր, վասն փառաց անուան քոյ ։ Տէր փրկեա զմեզ և քաւեա զմեղս մեր վասն անուան քո ։

Ա՛ի երբէք ասասցեն ՚ի հեթանոսս, թէ ո՛ր է աստուած նոցա ։ Ա՛յլ յայտնի ինչ լիցի ՚ի վերայ հեթանոսաց առաջի աչաց մերոց, առ ՚ի խնդրել զվրէժ արեանց ծառայից քոց որ և հեղաւ ։

Մտցէ առաջի քո հեծութիւն կապելոց · ըստ մեծութեան բազկի քո շահեա դու զորդիս սպանելոյ ։

Ւստոյ դրացեաց մերոց եօթն պատիկ ինծոց նոցա , նախատինս զոր նախատեցին զքեզ տէր ։

Մեք ժողովուրդք և խաշն արօտի քոյ խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան , ազգէ յազգ

պատմեացուք զօրհնութիւնս քո ։

Տունք ԺԲ ։

ՍԱՂՄՈՍ ՀԹ ։

Ի կոպարած · ՚ի վերայ շուշանիկեցին վկայութիւնս , Ասափոյ ասմունք ՚ի վերայ Հրէութեան ։

Ո՞ հովուեաւդ իսրայէլի նայեաց , որ առաջնորդես որպէս խաշինս յոսէփեան ։

Որ նստիսդ ՚ի քրովբէս յայտնեա , առաջի եփրեմի բենիամենի և մանասէի ։

Օ՛ արթո զզօրութիւնդ քո , և եկ ՚ի կեցուցանել զմեզ ։

Ստոյգ զօրութեանց դարձո զմեզ , երեւեցո զերեսս քո ՚ի մեզ և կեցցուք ։

Տէր աստուած զօրութեանց , մինչև՞ ևս բարկանաս յաղօթս ծառայից քոց ։

Ո՛ ամբեցեր մեզ հաց արտասուաց , և արբուցեր մեզ արտա-

սուս չափով։

Ընտրեր զմեզ նախատինս դրա-
ցեա մերոց, այսպն կատականաց
թշնամեաց մերոց։

Ընտուած զօրութեանդ դարձո
զմեզ, երեւեցո զերեսս քո՛ի մեզ
և կեցցուք։

Այժի յեղիպտոսէ փոխեցեր. հա-
ներ զհեթանոսս և զնոսա տրն-
կեցեր, և առաջնորդեցեր նմա։
Հաստատեցեր զարմատս նորա
և ելից զերկիր. ծածկեաց զլերի-
նըս հովանի նորա, և բարուենակ
նորա զմայրս աստուծոյ։

Ձգեաց զտրիճ իւր մինչև ի ծով,
մինչև ի գետս են շառաւեղքնո-
րա։

Ընդէր քակեցեր զցանկ նորա,
կթեն զնա անցաւորք ճանապար-
հի։

Պականեաց զնա խոզ անտառի,

և երէվայրի արածեցաւ ինձմա։

Ընտուած զօրութեանդ դարձ
հայեաց յերկինից և տես. այց ա-
րա այդ ոյս այսմիկ, և դարման
տար սմա զոր տնկեաց աջ քո։

Ի վերայ որդւոյ մարդոյ զոր զո-
րացուցեր զնա ի քեզ. այրեցեալ
ի հուր և աւերեալ ի սաստե
քումմէ կորիցէ։

Եղիցի ձեռն քո ի վերայ առն, աջ
քո ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր
զօրացուցեր զնա ի քեզ։

Ոչ ևս ի բացեայ եղիցուք մեք ի
քէն. կեցուսցես դու զմեզ, և զա-
նուն քո տէր կարդասցուք։

Ընտուած զօրութեանդ դարձո
զմեզ, երեւեցո զերեսս քո՛ի մեզ
և կեցցուք։

ՍԱՂՄՈՍ Զ.

Ի Հոգեպուծ. վասն Հիւանդաց. Աղմուս յԱսափ. Հինգերորդ շաբաթուց։

Յնծացէք առ աստուած օգնական է մեր. աղաղակեցէք առ աստուած յակոբայ։

Ընդունէք սաղմոս և տուք օրհնութիւն. սաղմոս ասացէք նմա՛ի ձայն քաղցրութեան։

Փող հարէք՛ի ղլուխս ամսոյ, յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց։

Հրաման է այս իսրայէլի, և իրաւունք են աստուծոյ յակովբայ։

Վկայութիւնն յոսէփոս զոր եդ ընդնմա. որպէս ելանէր նա յերկրէն եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ։

Ի բաց արար՛ի բեռանց զթիկունս նորա, և զձեռս նորա յարդ և՛ի թի ծառայեցոյց։

Ի նեղութեան կարդացեր առ իս և փրկեցի զքեզ. լսայ քեզ՛ի պատսպարութենէ մրրկին, և փորձեցի զքեզ՛ի վէրայ ջրոցն հակառակութեան։

Լուր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ, և իսրայէլ՝ թէ լսիցես ինձ։

Մի՛ և այլ եղիցին քեզ աստուածք առ ժամայնք. և մի՛ երկիրպագանիցես դու աստուծոյ օտարի։

Ես եմ աէր աստուած քո որ հանի՛ զքեզ յերկրէն եգիպտացւոց. բաց զբերան քո և լցից զդա։

Ժողովուրդ իմ ոչ լսաւ ձայնի իմում, և իսրայէլ ինձ ոչ նայեցաւ։

Եարձի Թողի զնոսա երթալ ըստ հեծա կամաց սրտից իւրեանց, զի գնասցին ընդ խորհուրդս անձանց իւրեանց։

Օ՜ի թէ ժողովրդեան իմոյ լսեալ էր ինձ, կամ իսրայէլի զճանապարհս իմ գնացեալ էր։

Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նորա, ՚ի վերայ նեղչաց նորա արկեալ էր զձեռն իմ։

Թշնամիք տեառն ստեցին նմա. եղիցին ժամանակք նոցա յաւիտեան խարհի։

Կերակրեաց զնոսա ՚ի ապարաւոտ թենէ յօրենոյ, ՚ի վիմէ մեղրոյ դեցոյց նոցա։

ՍԱՂՄՈՍ ՀԱ.

Սաղմոս յՆոյեմ։

Ընտրեաց եկայց ՚ի ժողովս աստուածոց, և ՚ի մէջ նոցա դատէր զնոսա։

Մինչև յե՞րբ դատիք անիրաւու-

թեամբ, և ակն առնուք մեղաւորաց։

Դատ արարէք որբոյն և այրուհւոյ. իրաւունս արարէք տնանկին և խոնարհի։

Ընկերացուցէք զաղքատան և զտնանկ, ՚ի ձեռաց մեղաւորի փրկեցէք զնոսա։

Ոչ իմացան և ոչ ՚ի միտ առին, ՚ի խաւարի գնացին, և շարժեցան ամենայն հիմունք երկրի։

Ես ասացի թէ աստուածք իցէք, կամ որդիք բարձրելոյ ամենեքեան։

Դուք աւասիկ որպէս մարդիկ մեռանիք, և որպէս զմի իշխանացն անկանիք։

Երի աստուած և դատեա զերկիր, զի դու ժառանգեացես զամենայն հեթանոսս։

ՍԱՂՄՈՍ ՁԹ.

Օրհնութիւն Աղմոսաց այսոքիւ։

Աստուած ո՞րքեզ նմանիցէ. մի՛ լռեր և մի՛ դադարեր աստուած։ Զի ահա թշնամիք քո գոչեցին, ևատելիք քո համբարձին զգլուխս իւրեանց։

Ի վերայ ժողովրդեան քո խորհուրդ մանեցին զիտուն թիւն. խորհեցան ի վերայ սրբոց քոց և ասացին։

Եկայք սատակեսցուք զնոսա յազգացայ, և մի՛ յիշեսցի անուն իսրայէլի և ևս։

Խորհեցան միաբանութեամբ ի միասին, վասն քո ուխտ արարին։

Բանակք եդոմացւոց և իսմայելացիք, մովաբ և հագարացիք։

Գեբաղ, ամմէն, ամաղէկ, և այլազգիքն ամենայն բնակչօքն Հանդ։

դերձ ծուբաւ։

Զի և աստուր եկեալ էր ընդ նոսա, ամենեքեան սրբա զօրավիգն էին որդւոցն ղովտայ։

Արա զնոսա որպէս մադիամ, որպէս սիսարա, որպէս զ յաբին ի ծովծոման կիսովնի։

Սատակեցան նոքա յականս դովրայ, և եղեն որպէս զաղբ երկրի։

Արա զիշխանս նոցա որպէս զոռեբն, զէբն, զզէբէէ, զսաղմանա և զամենայն իշխանս նոցա։

Որք ասացին, ժառանգեսցուք ի մեզ զարբուն թիւն աստուծոյ։

Աստուած իմ՝ արա զնոսա որպէս զանիւ, որպէս զեղէգն առաջի հողմոյ։

Որպէս հուր զի այրէ զանտառս, որպէս բոց զի կիզու զլերինս։

Այսպէս հալածեսցես զնոսա

մրիսա. քո, և քարկուԹեամբ
քով խոռվեցուսցես զնոսա։
Ոչ ից զերեսս նոցա անարդանօք,
և խնդրեսցեն զանուն քո տէր։
Ամաչեսցեն և խռովեսցին յաւի-
տեան յաւիտենից, և ամօԹա-
ւից կորիցեն։
Ծանիցեն զի անուն քո տէր է,
և դու միայն բարձրեալ ես ի վե-
րայ ամենայն երկրի։

Տե՛ս ժբ։

ՍԱՂՄՈՍ ՁԴ։

Ի կիսաշաբ. վան Հնչանայ, որ-ոյն Արիայ սաղմոս։

Որպէս սիրելի են յարկք քո
տէր զօրուԹեանց, ցանկայ և
վախճանէ անձն իմ ի գաւիԹս
քո։
Սիրտ իմ և մարմին իմ ցնծասցէ
առ աստուած կենդանի։
Քանզի ճնճղուկ եգիտ իւր տուն,

տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձագս իւր։
Սեղան քո տէր զօրուԹեանց,
Թագաւոր իմ և աստուած իմ։
Երանի ամենեցուն որ բնակեալ
են ի տան տեառն, յաւիտեանս
յաւիտենից օրհնեսցեն զքեզ։
Երանելէ այր որոյ օգնուԹիւն
իւր ի քէն է. ելս եդ ի մտի իւ-
րում ի հովիտս արտմուԹեան, ի
տեղւոջ յորում ստեղծար։
ՕրհնուԹիւն տացի որ զօրե-
նըս դնէ. դնասցէ նա ի զօրու-
Թենէ ի զօրուԹիւն, և երևեսց-
ցի աստուած հրեշտակաց ի սի-
ովն։
Տէր աստուած զօրուԹեանց՝
լուր աղօԹից իմոց, ունկն դիր
աստուած յակովբայ։
Ընդունելի ես դու մեր. տես աս-
տուած և նայեա յերեսս օծե-

ՍԱՂՄՈՍ ՁԹ.

Ի կսկիծ. ողբ-ոյն Երկայ ասլմոս։

Տունք ժդ։

Տէր աստուած զօրութեանց, ե-
րանելոյ է այր՝ որ յուսայ ՚ի քեզ։
Տէր ոչ պակասէ առնել զողորմու-
թիւն իւր, յայնցանէ որ գնան
յանդծութեան։
Տէր աստուած զօրութեանց, ե-
ղիցի ՚ի քեզ։
Ձայն մեղ տէր զողորմութիւնս
քո, և զփրկութիւնս քո տուր
մեզ։
Լուաք զինչ խօսի տէր աստուած
մեր. խօսեսցի զխաղաղութիւն
ժողովրդեան իւրոյ, առ սուրբս
դարձուցեր զդեղութիւնն յա-
կուպայ։
Ահաւասիկ տէր ընդ երկիր քո, և
ընտրեսցի ընդ աղբ գալ ՚ի տան
աստուծոյ, առաւել քան բնակել
նալ ՚ի յարկս մեղաւորաց։
Օողորմութիւն և ճշմարտու-
թիւն սիրե տէր աստուած ըզ-
հնորհս և զփառս տացէ։
Տէր ոչ պակասէ առնել զողորմու-
թիւն իւր, յայնցանէ որ գնան
յանդծութեան։
Տէր աստուած զօրութեանց, ե-
րանելոյ է այր՝ որ յուսայ ՚ի քեզ։

Թագաւոր զանիրաւութիւն ժողո-
վրդեան քոյ. ծածկեցեր զամե-
նայն մեղս նոցա։
Լուեցուցեր զամենայն սրտմ-
մտութիւնս քո. դարձար ՚ի բար-
կութենէ սրտմտութեան քո։
Դարձ առ մեզ աստուած փրկիչ
մեր, և դարձո զսրտմտութիւնս
քո ՚ի մէնջ։
Մի՛ յաւիտեան բարկանայր մեզ
տէր, և մի՛ ձգեր զբարկութիւն
քո ազգէ ազգի։
Ընտրեցեր դու դարձեալ կեցու-
ցես զմեզ. ժողովուրդ քո ուրախ
եղիցի ՚ի քեզ։
Ցոյց մեզ տէր զողորմութիւնս
քո, և զփրկութիւնս քո տուր
մեզ։
Լուաք զինչ խօսի տէր աստուած
մեր. խօսեսցի զխաղաղութիւն
ժողովրդեան իւրոյ, առ սուրբս

իւր՝ և առ այնոսիկ որ դարձեալ
են առ նա սրտիւք ։
Սակայն մերձ է առ երկիւղած
իւր փրկութիւն նորա . բնակիլ
փառաց նորա յերկրի մերում ։
Ողորմութիւն և ճշմարտութիւն
պատահեցին . արդարութիւն
և խաղաղութիւն համբուրե-
ցին ։
Ճշմարտութիւն յերկրէ բու-
սաւ , արդարութիւն յերկնից ե-
րեւեցաւ ։
Տէր տացէ զբարեգործութիւն , և
երկիր մեր տացէ զպտուղ իւր .
արդարութիւն առաջի նորա գը-
նասցէ , դիցէ ի ճանապարհի ըզ-
գնացս իւր ։

ՍԱՂՄՈՍ ՀԶ։

Աղօթս Դաւթի ։ Ընդ։

Ականարհեցո տէր զականջն քո և
լուր ինձ , զի աղքատ և անանկ
եմ ես ։
Պահեա զանձն իմ սուրբ տէր .
փրկեա զծառայս քո աստուած
իմ՝ որ ի քեզ յուսացեալ ։
Ողորմեա ինձ տէր զի առ քեզ
աղաղակեցի զօրհանուսպաղ . ու-
րախ արա զանձն ծառայի քո , զի
առ քեզ տէր հանբարձի զանձն
իմ ։
Զի դու տէր քաղցր և ողոր-
ես , բազումողորմ առ ամենե-
սեան որ կարդան առ քեզ ։
Ականջ դիր տէր աղօթից իմոց , և
նայեա ի ձայն խնդրուածոց ի-
մոց ։
Յաւուր նեղութեան իմոյ կար-

դայի առ քեզ, և լսար ինձ։
Ոչ ոք է նման քեզ յաստուածս
տեր, և ոչ ոք է որպէս զգործս
քո։
Ամենայն ազգս զոր արարեր՝ ե-
կեսցեն և երկիր պագցեն առա-
ջի քո, փառաւորեսցեն զա-
նուն քո յաւիտեան։
Մեծ ես դու տէր, և առնես սքա-
նչելիս, և դու միայն ես աս-
տուած։
Ուսոյց դու ինձ ճանապարհի քո-
մ և գնացից ի ճշմարտութեան քումմ, և ուրախ եղիցի սիրտ իմ երկնչել յանուանէ քումմէ։
Խոստովան եղէց առ քեզ տէր աստուած իմ բոլորով սրտիւ իմով. փառաւորեցից զանուն քո յաւիտեան։
Մեծ եղև ի վերայ իմ ողորմու-

թիւն քո, փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքինոց։
Ընտուաց, անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ աստուած առաջի իւրեանց։
Այլ դու տէր աստուած իմ՝ գթած ես և ողորմած, երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ. նայեաց առ իս և ողորմեա ինձ։
Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, և արա առ իս նշան բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Տունք ԺԲ։

ՍԱՂՄՈՍ ՁԶ.

Այլմս օրհնութիւն. որոյ կրկին կրկնեալ։

Հիմունք նորա ի լեառն սուրբ
նորա. սիրէ տէր զդրունս սիոն
նիւաւաելքան զամենայն յարկս
սրն յակովբայ։
փառաւորեալն խօսեցաւ վասն
քո, ահաւադիկ քաղաքդ աստու-
ծոյ։
Յիշեցի զրահաբ և զբաբելոնն
որ ճանաչեն զիս. ահա այլազգիք
և ծուր և ժողովուրդք հնդկաց,
սոքա եղեն անդ։
Ասելոյ ասի մայր և մարդ ծնաւ
ի նմա, և ինքն հիմունս արկ ի
նմա բարձրեալն։
Տէր պատմեսցէ գրովք ժողովուր-
դեան, իշխանացս այսոցիկ որ
եղեն անդ։
Որպէս զի ուրախ լինիցին ի քեզ

ամենեքեան, որոց բնակութիւն
իւրեանց ի քէն է։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՁԷ.

Ի կոպարճ վան Այլազգիոյ իմաստութեան, զի եւ պատահանիք
նմանի իմաստութեամբ։

Տէր աստուած փրկութեան իմ
մոյ, ի տուէ կարդացի և գիշե-
րի առաջի քո։
Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր,
խոնարհեացի ունկն քո ի խըն-
դրուածս իմ։
Ո՛ի լցաւ չարչարանօք անձն իմ,
և կեանք իմ՝ի դժոխս մերձեցաւ.
և համարեցայ ես ընդ այնոսիկ
որ իջանեն ի գուբ։
Եղէ ես որպէս մարդ առանց օգ-
նականի, և ի մեռեալս ազատ։
Որպէս զվիրաւորս որ ննջեն ի
գերեզմանս։

Օրա դուն ոչ յիշեցեր, և նոքա՛ի
ձեռանէ քումմէ մերժեցան։
Եղին զիա՛ի գբի նեղչնուն, ՛ի
խաւարի և՛ի ստուերս մահու։
Յիա հաստատեցաւ սրտմտու-
Թիւն քո, զամենայն զբօսանս քո
աճեր՛ի վերայ իմ։
Ձեռի արարեր յինէն զծանօթս
իմ, և եղին զիանշաւակիւրեանց։
Պատնեցայ և ոչ ելանէի. աչք իմ
տկարացան յայղքաստուԹենէ։
Ընդազակեցի առ տէր զօրհանա-
պազ, և համբարձի առ քեզ ըզ-
ձեռս իմ։
Միթէ մեռեալոց առնիցես սքան-
չելիս, կամ բժիշկք յարուցանիցեն՝ խոստովանեսցին առ քեզ։
Միթէ պատմեսցէ՞ ոք երբեք՛ի
գերեզմանի զողորմուԹիւնա՛ քո,
կամ զճշմարտուԹիւնա՛ քո՛ի կո-
րստեան։

Միթէ ճանաչեսցի՞ն՛ի խաւարի
սքանչելիք՛ քո, կամ արդարու-
Թիւն՛ քո յերկիր մոռացեալ։
Ես առ քեզ տէր աղաղակեցի. ա-
ռաւօտու աղօթք իմ ժամանես-
ցեն առ քեզ։
Ընդէ՞ր տէր մերժես զանձն իմ,
կամ դարձուցանես զերեսս քո
յինէն։
Տնանկ և վաստակաւոր եմ ես՛ի
մանկուԹենէ իմմէ. ՛ի բարձրու-
Թենէ խոնարհեցայ և ափշեցայ։
Յիա հաստատեցաւ բարկու-
Թիւն՛ քո. արհաւիրք՛ քո խռովե-
ցուցին զիս։
Եբջեցան զինև որպէս ջուր, զօր ա-
մենայն պաշարեցին զիս՛ի միասին։
Ձեռի արարեր յինէն զբարեկա-
մըս իմ և զծանօթս իմ, վասն Թը-
շուառուԹեան իմոյ։

ՍԱՂՄՈՍ ՁԸ.

Խնամքոյն Աստուծոյ ի հայելս։

Ո՜ողորմութիւնդ քո տէր յաւիտեան օրհնեցից. ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնդ քո բերանով իմով։

Ընացեր թէ աշխարհս ողորմութեամբ շինեսցի, յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո։

Եդի ուխտ ընտրելոց իմոց, երդուայ դաւթի ծառայի իմոյ։

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո, շինեցից ազգէ յազգ զաթոռ քո։

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց տէր, և ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց։

Ովք է յամպս որ հաւասարէ քեզ, կամ ո՞վ նմանիցէ տեառն յորդիս աստուծոյ։

Աստուած փառաւորեալ ի խորհուրդս սրբոց իւրոց. մեծ և ահաւոր ի վերայ այնոցիկ որ շուրջ են զնովաւ։

Տէր աստուած զօրութեանց, ո՞ նման է քեզ. հզօր ես դու տէր և ճշմարտութիւն քո շուրջ է զքեզ։

Դու տիրես զօրութեանց ծովու, զխտութիւն ալեաց նորա դու ցածուցանես։

Դու խոնարհեցուցանես որպէս վիրաւորս զամբարտաւանս. ի զօրութիւն բազկի քո ցրուեցեր զթշնամիս քո։

Քո են երկինք և քո է երկիր, զաշխարհս լրիւ իւրովք դու հաստատեցեր, զհիւսիս և զհարաւ դու արարեր. Թաբոր և հերմոն յանուն քո ցնծասցեն։

Քո է բազուկ և քո է զօրութիւն.

զօրացի աչք քո և բարձր եղիցի
ձեռն քո։
Յարդարութիւն և յիրաւունս
հաստատեալ է աթոռ քո. ողոր-
մութիւն և ճշմարտութիւն դէմ
նայեցէ առաջի երեսաց քոց։
Երանի ժողովրդեան որ գիտեն
զօրհնութիւնս քո տէր. ի լոյս ե-
րեսաց քոց գնասցեն և յանուն
քո ցնծասցեն զօրհանուապազ, և
յարդարութեան քում բարձր
եղիցին։
Պարծանք զօրութեանց մերոց
դու ես և ի կամս քո բարձր ե-
ղիցի եղջիւր մեր։
Ի տեառնէ է օգնութիւն սրբոյն
իսրայէլի Թագաւորին մերոց։
Յայնժամ խօսեցար տեսլեամբ
ընդ որդիս քո և ասացեր. եդիւ
զօգնութիւն ի վերայ հզօրին,
և բարձր արարից զընտրեալն ի

ժողովրդենէ իմմէ։
Գտի զդաւիթ ծառայ իմ, իւղով
սրբով իմով օծի զնա։
Ձեռն իմ ընկալցի զնա, և բա-
զուկ իմ զօրացուսցէ զնա։
Ոչ մեղիցէ նմա թշնամի, և որ-
դի անօրէնութեան ոչ չարչա-
րեսցէ զնա։
Ջարից առաջի նորա զթշնամիս
նորա, և զատելիս նորա ի պար-
տութիւն մատնեցից։
Ճշմարտութիւն իմ և ողորմու-
թիւն իմ ընդ նմա, և յանուն իմ
բարձր եղիցի եղջիւր նորա։
Եդից ի ծովս զձեռն նորա, ի
վերայ գետոց զաջ նորա։
Նա կարդասցէ առ իս հայրիմ ես
դու, աստուած ընդունելի վրէ-
կութեան իմոյ։
Եւ անդրանիկ արարից զնա, և
բարձր քան զամենայն թագաւոր

րըս երկրի ։

Յաւիտեան պահեցից նմա զողորմութիւն իմ, և ուխտ իմ հաւաստարիմ ընդ նմա ։

Եւ տացից յաւիտեան յաւիտենից զզաւակ նորա, և զաթոռ նորա որպէս զաւուրս երկնից ։

Թէ թողցեն որդիք նորա զօրէնս իմ, և յիրաւունս իմ ոչ կամեսցին գնալ ։

Թէ զարդարութիւնս իմ անարգեսցեն, և զպատուիրանս իմ ոչ պահեսցեն ։

Եւ արիցց գաւազանաւ զանօրէնութիւնս նոցա, տանջանօք զանիրաւութիւնս նոցա ։

Բայց զողորմութիւն իմ ոչ արգելից ի նոցանէ, և ոչ նենգեցից ճշմարտութեան իմում, և ոչ անարգեցից զուխտ իմ, և ինչ որ

ելանէ ընդ շրթունս իմ՝ զայն ոչ արհամարհեցից ։

Մի անգամ երդուայ ի սրբութիւն իմ, թէ դաւթի ես ոչ սուտեցից ։

Զաւակ նորա յաւիտեան կացցէ, և աթոռ նորա որպէս արեգական առաջի իմ, որպէս լուսին զի հաստատեալ է յաւիտեան վկայ հաւատարիմ յերկինս ։

Իսկ արդ դու մերժեցեր և անարգեցեր, և ընդ վայր հարեր զօծեալ քո ։

Պարձուցեր զուխտ ի ծառայէ քումմէ. պղծեցեր յերկրի զսրբութիւն նորա ։

Քակեցեր զամենայն պարիսպս նորա, և եդիր զամուրս նորա ի դողութիւն ։

Յափշտակեցին զնա անցաւորք ճանապարհին. եղեւ նա նախատ

դրացեաց իւրոց։

Բարձր արարեր զաչ նեղչայ նո-
րա, և ուրախ արարեր զամենայն
թշնամիս նորա։

Դարձուցեր զօգնութիւն ի սրոյ
նորա, և ոչ ընկալար զնա ի պա-
տերազմի։

Սնարդեցեր զերբութիւն նորա,
զաթոռ նորա յերկիր կործանե-
ցեր։

Նուազ աւուրս զաւուրս ժա-
մանակաց նորա, և հեղեր զնո-
ւաճ զամօթ։

Մինչև յե՞րբ դարձուցանես զե-
րեսս քո իապատ. բորբոքեսցի որ-
պէս հուր բարկութիւն քո։

Իսկ արդ յիշեա տես՝ ո՞վ է իմ
հանգիստ. միթէ ի զո՞ւր ինչ ըս-
տեղծեր զամենայն որդիս մարդ-
կան։

Ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ տես

ցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն
իւր ի ձեռաց դժոխոց։

Ո՞ր են ողորմութիւնք քո տէր ա-
ռաջինք, զոր երդուար դաւթի
ճշմարտութեամբ քումբ։

Յիշեա զնախատինս ծառայից քո,
զոր ընկալայ ի ծոց իմ յազգաց
բազմաց։

Զոր նախատեցին թշնամիք քո
տէր, նախատեցին փոխանակ օ-
ծելոյ քո։

Օրհնեալ տէր աստուած յաւի-
տեանս յաւիտենից. եղիցի եղի-
ցի։

Տունք խը։
Կանոնս գոբզայս է։ Սաղմոս ժգ։
Տունք ոխը։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

Գլուխ իգ։

Ի պիշերայ կանխէ հոգի իմ, ա-

ռաւօտ առնել առ քեզ աստուած։

Վ՚ան զի լոյս են հրամանք քո՛ի վերայ երկրի. ուսարուք զարդարութիւն բնակիչք երկրի։

Կարկեցաւ ամպարիշտն, և ոչ եւս ուսցի առնել յերկրի զարդարութիւն ճշմարտութեան։

Բարձցի ամպարիշտն յերկրէ, և մի՛ տեսցէ զփառս աստուծոյ։

Տէր բարձր ես և բազուկ քո հզօր, և նոքա ոչ դիտացին։

Ծանիցեն ամաչեսցեն և նախանձ անկցի անխրատ ժողովրդեան. և արդ սուր զմիշնամիս քո կերիցէ։

Տէր աստուած մեր տուր մեզ զխաղաղութիւն քո, զի ըստ ամենայն գործոց մերոց հատուցաւ մեզ։

Տէր աստուած մեր տացիր ընդ

մեզ, զի բայց ՚ի քէն զայլ ոք ոչ գիտեմք, և զանուն քո յանուանէ նեմք զօրհանապազ։

Իակ արդ մեռեալք կենդանութիւն այլ ոչ տեսանիցեն, և ոչ բժիշկք յարուցանիցեն։

Վ՚ան այնորիկ ածեր հարեր տապակեցեր, ջնջեցեր զամենայն առնու մանուկ նոցա։

Յաւել տէր զչար ՚ի վերայ՝ չարի նոցա, և ած զչար ՚ի վերայ անօրինաց երկրի։

Տէր ՚ի նեղութեան յիշեցաք՝ ըզքեզ, զի փոքր մի նեղութիւն է խրատ քո ՚ի վերայ մեր։

Որպէս երկունք յղւոյ զի հասեալ իցեն ժամանակ ծննդեան, և առ ցաւս իւր ճչիցէ։

Այնպէս եղեալք սիրելւոյ քում, յահ և յերկիւղ քո յղացեալք երկնեցաք, և ծնաք զհոգի փըր-

կուԹեան քո ։

Ոչ ևս կործանեսցուք մեք, այլ կործանեսցին բնակիչք երկրի։ Յարիցեն մեռեալք, կանգնեսցին ամենեքեան որ եղեալ են ի գերեզմանս ։

Յարիցեն ցնծասցեն և ուրախ եղիցին դատաւորեալք երկրի ։ Ա՛ման զի ցօղդ որ ցօղէ ի քէն՝ այդ բժշկուԹիւն է նոցա, բայց երկիրն ամպարշտաց սատակեսցի ։

Խոյս տուր ժողովուրդ իմ, գնա մուտ ի շտեմարանս քո, փակեա զդուրս քո առաջի երեսաց քոց ։ Փախիր և Թաքիր առ ժամանակ մի, մինչև անցցէ բարկուԹիւն տեառն ։

Փառք Հօր և որդւոյ և ։

ՄԱՂԹԱՆՔ

ԽաղաղուԹեանց տուողդ քրիստոս, զքաղաղուԹիւն և զերկնային ողորմուԹիւն քո պարգևեա յարարածս քո ։

Մարդասէր տէր վասն սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի, և վասն խաչի քո պատուականի ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ ։

Ո՛չխարն ա՛ղջիս ի վերջն Հրանեալ կանոնին գիպես ի 50 երեսն ։

Յարեաւ առաւօտ՝ և յրուեցան ժժեռայն թշնամիք նորա։

ՍԱՂՄՈՍ ՁԹ.

Ընդ Ի՞նչս յայն Խորհի։

Ասէր ապաւէն եղեր մեր ազգ մինչև յազգ. մինչչև լեռինք հաստատեալ էին, և մինչչեւ ստեղծեալ զերկիր և զամենայն տիեզերս։

Յաւիտենից մինչև յաւիտեան դու ես, և մի՛ դարձուցաներ ըզմարդ ի տառապանս, և ասացեր՝ դարձարուք առ իս որդիք մարդկան։

Ասզար ամ յաչս տեառն որպէս օր երեկի զի անց, որպէս պահ մի գիշերոյ. և ամք նորա անարգութեամբ եղիցին։

Ընդ առաւօտս որպէս դալարի

բուսցին, ընդ առաւօտս որպէս դալարի զուարճացին և ծաղկեսցին. ընդ երեկոյս լմարշասցին չորասցին և անկցին։

Աղաչեցաք մեք ի բարկութենէ քումմէ, և ի սրտմտութենէ քումմէ խռովեցաք։

Եդիր զմեղս մեր առաջի քո, և զկեանս մեր ի լոյս երեսաց քոց։ Ընդէնայն աւուրք մեր նուաղեցան, և ի բարկութենէ քումմէ խռովեցաք։

Յամենայն ամս մերոց անդադար որպէս սարդի, և թիւ աւուրց ամաց մերոց ի նոսա եօթանասուն ամ։

Եթէ առաւել ևս ութսուն ամ, որ ինչ աւելի քան զայն՝ ցաւօք և հեծութեամբ։

Եկն ի վերայ մեր հեծութիւն և խրատեցաք. իսկ արդ ո՞ գիտացէ զզօրութիւն բարկութեան քո, կամ յահէ քումմէ ըզսրտմտութիւն քո հաւանեսցի։

Այսպէս ցոյց ինձ զաջ քո, և որ խոնարհ են սրտիւք զիմաստութիւնս քո։

Դարձ տէր՝ մինչև յե՞րբ, և թարեա ի ծառայս քո։

Լցաք առաւօտու ողորմութեամբ քո, ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն որ խոնարհ արարին զմեզ, և ամացն յորս տեսաք զչարչարանս։

Յայեաց տէր ի ծառայս քո և ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա որդւոց նոցա. եղիցի լոյս տեառն աստուծոյ ի վերայ մեր։

Օ գործս ձեռաց մերոց ուղիղ ա-

բա՝ ի մեզ տէր, զդործս ձեռաց մերոց աջողեա մեզ։

Տունք ԺԷ։

ՍԱՂՄՈՍ Դ։

Օրհնութիւն գովութեան ի Դաւիթ։

Ո բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ աստուծոյ յերկինս հանգիցէ։

Ասասցէ տեառն՝ ընդունելի իմ ես, ապաւէն իմ աստուած և ես յուսամ ի նա։

Զի փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և ի բանից խռովութեան։

Ի թիկնաւէջս իւր ընկալցի զքեզ, ի հովանի թեւուց նորա յուսասցիս։

Վահան զէնն շուրջ եղիցի զքեզ ճշմարտութիւն նորա։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշե-

րի, և ոչ ի նետէ որ թռչի ի տուէ։

Յիրէ որ շրջի ի խաւարի, ի գործակութենէ դիւի ի հասարակ աւուր։

Ընկղին ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ, որ առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, զհատուցումն մեղաւորաց տեսցես, զի դու տէր յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն։ ոչ հասցեն առ քեզ չարք, տանջանք մի՛ մերձեսցին ի յարկս քո։

Զի հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վասն քո, պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբէք հարցես զգ-

քարի զոտն քո։
Ի վերայ իժից և քարբից գնաս.
ցես դու. առ ոտն կոխեսցես
զառիւծն և զվիշապն։
Քանզի յիս յուսացաւ և փրկե-
ցից զնա, հովանի եղէց նմա, զի
ծանեաւ զանուն իմ։
Կարդասցէ առ իս և ես լուայց
նմա. և առ նմա եղէց ՚ի նեղու-
թեան։
Փրկեցից փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ։

ՍԱՂՄՈՍ ՂԱ.

Սաղմոս օրհնութեան, առաջ ընթերցուց ՚ի Դաւիթ։

Ընդարի է խոստովան լինել տեառն, սաղմոսասել անուան քում բարձրեալ։
Պատմել առաւօտու զողորմու-

թիւնա քո, զհաւատս քո ՚ի գիշերի։
Տանդաղեաւ սաղմոսարանաւ, ՚ի ձայն օրհնութեան գուսլել։
Ուրախ արարեր զիս տէր յարա-
րածս քո, և ՚ի գործս ձեռաց քոց ցնծացայց։
Մրպէսզի մեծ են գործք քո տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո։
Այր անզգամ զայս ոչ ծանիցէ, և անմիտն զայս ոչ առնու ՚ի միտ։
Ի բուսանել մեղաւորաց որպէս խոտ, ՚ի ծաղկել այնոցիկ զոր-
ծեն զանօրէնութիւն։
Սատակեսցին յաւիտեան յաւի-
տենից, և դու բարձրեալ ես յա-
ւիտեան տէր։
Օ՚ի ահա թշնամիք քո տէր, զի ահա թշնամիք քո կորիցեն. ցը-
րուեսցին ամենեքեան որ գոր-
ծեն զանօրէնութիւն։

Բարձր եղիցի որպէս միեղջերուի եղջիւր իմ, և ծերութիւն իմ՝ի ձէթ պարարտութեան։

Նայեաց ակն իմ՝ի թշնամիս իմ, որ յարուցեալ են՝ի վերայ իմ չարութեամբ, ՚ի նոսա լուիցէ ունկն իմ։

Արդարք որպէս զարմաւենիս ծաղկեսցին, որպէս մայրք լիբանանու բազումք եղիցին։

Տնկեալք եղիցին ՚ի տան տեառն, ՚ի գաւիթս աստուծոյ մերոյ ծաղկեսցին։

Նաև և բազումք եղիցին ՚ի ծերութիւն պարարտութեան, գիրգք և փափուկք եղիցին ՚ի պատմել. ուղիղ է տէր աստուած մեր, և ոչ գոյ ՚ի նմա անիրաւութիւն։

ՍԱՂՄՈՍ ՂԲ.

Յօգն առաջին շաբաթու, յոր հայսպաթեցաւ երիւր, օրհնութիւն գովութեան ՚ի Դաւիթ։

Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ։ Հաստատեաց զաշխարհն՝ զի մի՛ սասանեսցի. պատրաստ է աթոռ քո՝ի սկզբանէ յաւիտեանս դու ես։

Ամբարձան գետք տէր, և համբարձին գետք զձայնս իւրեանց, յարիցեն գետք՝ի դնացս իւրեանց։

Ի ձայնէ ջուրց բազմաց սքանչելի եղեն զբօսանք ծովու։

Սքանչելի ես դու տէր՝ի բարձունս. վկայութեանց քոց մեք յոյժ հաւատացաք։

Տան քում վայելէ սրբութիւն

տէր, ընդ երկայն աւուրս։

Տուն ՀԷ։

ՍԱՂՄՈՍ ՂԴ.

Սաղմոս Դաւիթ. երեքսաներորդ։

Աստուած վրէժխնդիր տէր, աստուած վրէժխնդիր յայտնեցար։

Բարձր լեր որ դատիս զերկիր. հատո՛ւցո՛ւ մեծամեծ արտասուանիցս։

Մինչև յե՞րբ մեղաւորք տէր, մինչև յե՞րբ մեղաւորք պարծեսցին։

Բարբառեալ խօսեսցին զանիրաւութիւն. խօսեսցին ամենեքեան որ գործեն զանօրէնութիւն։

Ո՛ժողովուրդ քո տէր խոնարհ արարին, և զժառանգութիւն

քո չարչարեցին։

Ո՛այրին և զպանդուխտն սպանին, զորբան կոտորեցին, և ասացին ոչ տեսանէ զայս տէր, և ոչ ի միտ առնու աստուած յակովբայ։

Իմացարուք անզգամք ժողովրդոց, և անմիտք մինչև յե՞րբ ոչ առնուք ՚ի միտ։

Որպէս զի մէկ որ անկեաց զականկն՝ ինքն ո՞չ լուիցէ, կամ որ ստեղծ զակն՝ ինքն ո՞չ տեսանիցէ։

Ո խրատէն զազգինս, որպէս մէկ ո՞չ յանդիմանեսցէ. ո ուսուցանէ մարդոյ զգիտութիւն. տէր ճանաչէ զիւորհուրդս մարդկան զի են ընդունայն։

Երանի մարդոյ զոր խրատես դու տէր, և յօրինաց քոց ուսուցանես դու նմա։

Ցածուցանես դու նմա զաւուրս

սըն չարու-թեան, մինչև փորե-
ցի խորխորատ մեզաւորի։
Ոչ մեւժէ աէր զժողովուրդ իւր
և զժառանգու-թիւն իւր ոչ առ-
նէ անտես։
Մինչև դարձցին իրաւունք յար-
դարու-թիւն. ընկալցին զնա ա-
մենեքեան որ ուղիղ են սրտիւք։
Ո՞ յարիցէ ընդ իս՝ ի վերայ չա-
րաց. կամ՞ո հաւատարեսցէ ինձ
՝ի վերայ այնոցիկ որ գործեն զա-
նօրէնու-թիւն։
Թէ ոչ տեառն օգնեալ էր ինձ,
փոքր մի և ս բնակեալ էր անձն
իմ՝ի դժոխս։
Եթէ ասէի Թէ սահա սասանե-
ցան ոտք իմ, ողորմու-թիւն քո
տէր օգնէր ինձ։
Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ,
մխիթարու-թիւնք քո ուրախ առ-
ներ զանձն իմ։

Ա՛ի հաւատարեսցէ քեզ աղ-
անօրէնու-թեան, ո՛ պատճառէ
զվաստակս ընդդէմ հրամանի։
Որսացան զանձն արդարոյ, և զա-
րիւն անբիծ պարտաւորս առնէ-
ին։
Եղեւ տէր ապաւէն իմ, աստու-
ած օգնական յուսոյ իմոյ։
Հատուսցէ նոցա տէր ըստ անօ-
րէնու-թեան նոցա, ըստ չարու-
թեան նոցա կործանեսցէ զնոսա
տէր աստուած մեր։

Տաւնք իա։

ՍԱՂՄՈՍ ԴԴ.

Օրհնու-թիւն գովու-թեան ՚ի Դաւիթ։

Ընկայք ցնծասցուք ի տէր, աղա-
ղակեսցուք առ աստուած փրկիչ
մեր։
Կանխեսցուք առաջի նորա խոս-
տովանու-թեամբ, սաղմոսիւք ա-

ղաղաւկեացուք առ նա ։
Աստուած մեծ է տէր , թագա-
ւոր մեծ ՚ի վերայ ամենայն եր-
կրի ։
Ի ձեռս նորա են ամենայն տիե-
զերք երկրի , բարձրութիւնք լե-
րանց նորա են ։
Նորա է ծով և նա արար զնա ,
և զցամաք ձեռք նորա ստեղծին ։
Եկայք երկիրպագցուք նմա , անկ-
ցուք և լացցուք առաջի տեա-
ռըն արարչին մերոյ ։
Նա ինքն է տէր աստուած մեր
մեք ժողովուրդք ձեռին նորա ,
և խաշն արօտի նորա ։
Այսօր եթէ ձայնի նորա լսիցէք ,
մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր
որպէս ՚ի դառնութեան ։
Յաւուրն փորձութեան յանա-
պատի , ուր փորձեցին զիս հարք
քըն ձեր , քննեցին զիս և տեսին

զգործս իմ զքառասուն ամ ։
Ո՛ անացայ ընդ ազգին ընդ այն-
միկ և ասացի՝ միշտ մոլորեալ են
սրտիւք , և նոքա ոչ ծանեան զճ-
ճանապարհս իմ ։
Որպէս երդուայ իբ արկութեան
իմում , թէ մտցեն ՚ի հանգիստ
իմ ։

Տե՛նք ժբ։ Գոլգոթայ լը։

ՍԱՂՄՈՍ ՂԵ ։

Սաղմոս Դ Դաւիթ ։ Ի ձեռնադիր ընծայից փառաբան ։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն
նոր ։ օրհնեցէք զտէր ամենայն
երկիր ։
Օրհնեցէք զտէր , և օրհնեցէք
զանուն նորա ։ աւետարանեցէք
օր ըստ օրէ զփրկութիւն նորա ։
Պատմեցէք ՚ի հեթանոսս զփա-
ռս նորա , յամենայն ժողովուր-
դս զքաջանչելիս նորա ։

Արեւ է տէր և օրհնեալ է յոյժ, ահարկու է նա՛ի վերայ ամենայն կռոց։

Ընծայք կուռքք հեթանոսաց դեւք են, և տէր զերկինս արար։ Խոստովանութիւն և վայելչութիւն է առաջի նորա. սրբութիւն և մեծվայելչութիւն է՛ի սրբութեան նորա։

Ատուցէք տեառն տոհմք ազգաց, մատուցէք տեառն զփառս և զպատիւ, մատուցէք տեառն զփառս անուան նորա։

Ընդէք պատարագս և մտէք՛ի սրբարանս նորա, երկիր պագէք տեառն՛ի պատիլմս սրբութեան նորա, և խռովեսցի յերեսաց նորա ամենայն երկիր։

Ընտացէք՛ի հեթանոսս՝ թէ տէր թագաւորեաց, հաստատեաց զաշխարհ զի մի՛ սասանեսցի, և

դատի զժողովուրդս ուղղութեամբ։

Ուրախ եղիցին երկինք և ցընծասցէ երկիր, զուարճասցի ծով լիս իւրով. ցնծասցեն դաշտք և ամենայն որ է՛ինոսա։

Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք անտառի յերեսաց տեառն զի գայ, և գայ նա՛ի դատել զերկիր։

Դատի զտիեզերս իրաւամբք, և զժողովուրդս ամենայն ճշմարտութեամբ իւրով։

Տունք ժբ։

ՍԱՂՄՈՍ ՂԶ.

Սաղմոս ի Դաւիթ. ի ժամանակի զի երկիրն հաստատեցաւ։

Տէր թագաւորեաց ցնծասցէ երկիր. ուրախ եղիցին կղզիք բազումք։

Ամպ և մէգ շուրջ է զնովաւ. ար-

բաւուն և յարդարութիւնով
ղեալ է ամէն նորա ։
Ո՞ւր առաջի նորա գնասցէ , այ-
րեսցէ շուրջ զմիջնամիս նորա ։
Երևեցան փայլատակունք նորա
տիեզերաց . եռես և սասանեցաւ
երկիր ։
Լերինք որպէս մոմ հալեսցին յե-
րեսաց տեառն , յերեսաց տեա-
ռըն ամենայն երկիր ։
Պատմեսցեն երկինք զարդարու-
թիւն նորա . տեսին ամենայն ժո-
ղովուրդք զփառս նորա ։
Ամաչեսցեն ամենեքեան որք եր-
կիր պագանեն կռոց , և որ պար-
ծին ի դրօշեալս իւրեանց ։
Երկիրպագեն նմա ամենայն հր-
րեշտակք նորա , զի լուաւ և ու-
րախ եղեւ սիովն , և ցնծացեն
դստերք յուդայ վասն իրաւանց
քոց տէր ։

Ո՞ւ դու բարձրեալ ես ի վերայ
ամենայն երկրի , յոյժ բարձրա-
ցար ի վերայ ամենայն կռոց ։
Որ սիրէք զտէր՝ ատեցէք զչա-
րութիւն . պահէ տէր զանձինս
սրբոց իւրոց , ի ձեռաց մեղաւո-
րի փրկեսցէ զնոսա ։
Լոյս ծագեաց արդարոց , ուղղոց
սրտից եղև ուրախութիւն ։
Ուրախ եղերուք արդարք ի տէր ,
խոստովան եղերուք յիշատակի
սրբութեան նորա ։

Տունք ԺԲ ։

ՍԱՂՄՈՍ ՂԴ ։

Սաղմոս ի Դաւիթ . օրհնութիւն ։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն
նոր , զի սքանչելիս արար ։
Փրկեաց զնա աջ իւր , և բազուկ
սուրբ իւր ։
Եցոյց տէր զփրկութիւն իւր , ա-

ռաջի ազգաց, յայտնեաց զարդա-
րութիւն իւր ։

Յիշեաց ողորմութեամբ իւրով
զյակովբ, ճշմարտութեամբ իւ-
րով զառնն իսրայէլի. և տեսին
ամենայն ծագք երկրի զփրկու-
թիւն աստուծոյ մերոյ ։

Աղաղակեցէք առ տէր ամենայն
երկիր, օրհնեցէք ցնծացէք և
սաղմոս ասացէք ։

Սաղմոս ասացէք աստուծոյ մե-
րում օրհնութեամբ, օրհնու-
թեամբ և ի ձայն սաղմոսաց ։

Ի ձայն օրհնութեան կռաճոյ փո-
ղոյ օրհնութեամբ ցնծութեամբ,
և ի ձայն եղջեր փողոյ. և աղա-
ղակեցէք առաջի թագաւորին
տեառն ։

Խռովեսցի ծով լրիւ իւրով, տիե-
զերք և ամենայն բնակիչք նորա,
և գետք ծափս հարցեն ի միա-

մին ձեռամբ ։

Լերինք ցնծասցեն առաջի տե-
ռն զի գայ, և հասեալ է տէր
ի դատել զերկիր ։

Դատի զաշխարհս արդարու-
թեամբ, և զժողովուրդս իւր
ուղղութեամբ ։

Տունք ժ. Գրգոյս ւե ։

ՍԱՂՄՈՍ ԴԸ.

Սաղմոս ի Դաւիթ ։

Տէր թագաւորեաց՝ բարկա-
ցան ժողովուրդք. որ նստիսդ ի
քրովբէս սասանեցաւ երկիր ։
Տէր ի սիովն մեծ է, և բարձր
է ի վերայ ամենայն ժողովրդոց ։
Խոստովան եղիցուք անուան
քում մեծի, զի ահաւոր և սուրբ
է, և պատիւ թագաւորի զիրա-
ւունս սիրէ ։
Դու պատրաստեցեր զուղղու-

թիւն, փրաւունս և զարդարու-
թիւն յակոբայ դու արարեր։
Բարձր արարէք զտէր աստուած
մեր. երկրպագէք պատուա-
դանի ոտից նորա զի սուրբ է։
Մովսէս և ահարովն երիցունք
նորա. սամուէլ ընդ այնոսիկ որ
կարդան զանուն նորա։
Կարդային առ տէր և նա լսէր
նոցա, և ի սիւն ամպոյ խօսէր
ընդ նոսա։
Պահէին զվկայութիւն նորա, և
զհրամանս զոր ետ նոցա։
Տէր աստուած մեր դու լսէիր
նոցա, աստուած դու քաւիչ լի-
նէիր վրէժխնդիր ի վերայ ամե-
նայն գործոց նոցա։
Բարձր արարէք զտէր աստու-
ած մեր. երկրպագէք ի լեառն
սուրբ նորա, զի սուրբ է տէր
աստուած մեր։

ՍԱՂՄՈՍ ՃԹ.

Աղաչս խոստովանութեան ի Դաւիթ։

Աղաղակեցէք առ տէր ամենայն
երկիր, ծառայեցէք տեառն ու-
րախութեամբ։
Մտէք առաջի նորա ցնծութեամբ,
ծաներուք զի նա է տէր աստու-
ած մեր։
Նա արար զմեզ և ոչ մեք էաք,
մեք ժողովուրդք և խաշն արօտի
նորա։
Մտէք ընդ դրունս նորա խոստո-
վանութեամբ, և օրհնութեամբ
ի յարկս նորա։
Խոստովան եղերուք տեառն, և
օրհնեցէք զանուն նորա։
Քանզի է տէր՝ յաւիտեան է ողոր-
մութիւն նորա. ազգէ ազգի հա-
ւատք է ճշմարտութիւն նորա։

ՍԱՂՄՈՍ Ճ.

Աստծոյ է Դաւիթ:

Յողորմութիւն և յիրաւունս երգեցից քեզ, Տէր. սաղմոս ասացից և՛ ի միտս առից:

Անառապարհ անբիծ միտիւք եկեսցէ առ իս, զի գնայի ես յանբիծ ճանապարհի մինչև եկեսցէ առ իս:

Ոչ եդի առաջի աչաց իմոց իրս անիրաւութեան. զգործս առնելին ատելի:

Ոչ մերձեցաւ առ իս որ թիւրն էր սրտիւ, խոստոված չինէի անզգամին և ես ինչ ոչ ճանաչէի:

Որ խոսէր գաղտ զընկերն իւր, զնա բացէ ի բաց հալածէի:

Որ ամբարտաւան էր աչօք և ագահ սրտիւ, ընդ նմա և հացս ոչ ուտէի:

Աչք իմ ի հաւատացեալս երկրի, զի նստցին նոքա ընդ իս:

Որ գնայր ի ճանապարհ անբիծ, նա պաշտէր զիս:

Ոչ բնակէր ի մէջ տան իմոյ՝ որ առնէր զամբարտաւանութիւն, որ խոսէր զանիրաւութիւն՝ չէր աջողեալ նմա առաջի աչաց իմոց:

Ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս երկրի. սատակեցից ի քաղաքի տեառն զամենեսեան որ գործեն զանօրէնութիւն:

Տուն ժ. Դարձյալ իմ:

ՍԱՂՄՈՍ ՂԱ.

Ելոհ. ուրիւ. երեւ յանձրասի՝ առաջի Տեառն սթեխոյե վնդրոտ. ծըս է-ր:

Տէր լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի դարձ

ձուցաներ զերեսս քո յինէն։
Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո զունկն քո առ իս։ յորում աւուր կարդամ առ քեզ, վաղվաղակի լուր ինձ։
Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոխ չորացան։
Հարաւ յիս որպէս խոտ և ցամաքեցաւ սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ՝ ի ձայնէ հեծութեան իմոյ։
Կցեցաւ ոսկր իմ՝ ի մարմին իմ, նըմանեցի ես հաւ աւազանի յանապատի։
Եղէ ես որպէս բու յաւերակի, տքնեցայ և եղէ որպէս ճնճղուկ ղուկ միայն՝ ի տանիս։
Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանուատպատ, և գովիչք իմ ինձ երդնուին։

Օ՝ մոխիր որպէս հաց կերայ, և զըմպելի իմ արտասուօք խառնեցի։
Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։
Աւուրք իմ որպէս հովանի անցցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։
Դու տէր յաւիտեան կաս, և յիշատակ քոյ ազգէ ազգ։
Դու յարուցեալ գթասցիս ի վերայ սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։
Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և՝ ի հող նորա գըթասցին։
Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ, և ամենայն թագաւորք երկրի՝ ի փառաց քոց։
Շինէ տէր զսիոն, և երեւեսցի փառօք իւրով՝ ի նմա։

Հայեցաւ նա յաղօթս խոնար-
հաց, և ոչ արհամարհեաց զխընդ-
րուածս նոցա։

Գրեցի այս յազգ յայլ, ժողո-
վուրդ զոր ստայեալ է՝ օրհնեա-
ցէ զաւեր։

Հայեցաւ նա ի բարձանց ի սրբ-
բութենէ իւրմէ, տէր յերկինից
երկիր հայեցաւ։

Լսել զհեծութիւն կապելոց, և
արձակել զորդիս մահապարտաց։

Պատմել ի սիոն զանուն տեա-
ռըն, և զօրհնութիւնս նորա յե-
րուսաղէմ։

Ի ժողովել ժողովրդոց ի միասին,
և թագաւորաց ծառայել տեա-
ռըն։

Պատասխանի եաւ նմա ի ճանա-
պարհի զօրութեան իւրոյ. ընդ
նուազութիւն աւուրց իմոց ա-
սա ինձ, և մի՛ հաներ զիս ի կէս

աւուրց իմոց զի ազգէ յազգ են
ամք քո։

Ի սկզբանէ տէր զհիմունս երկրի
հաստատեցեր, և գործք ձեռաց
քոց երկինք են։

Նոքա անցանեն, և դու կաս և մը-
նաս յաւիտեան։

Ընդհանեքեան որպէս ձորձա մաշե-
ցին, որպէս վերարկուս փոխես-
ցես զնոսա և փոխեսցին։

Բայց դու նոյն իսկ ես, և ամք քո
ոչ անցանեն. որդիք ծառայից քոց
բնակեսցեն ի նմա, և զաւակի
նորա յաւիտեան ազդեսցի։

Տունք իւր։

ՍԱՂՄՈՍ ՃԲ.

Սաղմոս ի Դաւիթ։

Օրհնեա անձն իմ զտէր, և ա-
մենայն ոսկերք իմ զանուն սուրբ
նորա։

Օրհնեա անձն իմ զտէր, և մի՛ մոռանար զամենայն տուրս նո-
րա։

Ո՛քաւէ զմեղս քո, բժշկէ զամե-
նայն հիւանդութիւնս քո։

Ո՛փրկէ յապականութենէ զկեա-
նս քո, պսակէ զքեզ ողորմու-
թեամբ և գթութեամբ։

Ո՛ընու՛ի բարութեանէ զցանկու-
թիւն քո. նորոգեսցի որպէս ար-
ծուոյ մանկութիւն քո։

Ընէ ողորմութիւնս տէր, և ի-
րաւունս ամենայն զրկելոցդ։

Նկատ տէր զհանապարհս իւր
մովսէսի, և որդւոցն իսրայէլի
զկամս իւր։

Գթած ողորմած է տէր, երկայ-
նամիտ և բազումողորմ։

Ո՛չ խնդառ բարկանայ տէր, և
ոչ յաւիտեան պահէ ոխս։

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ

և ոչ ըստ անօրէնութեան մե-
րոցմ հատոյց մեզ։

Ո՛րպէս բարձր են երկինք
յերկրէ, այնպէս զօրացոյց տէր
զողորմութիւն իւր ի վերայ ե-
կեղեցւոյ իւրոյ։

Որչափ հեռի են արևելք յար-
մտից, այնպէս հեռի արար ի
մէնջ զանօրէնութիւնս մեր։

Որպէս գթայ հայր ի վերայ որդ-
ւոց իւրոց, այնպէս գթացաւ
տէր յերկիւղածս իւր։

Օ՛ի նա գիտաց զստեղծուածս
մեր, և յիշեաց լինել հող եմք։

Ո՛արդոյ որպէս խոտոյ են աւուրք
իւր, որպէս ծաղիկ ի վայրի այն-
պէս ծաղկէ։

Ընդէ՛ի նա հոգմ և ոչ է, և ոչ կա
երեւի տեղի նորա։

Բայց ողորմութիւն տեառն յա-
ւիտենից ի վերայ

Սաղմոս Դաւթի. Ի վերայ աղաւհագործ արարածոյ։

Օրհնեա անձն իմ զտէր, տէր
աստուած իմ մեծ եղեր յոյժ։
Խոստովանութիւն և մեծվայելչ
չուք թիւն զգեցար, արիար զլոյս
որպէս զոմոց, ձգեցեր զերկինս
որպէս խորան, և յարկար ի վե-
րայ ջուց զվերնայարկս նորա։
Ո դնէ յամպս զդնացս իւր, և
շրջի նա ի վերայ թևոց հողմոց։
Ո արարեր զհրեշտակս իւր հոգիս,
և զպաշտօնեայս իւր ի հուր կիզ
ումեայ։
Հաստատեաց զերկիր ի վերայ
ամենայն իւրոյ, ոչ մի
սասանեսցի յաւիտեան։

Խորք որպէս զպեսա վերարկու է
նորա, ի վերայ լերանց կացցեն
ջուք։
Յանդիմանութենէ քումմէ կաց-
ցեն, ի ձայնէ որոտման քո
երկիւղածացին,
Ելանեն լերինք և իջանեն դաշտք
ի տեղի զոր հաստատեցեր նոցա։
Սահման եդեր զոր ոչ անցցեն,
ոչ դարձցին ծածկել զերկիր։
Որ առաքեցեր աղբերս ի ձորս,
ընդ միջոց լերանց անցցեն ջուք։
Արբուսցեն զամենայն գազանս
վայրի, սպասցեն էշք վայրի
ծարաւոյն իւրոյ։
Ի նոսա հանդերձեալ են թռչունք
երկնից, յընդմէջ տերևոց տան-
ցեն ձայնք։
Որ ոռոգանես զլերինս յորոց
վերնայարկաց քոց, յպտղոյ գոր-
ծոց քոց յագեսցի երկիր։
Որ բուսուցանես խոտ անասնոց,
և տունկ ի ծառայութիւն մարդ-
կան, հանել հաց յերկրէ,
Եւ գինի ուրախացուցանէ զսիրտ
մարդկան, իւղով փայլեցուցա-
նել զերեսս նոցա, և հաց զսիրտ
մարդկան հաստատել։
Կշտանան ծառք դաշտի, և մայրի
Լիբանանու զոր տնկեցեր։
Ուր թռչունք զուխտս նորա, կիշեն
զպատուիրանս նորա և առնեն
զնա։
Տէր յերկինս պատրաստեաց զա-
թոռ իւր, արքայութիւն նորա
ամենեցուն տիրէ։
Օրհնեցէք զտէր ամենայն հրեշ-
տակք նորա, հզօրք զօրութեամբ
որ առնէք զբան նորա, լսել ձայ-
նի պատգամաց նորա։
Օրհնեցէք զտէր ամենայն զո-
րութիւնք նորա, պաշտօնեայք
և արարողք կամաց նորա։
Օրհնեցէք զտէր ամենայն գործք
նորա, ընդ ամենայն տեղիս է տէ-
րութիւն նորա, օրհնեա անձն
իմ զտէր։

Տառնք էր, գործեալ էջ։

Ի սաստէ քումմէ փախչիցեն, և ի ձայնէ որոտալոյ քումմէ սարսեսցեն ։

Ելանեն լեռնանան և իջանեն դաշտանան, ի տեղի յոր հաստատեցեր զնոսա ։

Սահման եղիր և ոչ անցցանեն, և ոչ ևս դառնան ի ծածկել զերկիր ։

Ընդաբեցեր զաղբիւրս ընդ ձորձորս, ի մէջ լերանց գնասցեն ջուրք ։

Ընբուշանել զամենայն գազանս վայրի. յատեսցին ցիւրք ի ծարաւս իւրեանց ։

Ընդ թռչունք երկնից բոյնս դիցեն, և ի միջոց վիմաց տացեն ձայնս իւրեանց ։

Ընբուշանէ զլերինս ի ջուրս իւրոց, ի պտղոյ գործոց իւրոց լցցի երկիր ։

Խոտ ծագել գիտես ի լերինս, ընդ պաշարի ի ծառայութիւն մարդկան ։

Հանել գհաց յերկրէ, գինի ուրախ առնել, իւղ զուարճ, և հաց հաստատէ զսիրտ մարդոյ ։

Յագեսցին ծառքն տեառն, և մայրքն լիբանանու զորս դուն անկեցեր ։

Ընդ թռչունք երկնից ձագս հանցեն, և բոյն արագիլ ապատէն է նոցա ։

Լերինք բարձունք են եղջերուաց, և վէմք ապատէն նապատաստկաց ։

Ընարեր զլուսին վասն ժամանակի. արեգակն ծանեաւ զժամմուտս անկեցոյ իւրոյ ։

Ընարեր գիտեաւ՝ և եղև գիշեր. ի նմա գնան ամենայն գազանք անտառի ։

կորիւնք առիւծուց մռնչեն և յափշտակեն, և խնդրեն յաստուծոյ զկերակուրս իւրեանց։
Ի ծագել արեւու ժողովին, և ի մորիս իւրեանց դադարեն։
Ելանէ մարդ ի գործս իւր, և ի վաստակս ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ։
Որպէս զի մեծ են գործք քո տէր. զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, և լցաւ երկիր ստեղծուածոց քոց։
Այս ծով մեծ և անծայրը, ի նմա է սողուն՝ որ ոչ գոյ թիւ, գազանք մեծամեծք և մանուկք. ի նմա և նաւք գնան, վիշապն զոր ստեղծեր խաղալ նովաւ։
Ամենեքեան քեզ սպասեն, և դու տաս կերակուր նոցա ի ժամու։
Տաս դու նոցա և կերակրին, բանայ զձեռն քո՝ կերակրես զամենայն կենդանի հաճոյ քով։
Դարձուցանես զերեսս քո՝ ի նոցանէն՝ և խռովին, հանես զոգի ի նոցանէն՝ պակասին և ի հող դառնան։

Ընդաքես զոգի քո և ստեղծանին, և նորոգես զերեսս երկրի։
Եղիցին փառք տեառն յաւիտեան, տէր ուրախ եղիցի յարարածս իւր։
Ո հայի յերկիր և տայ դողալ զմա, մերձի՝ ի լերինս և ծխեսցին։
Օրհնեցից զտէր ի կեանս իմ, սաղմոս ասացից աստուծոյ իմոյ մինչև եմ ես։
Քաղցր եղիցի նմա օրհնուիլն իմ, և ես ուրախ եղէց ի տէր։
Պակասեսցին մեղաւորք յերկրէ, ամենայն ինչ ի նմա, օրհնեա անձն իմ զտէր։

Ա։

Աստուած եղերութ սեաւն և կարդացէք զանուն նորա, պատմեցէք ի հեթանոսս զգործս նորա ։

Օրհնեցէք և սաղմոս ասացէք նմա. պատմեցէք զամենայն սքանչելիս նորա, և գովեցարուք յանուն սուրբ նորա ։

Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ որ խնդրեն զտէր. խնդրեցէք զտէր և հզօրք եղերուք, խնդրեցէք զերեսս նորա յամենայն ժամ ։

Յիշեցէք զսքանչելիս նորա զոր արար, զարուեստս և զիրաւունս նրա բերանոյ նորա ։

Օ՛աւակն աբրահամեան ծառայք նորա, որդիք յակովբ այրն

յայր ։

Դատաստանք նորա ամենայն երկրի, յիշեցէք զսքանչելիս նորա զոր արար, զերանսն և զդատաստանս բերանոյ նորա ։

Սերունդ ազգի յազգ, ի նմա՝ ձեզ ժառանգութեան ձեռս ։

Ընդ՝ ձեզ ասաց զերկիրն քանանացւոց, զպարան ժառանգութեան ձեր ։

Ո՛վ էին նոքա թուով սակաւ, նուազք և պանդուխտք ի նմա ։

Եւ գնացին ազգէ յազգ, ի թագաւորութենէ՛ ի ժողովուրդ այլ ։

Ոչ եթող զմարդ հասանել զնոսա, և զանձն զոր պատուիրեաց մինչ ի հազար սմ ։

Զոր ետ ընդ աբրահամ, և զերդումն իւր ընդ սահակ ։

Եւ կացոյց զնա ընդ յակովբ ի հաստատութիւն, և ընդ իսրայէլ ուխտ յաւիտենից ։

Եւ ասաց՝ քեզ տաց զերկիրն քանանացւոց, զպարան ժառանգութեան ձերոյ ։

Յորժամ էին նոքա թուով սակաւ, նուազք և պանդուխտք ի նմա ։

Եւ գնացին ազգէ յազգ, ի թագաւորութենէ՛ ի ժողովուրդ այլ ։

Ոչ եմ ոք մարդիկան մեղանչել նո-
ցա, կշտամբեաց զմատաղատուս
վասն նոցա։

Մի՛ մերձենար ասէ յօծեալս իմ,
և՝ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք։
Կոչեաց սուր յերկիր նոցա, զա-
մենայն զօրս լմնուն հատի երեւի։
Ուսաբեաց աստղի նոցա այր,
՚ի ծառայութիւն վհատեցաւ
յոմէնէ։
Խոնարհ արարին՚ի կատարած զա-
տրս նորա, և անց ընդ երկաթս
անձն նորա։
Մինչեւ եկեալ բան նորա, և
բան տեառն փորձեաց զնա։
Ուսաբեաց մատաղատուն և ելոյծ
զնա, իշխան ժողովրդեան եմոռ
զնա։
Կացոյց զնա առ ս տան իւրոյ, իշ-
խան՚ի վերայ ամենայն ստեղծ-
ուածոց իւրոց։

Խրատել զիշխանս նոցա որպէս
զինքն, և զծերս նոցա իմաստու-
նս ապրեցոյց։
Ընդ ստոյգ խորհել յերիվարս, յա-
կոբ պանդխտեցաւ յերկիր քա-
մայ։
Ընձեռեցաւ զժողովուրդ իւր յոյժ,
և զօրացոյց զնոսա քան զթշնա-
միս իւր։
Դարձոյց զսիրտս նոցա ատել զ-
ժողովուրդ իւր, և իննեպել զծա-
ռայս իւր։
Ուսաբեաց զմովսէս ծառայ իւր,
և զահարոնն ընտրեալ իւր։
Եւս նոցա զբան նշանաց իւրոց,
և զարուեստս իւր յերկիր քա-
մայ։
Ուսաբեաց խաւար և խաւարե-
ցոյց զնոսա, զի դառնացուցին
զբան նորա։
Դարձոյց յարիւն զգետս նոցա,

և ապան զամենայն ձկունս նոցա ։
Եւ ապ յերկիր նոցա գորտ, ի ըզ
ոեմարան թագաւորաց նոցա ։
Ապ և եկն չանաճանճ, և մժիկ
ընդ ամենայն սահմանս նոցա ։
Դարձոյց զանձրևս նոցա ի կար-
կուտ, և հուր յերկիր նոցա բոր-
բոքեցաւ ։
Եհար զայգիս և զթզենիս նոցա,
և փշրեաց զամենայն ծառս սահ-
մանաց նոցա ։
Ապ և եկն մօրեխ և խաւնիճ,
զի ոչ գոյր թիւ ։
Եկեր զամենայն խոտ երկրի նո-
ցա, ապաւեաց զամենայն պտուղ
անդաց նոցա ։
Եհար զամենայն անդրանիկս ե-
գիպտացւոց, զսկիզբն ամենայն
վաստակաց նոցա ։
Հան զնոսա ոսկւով և արծաթով,
և ոչ գոյր յազգի նոցա հիւանդ ։

Ուրախ եղեւ եգիպտոս ընդ ե-
լանել նոցա, զի անկաւ ահ ոեւ-
ուբն ի վերայ նոցա ։
Ափոեաց ամպ հովանի առնել
նոցա ի տուէ, և հրով լոյս տալ
նոցա ի գիշերի ։
Խնդրեցին և եկն լորամարդի,
և հացիւ երկնից լցոյց զնոսա ։
Եհար վէմն և բղխեցին ջուրք,
և գնացին գետք ընդ անջրդիս ։
Յիշեաց զբան իւր սուրբ, որ ընդ
աբրահամու ծառայի իւրում ։
Եհան զժողովուրդ իւր ցնծու-
թեամբ, և զընտրեալս իւր ու-
րախութեամբ ։
Եւ նոցա զգաւառս հեթանո-
սաց, ի վաստակս ժողովրդոց ժա-
ռանգեցոյց զնոսա ։
Ո՛վ պահեացեն զվկայութիւնս
նորա, և զօրէնս նորա խնդրե-
ցեն ։

ՍԱՂՄՈՍ ՃԶ.

Ընբ-է։

Խոստովան եղբուք առաւն
պի քաղցր է, պի յաւիտեան է ո-
ղորմութիւն նորա։
Ի խօսեալ զօրութիւնս առա-
ջն, լսել ի արարչէ զամենայն
օրհնութիւնս նորա։
Երանի այք պահեն պիրաւունս,
և առնեն զարդարութիւն յա-
ւիտեան ժամ։
Յիշեա զիս եղ առ ընդ հաճոյս
ժողովրդեան քո, և այց առ մեզ
ի փրկութեան քում։
Տեսցուք մեք զբաղցրութիւն
ընտրելոյ քոյ. ուրախ եղիցուք
յուրախութեան ազգի քո, և գո-
վեսցուք մեք ի ժառանգու-
թեան քում։
Արեալք մեք ընդ հարսն մեր, ա-

նօրինեցաք և յանցեաք։
Հարքն մեր յեգիպտոս ոչ իմա-
ցան զքո անչեփելիս քո, և ոչ յիշե-
ցին զբազում ողորմութիւնս քո։
Բարկացուցին զբեզ յանցանել
ի բեռանց ընդ ծով կարմիր, փրր-
կեաց զնոսա վասն անուան ի-
րոյ ի ծանուցեն զզօրութիւնս
նորա։
Սաստեաց ի ծով կարմիր և ցա-
մաքեցաւ. առաջնորդեաց նոցա
ընդ անդունդս որպէս ընդ անա-
պատ։
Կեցոյց զնոսա ի ձեռաց ատե-
լեաց նոցա, և փրկեաց զնոսա ի
ձեռաց թշնամեաց նոցա։
Ծածկեաց ծով զնեղիչս նոցա, և
ի ինոցանէ ոչ ապրեցաւ։
Հաւատացին ի բան նորա, և
օրհնեցին զօրհնութիւնս նորա։
Ի ադվաղեցին և մոռացան զգոր-

ծըս նորա, և ոչ անասային խորհր-
դոյ նորա ։
Յանկացան գցանկութիւն յա-
նապատի, և փորձեցին զաստու-
ած յանդրդի ։
Եւ նոցա գինդրուած նոցա. ա-
ռաքեաց լիութիւն յանձինս նո-
ցա ։
Նախանձեցին զմովսէս ՚ի բանա-
կի, և զահարոնէն սուրբ առե-
ուրն ։
Բացաւ երկիր և եկուլ զդաթան,
և ծածկեաց զբանական զաբիրո-
նի ։
Հուր վառեցաւ ՚ի ժողովս նոցա,
և բոց մաշեաց զմեղաւորս ։
Արարին որթ ՚ի քորեբ, և երկիր-
պագին ապատկերի, և փոխեցին
զփառս իւրեանց ՚ի նմանութիւն
որթու խոտակերի ։
Մոռացան զաստուած կենարա-

րըն իւրեանց, որ արար զմեծա-
մեծս իւր յեգիպտոս, զսքանչելիս
իւր յերկիր քամայ, և զահ իւր ՚ի
վերայ կարմիր ծովուն ։
Ասաց ասատկել զնոսա, եթէ ոչ
մովսէս ընտրեալ կայր առաջի
նոցա ։
Դարձաւ առ սէր և անցոյց զբ-
արկութիւն նորա, զի մի՛ ա-
տակեսցին նմա ։
Նեղեցին զերկիրն ցանկալի,
և ոչ հաւատացին բանի նորա ։
Տրտնջեցին ՚ի բանակս իւրեանց,
և ոչ լսան ձայնի տեառն ։
Համբարձ զձեռն իւր ՚ի վերայ
նոցա, հարկանել զնոսա յանա-
պատի ։
Յրուեսցի զաւակ նոցա ընդ հե-
թանոսս, ցրուեսցի զաւակ նոցա
ընդ գաւառս ։
Պղծեցան նմա ՚ի բէլփեգովր, կե-

րան զըհեալ և զմեռեալսդի ։
Բարկացուցին զնա ի գործս իւ-
րեանց, յաճախեաց ի վերայ նո-
ցա բեկուածն ։
Ապա եկաց ի մէջ փենեհէս, քա-
ւեաց և արգելաւ մահ. համա-
րեցաւ նմա յարդարութիւն ազ-
գէ յազգ մինչև յաւիտեան ։
Բարկացուցին զնա ի ջուրն հա-
կառակութեան. չարչարեցաւ
Մովսէս վասն նոցա, զի դառնա-
ցուցին զոգի իւր ։
Ջրամայեաց չրթամբք իւրովք,
և ոչ սատակեցին զազգսն զոր
ասաց նոցա տէր ։
Խառնակեցան ընդ հեթանոսս
և ուսան զգործս նոցա. ծառա-
յեցին կուռս նոցա, և եղեւ նոցա
ի դայթակղութիւն ։
Օ՛ոհեցին զուստերս և զդստերս
իւրեանց դիւաց, և հեղին արիւն

անբիծ ։
Սրիւն ուստերաց և դստերաց
իւրեանց, զոր զոհեցին կուռս
քանանու ։
Ջաղաքեցաւ երկիր յարենէ նո-
ցա, և պղծեցաւ ի գործս նո-
ցա, զի պոռնկեցան ի գնացս իւ-
րեանց ։
Բարկացաւ սրտմտութեամբ
տէր ի վերայ ժողովրդեան իւրոյ,
և գարշեցաւ զժառանգութիւն
իւր յոյժ ։
Մատնեաց զնոսա ի ձեռս հե-
թանոսաց, տիրեցին նոցա ատե-
լիք իւրեանց և թշնամիք իւ-
րեանց նեղեցին զնոսա, և խոնարհ
եղեն ի ներքոյ ձեռաց նոցա ։
Բազում անգամ փրկեաց զնոսա
և նոքա դառնացուցին զնա ի
խորհուրդս իւրեանց, և կորա-
ցան յանօրէնութեան իւրեանց ։

Հայեցաւ տէր ի նեղս Թիւնա
նոցա, ի լսել ձայնի աղօթից նո-
ցա։

Յիշեաց զուխտ իւր և զղջացաւ
ըստ բազում ողորմութեան իւ-
րում. եւ զնոսա ի պատուհիւնա
առաջի ամենայն գերչաց նոցա։
Փրկեա զմեզ տէր աստուած մեր,
և ժողովեա զմեզ ի հեթանոսաց։
Խոստովան եղիցուք անուան
քում սրբոյ, և պարծեացուք յօրհ-
նութիւնս քո։

Օրհնեալ տէր աստուած իսրա-
յէլի, յաւիտեանս յաւիտենից։
Եւ ասասցէ ամենայն ժողովուր-
դն, եղիցի եղիցի։

Տունք խ։
Կանոնս գործոյս ե։ Սաղմոս ժէ։
Տունք յծ։

ԱՂՕԹՔ ԵՋԵԿԻԱՑԻ ԱՐՓԱՑԻ ՀՐԵԱՍՏԱՆԻ.
Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՅՈՐՈՒՄ ՀԻՒԱՆԴԱՑԱԻ, ԵՒ
ՑԱՐԵԱՒ Ի ՀԻՒԱՆԴՈՒԹԵՆԷ ԻՒՐՄԷ.

Բայեաց լը.

Ես ասացի ի վերանալ յինէն
աւուրց իմոց, Թէ գնացի ես ի
դրունս գժոխոց։
Թողի զամենայն յետին իմ, և ա-
սացի՝ Թէ այլ ոչ տեսից զփըր-
կութիւն տեառն յերկիր կեն-
դանեաց, և ոչ ես տեսից զմարդ
բնակիչք իւրովք հանդերձ։
Պակասեցայ ես յազգատոհմէ իմ
մէ. այսու հետև Թողի լքի զամե-
նայն զկեանս իմ։
Եւ գնաց մեկնեաց յինէն հոգի
իմ որպէս զայն որ քակէ զտա-
ղաւար, և եղէ ես որպէս զոս-
տայն սատարաց մերձ ի հատա-
նել։

Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յառաւօտէ որպէս ՚ի ձեռս ա-
ռիւծու, այնպէս խորտակեաց մանրեաց զոսկերս իմ, զի յառա-
ւօտէ մինչ ՚ի դիշեր մատնեցայ։
Որպէս ծիծառն այնպէս ձչեցի, որպէս աղաւնի այնպէս մնչեցի, զի նուաղեցան աչք իմ ՚ի տեսա-
նելոյ։
Ւայեցայ ՚ի բարձունս առ տէր աստուած իմ որ փրկեսցէ զիս, փարատեցոյց յինէն զցաւս անձին իմոյ։
Տէր՝ վասն այսորիկ պատմեցաւ քեզ. զարհուրեցեր զանձն իմ, դարձուցեր զհոգի իմ, վխիմա-
րեցայ և. կեցի։
Ահա ՚ի խաղաղութիւն դարձաւ դառնութիւն իմ. փրկեցեր զանձն իմ, զի մի՛ կորեայց, և ընկեցեր յետոյ զամենայն մեղս իմ։

Օ՛ի ոչ թէ որ ՚ի դժոխս են խոստովան առնին առ քեզ, և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ, և ոչ յուսասցին ՚ի ճշմարտութիւնդ քո ամենեքեան որ իջանեն ՚ի դժոխս։
Այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ տէր, որպէս և եսա այսօր։
Հետև մանկունս ծնայց՝ որ պատմեսցեն զարդարութիւնդ քո տէր փրկութեան իմոյ։
Եւ ոչ ևս դադարեցից օրհնել զքեզ յօրհնութիւն նոր զամենայն աւուրս կենաց իմոց՝ յանդիման տաճարիդ աստուծոյ։

Փառք հօր և որդւոյ և։

Ս Ա Ղ Թ Ա Ն Ք

Յոյս կենդանութեան, յոյս և ապաւէն փրկութեան տէր յիսուս փրկիչ, փըր կեա և փարատեցո զցաւս անձին իմոյ։ Մարդասէր տէր վասն սրբոյ հոգոյ անապատ տի մօր քո և կուսի, և վասն խաչի քո պատուականի ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ։

Օգտուքն և շաղթա ի վերջ Սրկինք պատմեն Յովհան Գոշ-ի 107 երեսն։



Եւ ի բռնկեաց և Թռեաւ, ոտեայս նա ի Լեռն Տաղմոց։

ՍԱԴՄՈՍ ՃԺ.

Ընթերս։

Պատասխան եղեր ուրբ տեառն
ի քաղցր է, ի յաւիտեան
է ողորմութիւն նորա։
Ընտրեն փրկեալք տեառն. զո-
րս փրկեաց ի ձեռաց թշնամ-
ւոյն։
Յամենայն պատուոց ժողովեաց
զնոսա, յարեւելից և յարեւմտից,
ի հիւսիսոյ և ի ծովէ։
Մոլորեցան նոքա յանապատի
յանջրդի ճանապարհի, քաղաք
բնակութեան ոչ գտին։
Քաղցեան և ծարաւեցան, և ան-
ձինք նոցա ի նոսին նուաղեցին։

Աղաղակեցին առ տէր ի նեղու-
թեան իւրեանց, ի վշտաց նոցա
փրկեաց զնոսա:
Առաջնորդեաց նոցա ի ճանա-
պարհ ուղիղ, գի երթիցեն ի քա-
ղաք բնակու թեան իւրեանց:
Խոստովան եղիցին տեառն ողոր-
մու թեանց նորա, սքանչելեաց
նորա որդւոց մարդկան:
Զի յագեցոյց զանձինս քաղցեա-
լս, և զանձինս կարօտեալս լի
արար բարու թեամբ:
Ոմք նստէին ի խաւարի և ի ստ-
ուերս մահու, կապեալ էին
յաղքատու թեան որպէս յերկա-
թս:
Զի դառնացուցին զբանն աս-
տուծոյ, և զխորհուրդս բարձ-
րելոյն բարկացուցին:
Խոնարհ եղեն ի ցաւոց սիրտք նո-
ցա, տկարացան և ոչ ոք էր որ

օգնէր նոցա:
Աղաղակեցին առ տէր ի նեղու-
թեան իւրեանց, ի վշտաց նոցա
եհան զնոսա:
Փրկեաց զնոսա ի խաւարէ և ի
ստուերաց մահու, և խզեաց զկ-
ապանս նոցա:
Խոստովան եղիցին տեառն ողոր-
մու թեանց նորա, սքանչելեաց
նորա որդւոց մարդկան:
Զի վշրեաց զդրունս պղնձիս,
և զնիգս երկաթիս խորտակեաց:
Օգնեաց նոցա ի ճանապարհի
անօրէնու թեան իւրեանց, զի
վասն մեղաց իւրեանց խոնարհ
եղեն յոյժ:
Յամենայն կերակրոյ գարշեին
սիրտք նոցա, մերձենային մինչեւ
ի դրունս մահու:
Աղաղակեցին առ տէր ի նեղու-
թեան իւրեանց, ի վշտաց նոցա

ապրեցոյց զնոսա ։

Ընդաբեաց զբան իւր և բժշկեաց զնոսա, և փրկեաց զնոսա յապա-
կանս լինել իւրեանց ։

Խոստովան եղիցին տեառն ողորմութիւնք նորա, սքանչելեաց նորա որդւոց մարդկան ։

Պատուսցեն նմա պատարագ օրհնութեան, և պատմեսցեն զգործս նորա ցնծութեամբ ։

Ոմք իջանեն ի ծովնաւութիւնս, և առնեն զգործս ի ջուրս բազումս ։

Նքա տեսին զգործս տեառն և զքանչելիս նորա ի խորս անդընդոց ։

Ետ՝ և յարեաւ հողմ մրրիկ, և բարձրացան ալիք նորա ։

Ելանեն յերկինս և իջանեն յանդունդս, և անձինք նոցա յանձկնս իւրեանց մաշեցան ։

Խռովեցան սասանեցան որպէս արբեալք, և ամենայն իմաստութիւն նոցա ընկլաւ ։

Ընդակեցին առ տէր ի նեղութիւնս իւրեանց, ի վշտաց նոցա կեցոյց զնոսա ։

Կարգոյց զմրրիկն յօդ՝ և դադարեցին ալիք նորա. ուրախ եղեն զի դադարեցին, և առաջնորդեաց նոցա ի նաւահանգիստ կամաց իւրեանց ։

Խոստովան եղիցին տեառն ողորմութիւնք նորա, սքանչելեաց նորա որդւոց մարդկան ։

Բարձր արասցեն զնա ի ժողովս ժողովրդոց, և յաթոռս ծերոց օրհնեսցեն զնա ։

Ո՛վ դարձոյց զգետս ի ցամաք, և զգնացս ջուց յերկիր ծարաւ ։

Երկիր պերկիրն պտղաբեր յաղ

առաքուս կս , վասն չարուԹեան
բնակչաց նորա ։
Ա՛րար զանապատն ի ճահիճս
ջուրց , և զերկիրն ծարաւուտ ի
գնացս ջուրց ։
Բնակեցոյց ինքա քաղցեալս , և
հիմնեցին քաղաք բնակուԹեան
իւրեանց ։
Ա՛արեցին արտս և տնկեցին այ.
գիս , և արարին պտուղ արմըտ
ուեաց իւրեանց ։
Օրհնեաց զնոսա և բազմացան
յոյժ , և անասուն նոցա ոչնուա.
զեցաւ ։
Նուազեցան նոքա և չարչարե.
ցան , ի նեղուԹենէ չարեաց և
ի վշուաց ։
Եկն անարգուԹիւն ի վերայ իշ
խանաց նոցա . մոլորեցոյց զնոսա
յանապատի և ոչ ի ճանապարհի ։
Օգնեաց տնանկին յաղքատու.

Թեան , աւաչխորհեաց որպէս
խաշին ազգի նոցա ։
Տեսցեն ուղիղք և ուրախ եղի.
ցին , և ամենայն անօրէնն խցցէ
զբերան իւր ։
Ո՞վ է իմաստուն որ պահեսցէ
զայս , և ի միտ առցէ զողորմու.
Թիւնս տեառն ։

Տունք խբ ։

ՍԱՂՄՈՍ ՃԽ ։
Օրհնութիւն . Պաղմոս ի Դաւիթ ։

Պատրաստ է սիրտ իմ աստու.
ած , պատրաստ է սիրտ իմ օրհ.
նել և սաղմոսասել քեզ փառօք
իմովք ։
Ո՛ արի՛ք փառք իմ, զարի՛ք սաղ
մոսիք և օրհնուԹեամբ , և հա
զարԹեացդ աստուծոյ ։
Խոստովանեղէց քեզ ի ժողովուր.
դս սուրբ , և սաղմոս ասացից քեզ
յազինս ։

Արեւ եղև մինչև յերկիրս ոսկե-
մոլիմն քո, մինչև յամպս ձըգ-
մարտոմն քո։
Բարձրեալ ես դու յերկիրս աս-
տուած. յամենայն երկրի են
փառք քո։
Որպէս փրկեցան սիրելիք քո, կե-
ցո աջովդ քովդ և լու՛ր մեզ։
Լուաւ աստ խօսեցաւ ի տրտունջ
նէ իւրմէ. բարձր եղէց բաժա-
նեցայց զմէնքեմ, և զհամիատն
յարիսայ չասիեցիկ։
Իմ է գաղտատ և իմ է մանատէ,
եմիրեմ հոգւոյն զկնայ իմոյ։
Յուզա մաղատ իմ, մոլաթ
աստղան յուտոյ իմոյ։
Յեղամէ ուղեցիկ զինոցս իմ,
և ինձ այլատպէն հնազանդ եղեն։
Ո՛ տարցի զիս ի քաղաք ամուր.
կամ՞ առաջնորդեսցէ ինձ մինչ-
չեւ յեդոմ։

Թէ ոչ դու աստուած, որ մեր-
ժեցեր զմեզ, և ոչ ելեր աստու-
ած ընդ զօրս մեր։
Տուր մեզ օգնութիւն ի նեղու-
թեան, զի սուտ է փրկութիւն
մարդոյ։
Ընտրեալ ազատեսցէ զօրու-
թիւն, և նա յամօթ ազատեալ ըն-
թիցին մեր։

Տունք ԺԵ։

ՍԱՂՄՈՍ ՃԸ։

Ի խոտոթ։ Սաղմոս Դաւթի։

Աստուած օրհնութեան իմոյ
մի՛ լռեր, զի բերան մեղաւորի՝
բերանեղնդատորի բացաւ ՚ի վե-
րայ իմ։
Խօսեցան զինէն լեզուաւ նենդա-
ւորաւ, և բանիւ ատելութեան
պատերեցին զիս։
Ա՛ստուած ընդ իս ՚ի տարտարա-
ւոց, փոխանակ սիրոյ իմոյ մատ-

նէին պիս, այլ ես յաղթիմ կայի։
Ասաւելին ինձ չար փոխանակ
բնդ բարւոյ, ատելութիւն փո-
խանակ սիրոյ իմոյ։
Կացո՛ ի վերայ նորա մեղաւոր,
սատանայ կացցէ ընդ աջմէ նորա։
Ի դատաստանի իւրում ելցէ դա-
տապարտեալ, և աղօթք նորա ի
մեղս դարձցին։
Եղիցին աւուրք նորա նուազ, և
պաշտօնութիւն նորա զայն այլ
տարցին։
Եղիցին որդիք նորա որբ և կին
նորա այրի. սահեսցին փոփոխե-
ցին, որդիք նորա մուրացք եղի-
ցին և ելցեն ի բնակութենէ
իւրեանց։
Քննեսցէ փոխատու զամենայն
ինչս նորա, յափշտակեսցեն օ-
տարք զվաստակս նորա։
Ա՛ի դացի օգնական նմա, և մի՛

ոք ողորմեսցի ի վերայ որբոց նո-
րա։
Եղիցին որդիք նորա ի սատակու-
մըն, յաղգէ ջնջեսցի անուն նորա։
Յիշեսցին մեղք հօր նորա առա-
ջի տեառն, և մեղք մօր նորա չջն-
ջեսցին, և եղիցին առաջի տեա-
ռըն յամենայն ժամ։
Սատակեսցի յերկրէ յիշատակ նո-
րա, փոխանակ զի ոչ յիշեաց առ-
նել ողորմութիւն։
Հալածեաց զայր աղքատ և զտըր-
նանկ, սպանանել զայն որ խո-
նարհ է սրտիւ։
Սիրեաց զանէծս և եկաց նմա. ոչ
կամեցաւ զօրհնութիւն, հեռի
եղիցի ի նմանէ։
Ծածկեաց զանէծս որպէս հան-
դերձ. մտցէ որպէս ջուր ի փոր
նորա, որպէս ձէթ ընդ ոսկերս
նորա։

եղիցի նմա որպէս հանդերձ մի ապականի, որպէս գօտի որ ածի հա
նապազ ընդ մէջ։
Այս գործ է այնոցիկ որ չարաչա
խաս կային զինեն առ աեր, և
զոր խօսէին չար զանձնէ իմէ։
Այլ դուս աեր՝ աէր արա ընդ խա
ղաս անուանքս, զի քաղցր է
ողորմութիւնդ. և փրկեա զիս
զի ազքատ և տնանկ եմ ես։
Արար իմ խոովեցաւ ի վորի ի
մոմ, և ես որպէս սոսեր ի
խոսսափել իմոմ պակասեցայ
և թօմ ասիեցայ որպէս մարախ։
Ծունկք իմ մոկասացան ի պահոց,
և մարմին իմ այլասրուեաց յիւ
ղոյ։
Եղէ ես նախատո նոցա, տեսին
զիս և շարժեցին զգլուխս իւ
րեանց։
Օգնեա ինձ աէր աստուած իմ,

և փրկեա զիս ըստ ողորմութեան
քոմ։
Ծանիցեն զի ձեռն քո այս է, և
դու աէր արարեր զայս։
Նոքա անիծանեն և դու օրհնեա
ցես. որք յարուցեալ են ի վերայ
իմ ամօթ կրեսցեն, այլ ծառայ
քո ուրախ եղիցի իքեղ։
Ծգեցցին զամօթ որ չարախօս
կային զանձնէ իմէ, և արկցին
որպէս կրկնոց զամօթ իւրեանց
զիւրեամբք։
Այլ ես խոստովանեցայ աու աէր
յոյժ բերանով իմով, իմէջ բազ
մաց օրհնեցից զքեզ։
Ծի ետաց նա ընդ աջմէ անանկին,
փրկել զիս յայնցանէ որ հալա
ծեն զանձն իմ։

ՍԱՂՄՈՍ ՃԹ.

Ի խափան. Աղօթս ի Դաւիթ։

Լսեայ առ ձայն իմ, նիւթս ընդ
աղմէ իմմէ, մինչև եդից զՔրիստոս
սիրտ քո պատուանդան ոտից քոց։
Պատուազան զօրութեան առաքեսցէ
ցքեզ առ ի սիոնէ, և տիրեսցես
ցերս դու ի մէջ թշնամեաց քոց։
Ընդ քեզ է ինձ սկիզբն աւուրց
զօրութեան. ի վայելչութիւն
սրբոց քոց յարդանդէ յառաջ
քան զարուսեակ ծնայ զքեզ։
Երդուաւ տէր և ոչ ևս զղջասցի,
Թէ դու ես քահանայ յաւիտեան
ըստ կարգին Մելքիսեդեկի, և
տէր ընդ աջմէ քումմէ։
Խորտակեսցէ յաւուր բարկու-
թեան զթագաւորս, դատի զըզ
հեթանոսս, և բազում առնէ
զհարուածս, և խորտակեսցէ զըզ

գլուխս բազմաց յերկրի։
Օրհնեսցէ ի ճանապարհի արբուսց
ցէ. վասն այսորիկ և բարձր ա-
րասցէ զգլուխս։

Տունք ը. Դաւթայ խը։

ՍԱՂՄՈՍ ՃԺ.

Ընդ-ի։

Խոստովան եղէց քեզ տէր բո-
լորով սրտիւ իմով, ի խորհուրդս
դրս ուղղոց ի ժողովուրդս մեծ
են գործք տեառն, և քննեալ են
յամենայնի կամք նորա։
Խոստովանութիւն և վայելչու-
թիւն են գործք նորա. արդա-
րութիւն նորա մնայ յաւիտեա-
նս յաւիտենից։
Յիշատակ արար սքանչելեացն իւ-
րոց ուղղոց. ողորմած դթած է
տէր. կերակուր տայ երկիւղա-
ծաց իւրոց։

Յիշեաց յաւխտենից զաւխտ խո-
զջօրութիւն դործոց իւրոց պա-
տուխրեաց ժողովրդեան իւ-
րում ։

Տալնոցա ժառանգութիւն հե-
թանոսաց. և գործք ձեռաց նո-
ցա արդարութիւն և իրաւունք
են ։

Հաստատեալ են յաւխտեան յաւխտենից, ա-
րարեալ են ճշմարտութեամբ և
ուղղութեամբ ։

Փրկութիւն առաքեաց առ ժո-
ղովրդեան իւրում. պատուի-
րեաց յաւխտենից զաւխտ իւր,
սուրբ և ահեղ է անուն նորա ։
Սկիզբն գործութեան երկիւղ
տեառն. խելառութիւն բարի
ամենեցունն որ առնեն զնա, և
օրհնութիւն նորա մնայ յաւ-

տեանս յաւխտենից ։

Տունք ը ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ։

Ընդ-ի. ի վերայ ապաշխարութեան, Ընդեայ և Օ յաւարիայ։

Երանելի է այր որ երկնչի ի
տեառնէ, զպատուիրանս նորա
նա կամի յոյժ ։

Հզօր եղիցի հերկրի զաւակ նո-
ցա, և ազգ ուղղաց օրհնեսցի ։
Փառք և մեծութիւն են ի տան
նորա, արդարութիւն նորա մը-
նայ յաւխտեան յաւխտենից ։
Ծագեաց ի խաւարի լոյս ուղղա-
ւղղամաց գթած և արդար է տէր ։
Բաղձալի այր ողորմի և տայ վոխ,
յօրինէ զբան իւր ի դատաստա-
նի, ի յաւխտեան նա մի՛ սասա-
նեսցի ։

Յիշատակ յաւխտենից եղիցի ար-
դար, ի համբաւէ չարէ նա մի՛
երկիցէ ։

Պատրաստ է սիրտ նորա յուսալ առ տէրն։

Հաստատեալ է սիրտ նորա, և նա մի՛ երկիցէ մինչև տեսցէ՛ ի թշնամիս իւր։

Սփռեաց և ետ աղքատաց. արդարութիւն նորա մնայ յաւիտեան յաւիտենից, և եղջիւր նորա բարձր եղիցի փառօք։

Մեղաւորն տեսցէ և բարկասցի, զատամունս իւր կրճտեսցէ և հատցէ, և ցանկութիւն մեղաւորացն կորիցէ։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՃԺԹ.

Ալեփ-ի։

Օրհնեցէք մանկունք զտէր, և օրհնեցէք զանուն տեառն։

Եղիցի անուն տեառն օրհնեալ յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Յարեւելից մինչ ի մուտս արեւու օրհնեալ է անուն տեառն։

Բարձր է ի վերայ ամենայն ազգաց տէր, և յերկինս են փառք նորա։

Ո՞վ է որպէս տէր աստուածն մեր՝ի բարձունս բնակեալ, և զխոնարհս տեսանել յերկինս և յերկիր։

Յարուցանէ զաղքատս յերկրէ, և բարձր առնէ զտառապեալս յաղբեւաց։

Նստուցանել զնոսա իշխանս ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ։

Բնակեցուցանէ զամուրն ի տան ուրախառիթ, որպէս մայր որդւոց բերկրեալ։

Տունք ի։

ՍԱՂՄՈՍ ՃԺԹ.

Ընդ-ե՛։

Ընդ անեղն իսրայէլի յեզիպտոսէ, տանն յակովբայ ի ժողովրդենէ այլազգեաց։

Եղև հրէաստան սրբութիւն նորա, և իսրայէլ իշխանութիւն նորա։

Ծով եռաւ և փախեաւ, և յորդանան անդրէն դարձաւ։

Լերինք ցնծացեք որպէս խոյք, և բլուրք որպէս դառինք մատեաց։

Ո՞վ է քեզ ծով, զի՞ սաստկ և փախեար. կամ դու յորդանան զի՞ դարձար անդրէն։

Լերինք ցնծացեք որպէս խոյք, և բլուրք որպէս դառինք մատեաց։

Յերեսաց տեառն սասանեցաւ երկիր, յերեսաց աստուծոյ յակովբայ։

Որ դարձոյց զվէմն ի վտակս ջրոց, և զապառաժն յաղբերս ջրոց։

Ոչ մեզ տէր ոչ մեզ, այլ անուան քում տուր զփառս, վասն ողորմութեան և ճշմարտութեան քոյ։

Ոչ երբէք ասացեն ի հեթանոսս, թէ ուր է աստուած նոցա։

Աստուած մեր յերկինս և յերկրի, զամենայն զոր ինչ կամեցաւ և արար։

Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են, ձեռագործք են մարդոց մարդկան։

Բերան ունին և ոչ խօսին, աչս ունին և ոչ տեսանեն։

Ականջս ունին և ոչ լսեն, ունչս ունին և ոչ հոտոտին։

Ձեռս ունին և ոչ շօշափեն, ոտս ունին և ոչ գնան. և ոչ գոյ

բարեաւ ի կոխոտուս նոցա։

Ամեն նոցա եղիցին պ. ք. արարին զնոսա, ամենեքեան որ յուսան ցեալ են ի նոսա։

Տուն խարայելի յուսացաւ ի տէր, օգնական ընդունելի է նոցա։

Տուն ահարոնի յուսացաւ ի տէր, օգնական ընկերելի է նոցա։

Երկիւղածք տեառն յուսացան ի տէր, օգնական և փրկիչ է նոցա։

Յիշեաց զմեզ տէր և օրհնեաց զմեզ. օրհնեաց տէր զտուն խարայելի, օրհնեաց տէր զտուն ահարոնի։

Օրհնեաց տէր զերկիւղածս տէր, զփոքրիկսն և զմեծամեծս։

Յաւելցէ ի ձեզ տէր, ի ձեզ և յորդիս ձեր։

Օրհնեալ էք դուք ի տեառնէ, որ արար զերկինս և զերկիր։

Երկինք երկնից տեառն են, և զերկիրս ետ որդւոց մարդկան։

Ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ, և ոչ ամենեքեան որ իջանեն ի դժոխս։

Այլ կեցուք անիքս օրհնեսցուք զտէր, յայսմ հետէ մինչև յաւիտեան։

ՍԱՂՄՈՍ ՃԻԴ.

Ալէլուիա։

Սիրեցի զի լսիցէ տէր զձայն աղաչից իմոց. խոնարհեցոյց զուն կըն իւր ստ իս, և ես զաւուրս իմ կարդասցի առ նա։

Շրջեցան զինև երկունք մահու, և վիշտք դժոխոյ գտին զիս։

Զնեղութիւն և զտխրութիւն գտի, և զանուն տեառն կարդացի։

Ո՛ տէր փրկիեա զանձն իմ. ողորմած աստուած մեր, ողորմի՛ և ապահէ զողացս տէր։

Եա խոնարհ եղէ և տէր կեցոյց զիս. դարձ անձն իմ ի հանգիստ քո, զի տէր օգնեաց ինձ։

Փրկեաց զանձն իմ ի մահու անէ, զաչս իմ յարտասուաց, զոտս իմ ի դայթակղութենէ. հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանոց։

Տունք ՃԻ.

ԱՐԱՔՈՍ ՃԺԹ։

Ընկերս։

Յաւ աստուծի զար և խօսեցայ, և ես խոնարհ եղէ յոյժ։

Եա աստուծի ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ ստուտ է։

Ո՛ւրուք աստուծ տրիստուր տեառն, ընդ ամենայնի զար և եա ինձ։

Ո՛ւրուք ես ընտրեցի։

Տունք ԻԱ։

Ո՛ւրուք ի դաւիթ ի տուն տեառն և ի վէջ զի ամենայն ժողովրդեան նորա։

Ո՛ւրուք իմ տեառն տացէ, տաջի պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ տէր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քոյ։

Տուր վկայութիւն իմ. քեզ մնացուցիչ պատարագ օրհնութեան, և զանուն տեառն կարդացից։

Ո՛ւրուք իմ տեառն տացէ տաջի ամենայն ժողովրդեան նորա, ի գաւիթս ի տուն տեառն և ի վէջ քո ես տուտիմ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԺԴ.

Ընթ-ի։

Օրհնեցէք զտէր ամենայն ազ, զինք. զորէնցէք զինս ամենայն ժո. ղովուրդք։

Օծրաստի ողորմութիւն նորա՝ ի վերայս մեր. ճշմարտութիւն տեառն մնայէ յաւիտեան։

Տե՛ս բ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԺ.

Ընթ-ի։

Յաստղեան երկիրք տեառն զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Յաստղէ առնն խորհրդէ զի բարի, զի յաւիտեան ողորմութիւն նորա։

Յաստղէ առն ահարկուին, զի յաւիտեան ողորմութիւն նորա։

Յաստղեան երկիրք առնուն, զի բարի, զի յաւիտեան ողորմութիւն նորա։

Ի նեղութեան կարդացի առ տէր, և լուաւ ինձ յանդարձ։

Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ։

Տէր է իմ օգնական և ես առեցից ի թշնամիս իմ։

Բարի է յուսալ ի տէր քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի տէր քան յուսալ ի հարս։

Ամենայն ազինք շրջեցան զինեա, և անուամբ տեառն յամբեցի նոցա։

Շրջեալ շրջեցան զինեա, և արա շարեցին զիս ի մեռանին, և անուամբ տեառն վանեցի զնոսա։

Շրջեցան զինեա որպէս մեղր, վառեցան բորբոքեցան որպէս վոյշ ի հուր, և անուամբ տեառն

ուքն մերժելի գնասա։

ի մերժելն պրպտելոյ և եղէ մերձ ՚ի գտանել, և ասէր ընկալաւ գիս։

Օրհնութիւն իմ և օդնութիւն իմ ասէր, և եղև ինձ ՚ի փրկութիւն։

Զայն ցնծութեան փրկութեան ի յարկս արդարոց։

Ընչ առաւն արար զօրութիւն, աջ առաւն բարձր արար զիս, և աջ առաւն արար զօրութիւն։

Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից զգործս առաւն։

Խրատեալ խրատեաց զիս տէր, և ի մահ ոչ մատնեաց։

Բացէք ինձ դրունս արդարութեան, զի մտից ընդ այն և խոստովան եղէց առաւն։

Այս դուռն առաւն է, և արդարք մտանեն ընդ սա։

Խոստովան եղէց քեզ տէր զի լուար ինձ, և եղեր ինձ ՚ի փրկութիւն։

Վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան։

Յառաւնէ եղև այս, և է սքանչելի առաջի աչաց մերոց։

Այսօր է զոր արար տէր, եկայք ցնծացուք և ուրախ եղիցուք ՚ի նմա։

Ո՛տեր փրկեա, ո՛ տեր առաջնորդեա. օրհնեալ որ գալոցդ ես յանուն տեառն, և օրհնեցաք ընդ քեզ ՚ի տանէ տեառն։

Տէր աստուած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան, կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ։

Աստուած իմ ես դու խոստովանեղէց քեզ, աստուած իմ ես դու և բարձր արարից զքեզ։

խոստովան եղէց քեզ տէր ամ լսա-
ար ինձ, և եղէր ինձ ի փրկու-
թիւն։

Խոստովան եղէրուք տեառն զի
բարի է, զի յաւիտեան է ողոր-
մութիւն նորա։

Տունք իւր Գրիգոր Խ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ։

Ընդ-ի։

Բռանեալ են անօրինք ի ճանա-
պարհի. և այք գնան յօրէնս տե-
ղին։

Երանի այք քննեն զվկայու-
թիւն նորա, բովորով սրտիւ խն-
դրեսցեն զնա։

Ոչ իմն այք գործեն զանօրէնու-
թիւն, ի ճանապարհս նորա գը-
նացին։

Դու պատուիրեցեր զպատուի-
րանս քո ի պահել յոյժ։

Օ՛չ թէ յուղղեսցին էին ճանա-
պարհք իմ, ի պահել զարդա-
րութիւնս քո։

Յայնժամ ես ոչ ամաչէի, ի գը-
նալ ինձ ի պատուիրանս քո։

Խոստովան եղէց քեզ սէր յու-
ղղութեան սրտի իմոյ, որպէս ու-
սայց զիրաւունս արդարութեան
քո։

Զ՝արդարութիւնս քո պահեցից, մի՛ թո-
ղուր զիս մինչ իսպառ։

Ի՞նչ ուղիացէ երիտասարդ զճա-
նապարհս իւր, այլ՝ի պահել զբա-
նս քո։

Բովորով սրտիւ խնդրեցի զքեզ, մի՛ մերժեր զիս ՚ի պատ-
ուիրանացդ քոց։

Ի սրտի իմում թագուցի զբանս
քո, որպէս զի մի՛ մեղայց քեզ։

Օրհնեալ ես դու տէր, ուս-
ցիր զարդարութիւնս քո։

Ե ըմբռնեմք իսկ զպատճէնիդ զանձինդ իսուս երանելոյ ։

Ի ձանապարհս վկայութեանդ քոյ զուարճացայ, որպէս յամենայն հնայն ՚ի մեծութեան ։

Ի պատուիրանս քո հոգայցայ, և զգուշացայ ի ձանապարհս քո ։

Օ՛ իսուս քո խօսեցայ, և ոչ մոռացայ զբանս քո ։
